



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԶԵԿՈՒՅՑԸ “ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ”
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ 2010-2011թթ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ՍՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

II ՀԱՏՈՐ

ԵՐԵՎԱՆ
2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարության
Քրեակատարողական Համակարգը 2011 Թվականին.....3
2. Արդար Դատավարության և
Արդյունավետ Պաշտպանական Միջոցների Իրավունքը.....36
3. «ՆԿ Յուկոս օյլ» ԲԲԸ-ին Պատկանող
«Յուկոս ՄՆԳ Ինվեսթմենթ» ՍՊԸ Գործը.....82
4. Հայաստանի Մասնակցությամբ Մարդու Իրավունքների Եվրոպական
Դատարանի Վճիռները և Դրանց Կատարումը Հայաստանի Կողմից.....100



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
2011 ԹՎԱԿԱՆԻՆ**



ՀՀ Քրեակատարողական հիմնարկները հիմնվում են ՀՀ Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի, ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի, ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշման վրա:

Մոնիտորինգի այս փուլը Հելսինկյան Ասոցիացիան իրականացնել է ոչ ստանդարտ ձևով՝ հարցազրույց վերցնելով նախկին դատապարտյալներից, որոնք ազատվել են մոտ ժամանակահատվածում և ցանկացել են համագործակցել և նշել իրենց անունները: Մոնիտորինգն իրականացնելու ձևը փոխվել է Արդարադատության նախարարության կողմից ՔԿՀ-ներ մուտք գործելու վրա սահմանված արգելքի հետևանքով:

28.02.2011-19.10.2011թթ.-ն ընկած ժամանակահատվածի Հելսինկյան ասոցիացիա - Արդարադատության նախարարություն - ՔԿ վարչություն նամակագրությանը կարող էք ծանոթանալ՝ հետելով հղմանը¹:

Արդարադատության նախարարության և ՔԿ վարչության կողմից պարբերաբար խախտվում է ՀՀ վարչարարության մասին օրենքի 46-րդ հոդվածը, որը հստակ նշում է, որ նամակներին պետք է պատասխանել հնգօրյա ժամկետում(առավելագույնը 30, ինչի մասին պետք է լինի զգուշացում):

Արդարադատության նախարարության և Քրեակատարողական վարչության դիրքորոշումը շատ դեպքերում արտահայտվում է հետևյալում. ՀՀ-ում գործում է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող խումբ և նրանց կողմից այդ գործառույթն արդեն իրականացվում է:

¹ <http://hahr.am/index.php/en/library/letters-and-statements/447-lettersjustice>



Շուրջ 40 օրից ավել հացադուլի մեջ, բերանը կարած և 3 մեխ կուլ տված վիճակում Նուբարաշեն ՔԿՀ-ի բուժմասում է գտնվել Հրաչյա Գևորգյանը, որին այդպես էլ խուսրը չի այցելել և չի փորձել պարզել, թե ինչի հետևանքով է նա կատարել այդ արարքը:

Դեկտեմբերի 15-ին մեզ դիմեց Նուբարաշեն ՔԿՀ-ում հացադուլի մեջ գտնվող Դրիգո Հարությունի հայրը և նշեց, որ իր տղան շուրջ 9 օր է գտնվում է հացադուլի մեջ, խնդրում է, որ իրեն այցելեն իրավապաշտպանները, և այդպես էլ ոչ մի մարդ իր տղայի մոտ չի գնացել:

Նոյեմբերի 21-ին որովայնի շրջանում վիրահատություն տարած Խաչատուր Հովսեփյանին, վիրակապերը դեռ չհանված, երեկոյան աշխատանքային օրվանից հետո ուղեկցող գունդը փորձում էր տեղափոխել Եղվարդի ՁՊՎ, որպեսզի հաջորդ օրը նա մասնակցի դատական նիստի: Հարկ է նշել, որ վերջինս տառապում է նաև հոգեկան հիվանդությամբ, և բուժման մեջ գտնվող մարդը ՁՊՎ-ի ցուրտ և համապատասխան բուժաշխատողներից զուրկ վայրում չէր կարող գտնվել: Այդ կապակցությամբ Հելսինկյան ասոցիացիան դիմեց դիտորդական խմբին, սակայն ստացավ պատասխան, որ խոշտանգման փաստ չի արձանագրվել, և նրանք այս առումով որևէ գործառույթ չունեն և չեն կարող օգնել այդ հարցում: Կապ հաստատեցինք ՄԻՊ արագ արձագանքման խմբի հետ, որն իր հերթին կապ հաստատելով Նուբարաշեն ՔԿՀ-ի ղեկավարության հետ, հարթեց այդ հարցը:

Օգտվելով այդ բնագավառում երկարատև փորձ ունեցող և մոնիտորինգի մեխանիզմներ մշակող կազմակերպությունների աշխատություններից՝ Հելսինկյան ասոցիացիան ստեղծեց կարճ, համառոտ հարցաշար: Հարցաշարում ընդգրկվել են այն հիմնահարցերը, որոնք կարևորագույն խնդիր են հանդիսանում կալանավորված կամ դատապարտված անձանց համար և հնարավորություն են տալիս դիմել Մարդու Իրավունքների



Եվրոպական Դատարան: Այս խնդիրները պատճառ են հանդիսացել, որպեսզի այլ երկրներում կալանավորներն ու դատապարտյալները դիմեն Եվրոպական դատարան: Այս գործերը կարող են նախադեպ հանդիսանալ Հայաստանի Հանրապետությունում կալանավորված և դատապարտված անձանց համար:

ՔԿՀ-ների համար առաջնային խնդիրը, որն այսօր կանգնած է ամբողջ համակարգի և դատապարտվածների առջև, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատ արձակվելու, պատժի չկրած մասնավելի մեղմ պատժաչափով փոխարինելու հարցերով զբաղվող անկախ հանձնաժողովի աշխատանքն է: Մամուլում պարբերաբար հրապարակվում են բաց նամակներ, որոնցում դատապարտյալները բարձրաձայնում են այս խնդրի մասին:²

Մամուլում նաև բազմիցս հրապարակումներ եղան³ այն իրավիճակի մասին, որը տիրում էր ՀՀ նախագահի կողմից մայիսի 20-ին ՀՀ ԱԺ ներկայացրած համաներման օրինագծից հետո: ՔԿՀ-ների որոշ աշխատակիցներ սկսեցին այդ գործըթացի վրա գումար վաստակել, մասնավորապես, սոցիալ-հոգեբանական ծառայությունը, դատապարտված անձանցից դրական բնութագիր ներկայացնելու համար կորզելով 150-200\$, անվտանգության ծառայությունը, տույժեր չտալու, իսկ եղած տույժերն էլ մարելու համար 300\$ և 500\$ էլ պետերի տեղակալները՝ գործը դրականորեն ավարտին հասցնելու համար:

² http://www.1in.am/arm/armenia_right_17553.html
<http://www.alplus.am/am/politics/2011/06/7/open-letter>
<http://hahr.am/index.php/en/library/letters-and-statements/448-namakvagh>
 (նամակները տրամադրեց epress.am լրատվական կայքը)

³ http://www.1in.am/arm/a_a_20481.html



Ընդհանուր տեղեկություններ

Հարցվող դատապարտյալների շարքում կային նաև նախկին քաղաքականության կրոնական փոքրամասնության ներկայացուցիչներ⁴:

Հարցվողները ՀՀ Նուբարաշեն, Աբովյան, Վարդաշեն, Կոշ, Երևան-Կենտրոն, Էրեբունի, Վանաձոր և Դատապարտյալների հիվանդանոց քրեակատարողական հիմնարկներում նախկինում կալանավորված և դատապարտված անձինք են:

Անուններով հանդես եկած հարցվողներն են.

Անտոնյան Ռիմա, Գրիգորյան Գոհարիկ, Ցախկլորյան Ջեմմա, Ներկարարյան Էդիտա, Մովսիսյան Ռուզաննա, Կալեսնիկովա Նազիկ, Հացպանյան Սարգիս, Փաշինյան Նիկոլ, Ուռույթյան Հարություն, Գևորգյան Սարգիս, Բաղդասարյան Հուսիկ, Քիրամիջյան Դավիթ, Բոջոլյան Մուրադ, Զաքարյան Աշոտ, Վարդգես Գասպարի, Հարությունյան Հովհաննես, Հովհաննիսյան Արմեն, Ավագյան Հայկ, Ապրեսյան Արամ, Գրիգորյան Իշխան, Սարգսյան Գևորգ, Գրիգորյան Վահրամ, Գևորգյան Արեգ, Մանուկյան Աշոտ, Մատինյան Կարլեն:

Գիշերային հանգստի համար նախատեսված պայմանները

Նուբարաշեն ՔԿՀ-ում են գտնվել 25 հարցվողներից 12-ը: Առանձին քնելու վայր Նուբարաշեն ՔԿՀ-ում չեն ունեցել հարցվողների մոտ 20%-ը տարբեր ժամանակահատվածներում(կարանտինային և(կամ) հիմնական խցերում գտնվելու ընթացքում): Ըստ հարցվողների՝ այդ խնդիրը կա գրեթե բոլոր խցերում: Կա հարցվող, որ պատժաչափը կրելու ամբողջ ընթացքում քնել է հերթափոխով: Կան խցեր, որտեղ կալանավորված անձինք և դատապարտյալները քնում են 3 հերթափոխով: Հարցվողներից 2-ը՝ Հայկ Ավագյանը և Իշխան Գևորգյանը, ովքեր հանդիսանում են Եհովայի վկաներ կրոնական կազմակերպության ներկայացուցիչներ, քնելու հետ կապված

⁴ Բոլոր հարցվողներից հարցազրույցը վերցվել է իրենց իմացությամբ և համաձայնությամբ, հարցվողները տեղեկացվել են այն մասին, որ իրենց անունները կարող են տեղ գտնել կազմակերպության տարեկան զեկույցում, որոշ հարցազրույցներ նույնիսկ ձայնագրվել են



խնդիրներ են ունեցել ոչ միայն Նուբարաշեն ՔԿՀ-ում, այլև նախնական շրջանում Էրեբունի և Կոշ ՔԿՀ-ներում: Այսպիսով, հիմնական ծանրաբեռնվածությունն իր վրա կրող Նուբարաշեն ՔԿՀ-ն չի կարողանում առանձին քնելու վայր հատկացնել իր մոտ պահվող կալանավորների և դատապարտյալների համար: Հարցվողները նշեցին, որ խցերում, որոնք նախատեսված են 8 անձի համար, տեղադրված է 12 մահճակալ, սակայն միննույն է այդ քանակը չի բավարարում տարբեր խցերում գտնվող թվով մինչև 20 և ավելի անձի համար: Կարանտինային խցերում, որտեղ կալանավորված անձը պահվում է երբեմն մինչև 10 օր, հիմնարկի կողմից չեն տրամադրվում անկողնային պարագաներ և կալանավորված անձն առաջին օրերից գտնվելով կալանքի տակ, ստիպված է գիշերել կեղտոտված և հնամաշ բամբակյա դոշակի վրա: Հատկապես ծանր է նրանց վիճակը ձմեռային ամիսներին, երբ կալանավորված անձը գիշերում է հագուստով: Ըստ հարցվող Արեգ Գևորգյանի՝ կարանտինային խցում ձմռան ամիսներին պատուհանը նույնիսկ ապակեպատ չէր և ցրտից պաշտպանվելու համար ճաղավանդակը պատում էին ծածկոցներով: Հարցվողների մեծ մասը, գտնվելով Նուբարաշեն ՔԿՀ-ի կարանտինային խցերում նշում է այնտեղ տիրող անմխիթար սանիտարահիգիենիկ վիճակի մասին, որտեղ մարդը գտնվելով, նույնիսկ ցանկություն է հայտնում ինքնասպան լինելու: Հարցվողներից 2-ը նշեցին, որ ջրահեռացման համակարգի խափանման պատճառով, կոյուղաջրերը լցվել են խուց և իրենք խնդրել են, որպեսզի իրենց տեղափոխեն այլ խուց, թեկուզ այնտեղ գերծանրաբեռնվածություն էր: Ինչ վերաբերվում է սովորական խցերին, ապա ցանկացած նոր կալանավոր, եթե չբողոքի և չպահանջի անկողնային պարագաներ, ՔԿՀ-ի կողմից դրանք չեն տրամադրվում: Ողջ անկողնային պարագաները գտնվում են հնամաշ, գրեթե քայքայված վիճակում, բամբակյա դոշակները չեն ենթարկվել ախտահանման տարիների շարունակ և կալանավորված անձինք հենց առաջին օրվանից փորձում են կապ հաստատել հարազատների հետ, խնդրել անկողնային, տարրական հիգիենայի պարագաներ, սնունդ և այլն:



Հերթափոխով քնող անձինք, հատկապես ում հերթն ընկնում է ցերեկային ժամերին, ստիպված փորձում են քնել աղմուկի, հեռուստացույցի և բնական լույսի առկայության պայմաններում: Ըստ ներքին կանոնակարգի՝ անկողնային պարագաները պետք է փոխվեն ամիսը մեկ անգամ, սակայն ինչպես պարզ դարձավ հարցվողները բոլորն էլ խուսափել են այդ հարցով դիմելու ադմինիստրացիային, համոզվելով, որ այդ պարագաները կամ չեն տրամադրվում, կամ, եթե տրամադրվում են, գրեթե պիտանի չեն օգտագործման:

Ինչ վերաբերվում է այն անձանց, որոնք գտնվել են այլ ՔԿՀ-ներում, ապա գրեթե բոլորն էլ նշում են, որ անկողնային պարագաները տրամադրվում են նոր ՔԿՀ մտնողներին, որից հետո արդեն փոխնորդի հարցը լուծվում է կալանավորվածների և դատապարտյալների հարազատների կողմից և իրականացվում է հանձնուքի միջոցով անկողնային պարագաները փոխանցելու ձևով: Հարցվողները նաև նշում են, որ անկողնային պարագաները մաշված են, իսկ դռակները երևի չեն փոխվել հիմնարկների բացման օրվանից:

Խախտումներ. ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 73-րդ, 75-րդ հոդվածները, որոնք վերաբերում են ազատագրկման դատապարտված անձի բնակելի տարածքին և անկողնային պարագաներին: Ուղղիչ հիմնարկում դատապարտյալին հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ չափանիշներին, ինչպես նաև ապահովի նրա առողջության պահպանումը: Ուղղիչ հիմնարկում մեկ դատապարտյալին հատկացվող բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից:

“Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականի տեղաբաշխման և տեղավորման ու հագուստ և անկողնային պարագաներ բաժինների 18.1-րդ, 18.2-րդ կետի գ. ենթակետի, 18.3-րդ, 18.4-րդ 21-րդ



կետերը, համաձայն որոնց՝ քնելու բոլոր պայմաններն ու պարագաները պետք է ապահովեն հարգանք մարդու արժանապատվության և անձնական կյանքի գաղտնիության նկատմամբ, ինչպես նաև համապատասխանեն առողջության և հիգիենայի պահանջներին: Յուրաքանչյուր բանտարկյալի պետք է տրամադրվի առանձին մահճակալ և առանձին համարժեք անկողնային պարագաներ, որոնք պետք է պահվեն լավ վիճակում և մաքրություն ապահովելու համար բավականաչափ հաճախ փոխվեն:

Դիտե՛ք Եվրոպական դատարանի “Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության”, “Տրեպաշկինն ընդդեմ Ռուսաստանի դաշնության” գործերը:

Լուսավորությունը և մաքուր օդի առկայությունը

Այն ՔԿՀ-ները, որտեղ կալանավորված և դատապարտված անձինք պահվում են խցային պայմաններում, ունեն լուրջ խնդիր օդափոխանակության հետ: Այդ խնդիրը լրջանում է ամռան ամիսներին և հատկապես գերծանրաբեռնվածության պայմաններում: ՔԿՀ-ների ադմինիստրացիան թույլ է տալիս կալանավորվածներին և դատապարտյալներին օդափոխիչներ ստանալ հարազատների կողմից, ինչը քիչ թե շատ լուծում է տալիս այս խնդրին: Արթիկ ՔԿՀ-ում խցերը, որոնք չափերով փոքր էին, քան Նուբարաշենի գերծանրաբեռնված խցերը, պահվում են թվով ավելի քիչ կալանավորներ, և օդափոխանակության խնդիրը լուծվում էր միայն պատուհանը բաց պահելու միջոցով: Օդափոխանակության հետ կապված բավականին լուրջ խնդիր էր առաջանում Նուբարաշեն և Վանաձոր ՔԿՀ-ներում գտնվող 7 անձանց մոտ, որոնցից 5-ը հանդիսանում են Եհովայի վկաներ կրոնական կազմակերպության ներկայացուցիչներ, իսկ 2-ը քաղաքական հայացքների համար դատապարտված անձինք. նրանք չէին ծխում, սակայն պահվում էին խցում, որտեղ խցակիցների մեծ մասը ծխում էր: Ինչ վերաբերվում է այն ՔԿՀ-ներին, որոնք ունեն բարակային տիպի խցեր, ապա քանի որ այնտեղ օրվա մեծ մասը դատապարտյալ չի լինում, օդափոխանակության խնդիրը



լուծվում է բնական ճանապարհով՝ պատուհանների միջոցով: Արհեստական օդափոխության համակարգ չկա ՔԿՀ-ներից ոչ մեկում:

ՀՀ ՔԿՀ-ներում, հատկապես Նուբարաշեն և Էրեբունի ՔԿՀ-ներում, կարանտինային խցերի, սովորական խցերի և Էրեբունի ՔԿՀ-ի բարակային տիպի կացարանների գրեթե մեծ մասն իրենց հնության պատճառով գտնվում են կիսաքանդ և բազմակի անգամ վերանորոգված վիճակում. այդ իսկ պատճառով ապակիների ամբողջականությունը պահպանված չէ: Շատ դեպքերում կոտրված ապակիները փոխարինվում են պոլիէթիլենով, որոնք խոչընդոտում են բնական լուսավորությանը: Ինչ վերաբերվում է արհեստական լուսավորվածությանը, ապա երեկոյան ժամերին այն բավականին թույլ է, քանի որ խցերում վառվում է մեկական լամպ՝ թույլ հզորությամբ, իսկ բարակային տիպի կացարաններում այդ լամպերի քանակը հասնում է մի քանիսի, սակայն կացարանի մեծ չափերի պատճառով այդ լուսավորությունը ևս չի բավականացնում: Նուբարաշեն ՔԿՀ-ում գերծանրաբեռնվածության պատճառով մոտ 3 հերթափոխի հասնող քնելու պայմաններում 24 ժամ լուսավորության խնդիրը շատ ծանր է անդրադառնում կալանավորված և դատապարտված անձանց առողջական վիճակի վրա:

Խախտումներ. ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 34-րդ որոշումը, ըստ որի՝ կալանավորված անձի կամ դատապարտյալի անձնական հիգիենայի պահպանման առաջնահերթ պայման է հանդիսանում կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի տարածքի, շենքերի և շինությունների, կալանավորված անձանց կամ դատապարտյալների խցերի կամ կացարանների, կենցաղային իրերի ու պարագաների ամենօրյա մաքրության ապահովումը:



“Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականի տեղաբաշխման և տեղավորման բաժնի 18.2-րդ կետի ա. և բ. ենթակետերը և 18.3-րդ կետը, որոնց համաձայն՝ բոլոր այն շենքերում, որոնցում բանտարկյալները պետք է ապրեն, աշխատեն կամ հավաքվեն, պատուհանները պետք է բավականաչափ մեծ լինեն, որպեսզի բանտարկյալներին հնարավորություն ընձեռեն սովորական պայմանների դեպքում ընթերցել կամ աշխատել բնական լույսի տակ, ինչպես նաև՝ լինի թարմ օդի մուտքի հնարավորություն, բացառությամբ այն դեպքի, երբ առկա է օդալաորակավորման համարժեք համակարգ։ Արհեստական լուսավորությունը պետք է համապատասխանի սահմանված տեխնիկական ստանդարտներին։

ՄԻԵԴ-ն իր կայացրած որոշումներից մեկի մեջ նշում է, որ եթե խցում կա պատուհան, որն ապակեպատ չէ, դրա փոխարեն տարածքը ծածկված է ձեռքի տակ եղած միջոցներով, ինչը սահմանափակում է մաքուր օդի և լուսավորության մուտքը, դա ինքնին չի բերում մարդու իրավունքների խախտման ճանաչմանը, սակայն խցում ծանրաբեռնվածության և ծխող դատապարտյալների առկայության հետ միասին ստեղծում է պայմաններ, որոնք կարող են խախտում ճանաչվել։

Դիտել՝ “Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության”,
 “Տրեպաշկինն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության” գործերը։

Խցերի(շինությունների) հագեցվածությունը։ Անձնական իրեր

Հարցված բոլոր անձինք նշեցին, որ կահույք հասկացողությունը ՔԿՀ-ներում գրեթե գոյություն չունի։ 13 հարցվող նշեցին, որ Նուբարաշեն ՔԿՀ-ում, բացի հնամաշ, երկաթյա, անմխիթար վիճակում գտնվող երկհարկանի մահճակալներից, ամբողջ խցի երկարությամբ երկար սեղանից և 2 երկարաթոռներից գրեթե ոչինչ չկա։ Պատին ամրացված է երկաթյա փոքրիկ բաց պահարան, որտեղ կան բաժիններ և այնտեղ կարող է պահվել մեկ ափսե, բաժակ և գդալ։ Մյուս իրերը, նաև հիգիենայի պարագաները

կալանավորվածները պահում են պարկերի և պայուսակների մեջ, մահճակալների տակ, քանի որ չկան կողապահարաններ: Բոլոր տեխնիկական սարքավորումները՝ հեռուստացույց, սառնարան, DVD նվագարկիչ, օդափոխիչ, բերվում են կալանավորված անձանց հարազատների կողմից և ազատվելուց հետո ետ չեն վերադարձվում: Հարցվողները նշեցին, որ իրենք են վերանորոգել իրենց կացարանը, հարմարեցրել այն բնակվելու համար, ամբողջովին այն կահավորել և որոշակի պարզավճարի(ծխախոտ, սուրճ, թեյ և այլն) դիմաց այլ դատապարտյալներից, որոնք այդ կահույքը պատրաստելու շնորք ունեին, ձեռք էին բերել կողապահարաններ: Այն ՔԿՀ-ները, որտեղ կալանավորները և դատապարտյալները պահվում են խցերում, կա սանհանգույց՝ իր ասիական տիպի գուգարանով և լվացարանով: Այստեղ շատ դեպքերում ջուր տաքացնելու միջոցով կալանավորներն ու դատապարտյալները նաև լոգանք են ընդունում: Իսկ բարակային տիպի կացարաններում սանհանգույց և լվացարան չկա: Այն գտնվում է առանձին վայրում, որը տեղակայված է բավականին հեռու. սա իր հերթին դժվարություններ է առաջացնում հատկապես տարվա ցուրտ ամիսներին:

Ինչ վերաբերում է խցերում մաքրությանը, ապա ընդհանուր հիգիենայի և խցի սանիտարահիգիենիկ վիճակն ընկնում է կալանավորված կամ դատապարտված անձի վրա: Բարակային տիպի շինություններում շատ դեպքերում այն ընկնում է սեռական փոքրամասնություն հանդիսացող դատապարտված անձի կամ քրեական տերմինալոգիայով այսպես կոչված “փչացված” անձանց վրա:

Խցերում անձնական իրերը պահելու համար նախատեսված կողապահարաններ կան ոչ բոլոր ՔԿՀ-ներում. Վարդաշեն ՔԿՀ-ում կան նաև զգեստապահարաններ: Շատ մեծ ցանկության դեպքում անգամ խցային տիպի ՔԿՀ-ներում դատապարտյալներն ու կալանավորները չեն կարող ունենալ կողապահարաններ, քանի որ խցի մակերեսը թույլ չի տալիս ամեն



մի կալանավորին ունենալ անձնական իրերի պահման համար նախատեսված կողապահարան:

Բոլոր ՔԿՀ-ներն ունեն գրադարաններ, որոնք լիարժեք հագեցած չեն իրավաբանական գրականությամբ, առկա գրականությունն էլ կամ ժամանակակից չէ կամ կորցրել է իր արդիականությունը: Սակայն, ցանկության դեպքում, ցանկացած կալանավորված կամ դատապարտված անձ կարող է անխոչընդոտ իրավաբանական գրականություն ստանալ հարազատներից:

Ինչպես բոլոր անձնական պարագաները, այնպես էլ անձնական հիգիենայի պարագաները հիմնականում բերվում են կալանավորվածների և դատապարտյալների հարազատների կողմից, եզակի դեպքերում դրանք տրամադրվում են ադմինիստրացիայի կողմից, այն դեպքերում, երբ անձը պահանջում և(կամ) բողոքում է:

Խախտումներ. ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 74-րդ հոդվածը, որը վերաբերում է դատապարտյալի անձնական հիգիենային:

ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 43-րդ, 44-րդ, 46-րդ, 49-րդ որոշումները, ըստ որոնց՝ կալանավորված անձին կամ դատապարտյալին անհատական օգտագործման նպատակով տրամադրվում են՝ մահճակալ, անկողնային պարագաներ և սպիտակեղեն, խոհանոցային սպասք (ափսե, բաժակ, գդալ՝ այլումինե կամ պլաստմասսայե), սույն կանոնակարգով սահմանված միասնական նմուշի հագուստ (անհրաժեշտության դեպքում), անձնական հիգիենայի պարագաներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափաբաժիններով: Նշված գույքը կալանավորված անձին կամ դատապարտյալին կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում գտնվելու ընթացքում անվճար տրվում է ժամանակավոր



օգտագործման համար՝ բացառությամբ անձնական հիգիենայի պարագաների: Ելնելով խցում պահվող կալանավորված անձանց կամ դատապարտյալների թվից՝ ընդհանուր օգտագործման համար յուրաքանչյուր խցին տրամադրվում են սեղանի խաղեր, խցի մաքրության պահպանման համար անհրաժեշտ առարկաներ: Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի խուցն առնվազն պետք է ապահովված լինի սեղանով, նստարանով կամ աթոռով, հագուստի կախիչներով, կենցաղային իրերի պահարանով, ռադիոընդունիչով և աղբամանով: Խցերում սարքավորվում են սանհանգույց և լվացարան՝ խմելու ջրի ծորակով: Կալանավորված անձի կամ դատապարտյալի հագուստի և անկողնային պարագաների լվացումը կազմակերպվում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի կողմից, կամ կալանավորված անձանց և դատապարտյալներին հնարավորություն է ընձեռվում օգտվելու լվացքատնից, համապատասխան կենցաղային տեխնիկայից և չորանոցից:

“Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականի հիմնարար սկզբունքներ և բանտարկյալների իրերը բաժինների 4.-րդ և 31.7-րդ կետերը, որոնց համաձայն՝ միջոցների անբավարարությունը չի կարող արդարացում լինել բանտային այնպիսի պայմանների համար, որոնց հետևանքով խախտվում են բանտարկյալների մարդու իրավունքները: Այն դեպքերում, երբ բանտարկյալներին թույլատրված է իրենց մոտ պահել իրենց իրերը, քրեակատարողական մարմինները պետք է քայլեր ձեռնարկեն իրերի անվտանգ պահպանությանը նպաստելու ուղղությամբ:

Մնունդ և սնման համար նախատեսված պայմանները

Եթե ՔԿՀ-ն խցային տիպի է, այսինքն՝ կալանավորված և դատապարտված անձինք պահվում են խցերում, ապա սնունդ ընդունելն իրականացվում է խցում, որտեղ այն բերվում է տնտեսմասի դատապարտյալների կողմից: Օրինակ՝ Նուբարաշեն ՔԿՀ-ում գերծանրաբեռնվածության պատճառով



ճաշում են հերթափոխով և այդ ժամանակ սանհանգույցից չեն օգտվում, քանի որ այն գտնվում է սնման վայրից մոտ 1-1,5մ հեռավորության վրա: Ինչ վերաբերվում է այն ՔԿՀ-ներին, որտեղ բարակային տիպի շինություններ կան, ապա մեր կողմից հարցվող անձանցից 5-ը նշեցին, որ կերակուր ընդունում էին հենց այդ կացարաններում: Այնտեղ կա մեկ սեղան, որը թույլ է տալիս հերթափոխով 3-4 հացընկերով կերակուր ընդունել:

Մեր կողմից հարցված նախկին դատապարտյալները, բացառությամբ մեկի, նշեցին, որ ՔԿՀ կողմից տրվող սնունդից չեն օգտվել, իսկ փորձելիս հասկացել են, որ այն երկարատև օգտագործելուց հետո կարող է առողջական խնդիրներ առաջացնել: Հացը շատ դեպքերում ոչ լավ թխած է եղել, խմորը խոնավ, ոչ պիտանի օգտագործման համար: Սակայն կալանավորների և դատապարտյալների բողոքներից հետո հացի վիճակը բարելավվել է: Ինչ վերաբերվում է ճաշատեսակներին, ապա դրանց ցանկը գրեթե չի փոխվում՝ բացառությամբ մանր հավելումների: Սննդամթերքի որակը հարցվողները գնահատեցին ցածր և նշեցին, որ սնունդը ստացել են հանձնուքների միջոցով հարազատների կողմից: Դիետիկ սնունդի մասին անգամ խոսք չի եղել, միայն Էրեբունի ՔԿՀ-ում երբեմն տոն օրերին տրվել է ձու, մրգահյութ, հացի փոխարեն լավաշ և այլն: Ինչ վերաբերվում է սնունդ ընդունելուն, ապա խցային տիպի ՔԿՀ-ներում այն ընդունվում է խցում, իսկ այն ՔԿՀ-ները, որտեղ դատապարտյալները մնում են բարակային տիպի շինություններում, ընդհանուր, մեծ ճաշարաններում, եզակի դեպքերում՝ կացարաններում: Կալանավորների և դատապարտյալների էտապավորման կամ դատարան տանելու ժամանակ հարցաքննվողներից ոչ ոք չի ստացել սնունդ:

Խախտումներ. ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ կետը, որը վերաբերվում է դատապարտյալի առողջության պահպանմանը, այդ թվում բավարար սնունդ և բժշկական օգնություն ստանալուն:



ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին՝ ապահովումը օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով, 2-րդ՝ սննդի որակը և սննդարարությունը սահմանված չափաբաժիններից որևէ կերպ պակասեցնելը և 3-րդ՝ հիվանդ դատապարտյալին հավելյալ սննդով ապահովելու կետերը, Նուբարաշեն ՔԿՀ-ում մասամբ նաև 4-րդ՝ դատապարտյալին խմելու ջրով ապահովելու կետը:

“Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականի սննդի բաժնի 22.3-րդ 22.6-րդ կետերը, որոնց համաձայն սնունդը պետք է պատրաստվի և մատուցվի հիգիենիկ պայմաններում և անհրաժեշտության դեպքում, բանտարկյալը պետք է ստանա դիետիկ սնունդ:

Ծխելը հիմնարկում

Ըստ հարցվողների՝ ծխողների քանակը ՔԿՀ-ներում կազմում է 90-95%: ՔԿՀ-ներում ծխելու համար նախատեսված հատուկ վայր չկա, հետևաբար չկա նաև ծխելու վայրից օգտվելու կանոնակարգ: Բավականին ծանր է չծխող մարդկանց վիճակը, որոնք գտնվում են միևնույն խցերում ծխողների հետ: Օրինակ, ըստ հարցվող Սարգիս Հացպանյանի՝ սկզբնական շրջանում նա ծխողների հետ նույն խցում է կրել իր կալանքը: Ապա այս խնդրով բողոք է ներկայացրել ՔԿՀ պետին, պահանջելով կիսաբաց ռեժիմից(24 ժամ ազատ զբոսանքի հնարավորությամբ) իրեն տեղափոխել փակ ռեժիմ, միայն թե այդ խնդրին լուծում տրվի: Բողոքի ակցիա է իրականացրել՝ 3 օր քնելով միջանցքում, ինչից հետո միայն իրեն և մի քանի չծխողների տեղափոխել են առանձին խուց:

Այդ նույն խնդիրն են ունեցել նաև մեր կողմից հարցվող 5 “Եհովայի վկաներ” կրոնական կազմակերպության ներկայացուցիչները:



Խախտումներ. ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ կետը, ըստ որի՝ դատապարտյալի հիմնական իրավունքներից է առողջության պահպանումը:

“Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականի առողջության բաժնի 39-րդ կետը, որի համաձայն՝ քրեակատարողական մարմինները պետք է երաշխավորեն իրենց խնամքի ներքո գտնվող բոլոր բանտարկյալների առողջությունը:

Որոշ գործերում ՄԻԵԴ-ը ընդգծում է, որ խցում ծխելու թույլտվությունը, ծանրաբեռնվածության պարագայում, զբոսանքների սահմանապակումները, մաքուր օդի մուտքի սահմանապակումները էլ ավելի է ծանրացնում դատապարտյալների վիճակը(տառապանքները):

Դիտելք “Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության”, “Տրեպաշկինն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության” գործերը:

Ցնցուղ

Խցային տիպի ՔԿՀ-ներում պահվող կալանավորների և դատապարտյալների համար հիմնականում ապահովվել է 7-10 օրը մեկ լոգանք տրամադրելը: Բացառություն է կազմում Նուբարաշեն ՔԿՀ-ն, որտեղ հիմնարկի լոգարանից օգտվելը շատ լուրջ խնդիր է, քանի որ բերվում են լոգանք չտրամադրելու տարբեր պատճառաբանություններ(ջուր չկա, աշխատողների քանակը չի բավարարում և այլն), այդ իսկ պատճառով հարցաքննված կալանավորված անձանց 90%-ից ավելին ստիպված լոգանք էին ընդունում խցային պայմաններում, խցում ջուր տաքացնելու միջոցով՝ ասիական տիպի գուգարանի վրա: Այստեղ նաև սարսափելի հակասանիտարական վիճակ է: Շատ դեպքերում ՔԿՀ-ների բաղնիքներում որպես ցնցուղ ծառայում է խողովակը, որպեսզի ապահովվի ջրի ուժեղ հոսք: Բարակային տիպի սենյակներ ունեցող ՔԿՀ-ներում լոգարանը գտնվում է առանձին շինությունում, որտեղ ցնցուղներն իրարից առանձնացված չեն միջնապատերով, լոգանքի վայրն իզոլացված չէ: Այդ տիպի ՔԿՀ-ներում



լոգանք ընդունելու ժամանակահատվածի հետ կապված խնդիրներ չեն առաջանում:

Խախտումներ. ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 47-րդ որոշումը, ըստ որի՝ կալանավորված անձի կամ դատապարտյալի՝ յուրաքանչյուր շաբաթ առնվազն մեկ անգամ ցնցուղով լոգանք ընդունելու տևողությունը պետք է կազմի առնվազն 15 րոպե:

“Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականի հիգիենայի բաժնի 19.1-րդ, 19.4-րդ և 21-րդ կետերը, որոնք վերաբերում են մաքրությանն ու դատապարտյալների անձնական հիգիենայի պայմաններին և որոնց համաձայն՝ բանտերի բոլոր հատվածները պետք է մշտապես պահվեն մաքուր վիճակում, յուրաքանչյուր բանտարկյալ պետք է կարողանա լոգանք ընդունել շաբաթական առնվազն երկու անգամ համապատասխան ջերմաստիճանի պայմաններում, ինչպես նաև բանտարկյալներին պետք է տրամադրվեն առանձին մահճակալներ և առանձին անկողնային պարագաներ:

Ըստ Եվրոպական դատարանի որոշման՝ անձի արժանապատվության նկատմամբ հարգանքի ստանդարտը ենթադրում է, որ հնարավորության դեպքում, անձնական բնույթի գործողությունները(լոգանքը, լվացվելը, բնական կարիքները հոգալը և այլն) պետք է տեսանելի չլինեն այլ անձանց:

Զբոսանքի վայր

Այն ՔԿՀ-ներում, որտեղ դատապարտյալներն ու կալանավորները պահվում են բարակային տիպի շինություններում, զբոսանքի վայրի խնդիր չկա, քանի որ առավոտյան հաշվառումից հետո, մինչև քնելու ժամը դատապարտված անձինք, առանց որևէ սահմանափակումների, կարող են զբոսնել բնակելի



գոտում, որը և ըստ էության հանդիսանում է զբոսանքի վայր: Ինչ վերաբերվում է խցային տիպի ՔԿՀ-ներին, ապա այստեղ զբոսանքն իրականացվում է կանոնակարգված, և տրամադրվում է օրական մեկ ժամ զբոսանք: Այստեղ ևս բացառություն է կազմում Նուբարաշեն ՔԿՀ-ն, որտեղ թե՛ մեր կողմից հարցվողներից, թե՛ մամուլում տեղ գտած ցմահ դատապարտյալների բողոքներից պարզ է դառնում, որ զբոսանք տրամադրելը կրում է ոչ կանոնակարգված, շատ դեպքերում նաև քմահաճ կամ ինչ-ինչ խնդիրներով պայմանավորված բնույթ: Այսպիսով, ըստ հարցվածների մեծ մասի՝ շաբաթ, կիրակի և տոն օրերին ընդհանրապես զբոսանք չի տրամադրվում: Դա բացատրվում է ՔԿՀ աշխատակիցների հանգստյան օրերի հանգամանքով և հերթափոխի տեսչական կազմի սակավությամբ: Կան հարցաքննվողներ, որոնք նշեցին, որ ամիսներով չեն օգտվել զբոսանքի հնարավորությունից այն պատճառաբանությամբ, որ զբոսանք տրամադրող տեսչական անձնակազմը մասնակցում է խցերի խուզարկման աշխատանքներին, այդ իսկ պատճառով զբոսանք չի տրամադրվում: Խցային տիպի ՔԿՀ-ներում զբոսանքի վայրը խցի չափ տարածք է՝ վերնից ճաղավանդակներով. չկա բուսականություն, մոխրաման, սեղան: Հարկ է նշել, որ զբոսանքի վայրերում չկա ոչ մի հարմարություն անձրևից կամ ձնից պաշտպանվելու համար: Չկան նաև ֆիզիկական վարժանքի համար նախատեսված հատուկ վայրեր և սարքավորումներ: Ինչ վերաբերվում է բարակային տիպի կացարաններ ունեցող ՔԿՀ-ներին, ապա որոշ ՔԿՀ-ներում կան մարզահրապարակներ, որոշներում ֆիզիկական վարժանքի համար նախատեսված սարքավորումներ, դատապարտյալների կողմից մշակված կանաչապատ տարածքներ:

Խախտումներ. ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 10-րդ կետը, ըստ որի՝ դատապարտյալն իրավունք ունի հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի: ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 56-րդ հոդվածի 4-րդ կետը, ըստ որի՝



դատապարտյալն օգտվում է առնվազն մեկ ժամ, իսկ անչափահաս դատապարտյալը՝ առնվազն երկու ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքի իրավունքից:

ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 78-րդ հոդվածը, որը վերաբերվում է դատապարտյալների զբոսանքին:

“Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականի զբոսանքի բաժնի 27.1-րդ, 27.2-րդ, 27.3-րդ, 27.4-րդ և 27.6-րդ կետերը, որոնցում նշվում է, որ յուրաքանչյուր բանտարկյալի պետք է ընձեռել օրական առնվազն մեկ ժամ տևողությամբ բացօթյա զբոսանքի հնարավորություն, իսկ անբարենպաստ եղանակի դեպքում, ստեղծել պայմաններ՝ բանտարկյալների զբոսանքն ապահովելու համար: Բացի այդ պետք է ապահովվեն ժամանցի հնարավորություններ, որոնք ներառում են սպորտը, խաղերը, մշակութային միջոցառումները:

Որոշ գործերում ՄԻԵԴ-ը կալանավորների վիճակը վատթարացնող հանգամանք է դիտարկել տևական ժամանակ զբոսանքի վայրից օգտվելու հնարավորությունից զրկված լինելը վերանորոգման պատճառով:

Դիտել է՝ “Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության” գործը:

ՄԻԵԴ-ը մի շարք գործերում մատնանշում է, որ բացի օրական մեկ ժամից, կալանավորները ստիպված են գտնվել խցում այլ զբաղմունք չունենալու պատճառով: Մաքուր օդի պայմաններում ֆիզիկական վարժանք կատարելու հնարավորության բացակայությունը խցի ծանրաբեռնվածության և վատ օդափոխության հետ համատեղ գնահատվել են որպես կալանավորի վիճակը վատթարացնող գործոններ:

Դիտել է՝ “Տրեպաշկինն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության” գործը:

Գրադարան

ՔԿՀ-ների գրադարանները հազեցած չեն իրավաբանական գրականությամբ: Այդուամենայնիվ, որոշ իրաբանական գրքեր կան և ցանկության դեպքում կարող են տրամադրվել: Իրավաբանական գրականություն փոխանցելու



հնարավորություն տրվել է: Հարցվողներից թերթեր և ամսագրեր ստանալու հետ կապված խնդիրներ ունեցել է միայն Նիկոլ Փաշինյանը Երևան-Կենտրոն և Արթիկ ՔԿՀ-ներում:

Խախտումներ. ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ կետը, ըստ որի՝ ուղղիչ հիմնարկներում ստեղծվում են պայմաններ՝ դատապարտյալի ազատ ժամանակը արդյունավետ տնօրինելու համար: Այդ նպատակով ուղղիչ հիմնարկում ստեղծվում են գրադարան, ընթերցարան, մարզասրահ կամ ժամանցի այլ վայրեր:

92-րդ հոդվածի 6-րդ կետը, ըստ որի՝ ուղղիչ հիմնարկի վարչակազմը ստեղծում է համապատասխան պայմաններ՝ թերթերից, ամսագրերից և այլ գրականությունից օգտվելու համար:

“Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականի կապն արտաքին աշխարհի հետ բաժնի 24.10-րդ կետը, համաձայն որի՝ բանտարկյալներին պետք է հնարավորություն տրվի կանոնավոր կերպով տեղեկացված լինել հասարակական իրադարձություններին՝ բաժանորդագրվելով թերթերի, պարբերականների և այլ հրապարակումների և ընթերցելով դրանք, ինչպես նաև՝ լսելով ռադիո կամ դիտելով հեռուստատեսություններ, բացառությամբ երբ անհատական դեպքում դատական մարմնի որոշմամբ կոնկրետ ժամկետով կոնկրետ արգելք է սահմանվել:

Բուժօգնություն

ՔԿՀ-ներում պատիժ կրելու ընթացքում հարցվողների մեծ մասի առողջական վիճակը զգալիորեն վատացել է: Ժամը 18:00-ից հետո ՔԿՀ-ներում բժիշկ չի լինում, նրան փոխարինում է բուժեղբայրը: Տրված դեղերը սահմանափակ քանակի են: Հարցվողներից Մուրադ Բոջոյանը միկրոինֆարկտ է տարել գիշերվա ընթացքում, բժիշկը հեռախոսով է ցուցումներ տվել: Սարգիս Հացպանյանը խոցի հետ կապված խնդիրներ է



ունեցել, բազմիցս դիմել է, որպեսզի իրեն տեղափոխեն դատապարտյալների հիվանդանոց, սակայն տեղափոխել են միայն այն ժամանակ, երբ խոցը սկսել է արնահոսել: Գրանցվել է, որ իրեն տրվել է 1 տուփ դեղ, իսկ իրականում տրվել է 1 հատ: Դեղերի ժամկետնանց լինելու մասին նամակ է գրել Առողջապահության նախարարություն, և ոչ մի արձագանք չի եղել: Այս մասին բարձրաձայնել է, դիմել է մարդու իրավունքների պաշտպանին, մոնիտորինգային խմբին, սակայն անարդյունք: Հարություն Ուռույթյանը բազմիցս ենթարկվել է ծեծի և խոշտանգման, ինչի պատճառով դադարել է լսել ձախ ականջը: Այս ընթացքում բուժօգնություն չի ստացել:

Հարկ է նշել, որ ՔԿՀ-ների բուժմասը հազեցած չէ մասնագիտական սարքավորումներով և լուրջ առողջական խնդիրներ ունենալու պարագայում, կալանանավորներին կամ դատապարտյալներին պետք է տեղափոխեն Դատապարտյալների հիվանդանոց կամ այլ քաղաքացիական հիվանդանոց:

Մամուլում բազմիցս նշվում է հիվանդության պատճառով տարբեր ՔԿՀ-ներում մահացած կալանավորված կամ դատապարտված անձանց մասին:⁵ Մահվան դեպքերը հիմնականում արձանագրվում են ոչ ժամանակին բուժմիջամտության պատճառով: Մինչ ՔԿՀ-ի ադմինիստրացիան փորձում է կապ հաստատել վարչության հետ, որոշում ուղեկցողին, պատրաստում համապատասխան փաստաթղթեր, շատ դեպքերում այդ ձգձգումը վատ ավարտ է ունենում: Դրա վառ օրինակը հունիս ամսին Էրեբունի ՔԿՀ-ում ներքին արնահոսության պատճառով մահացած Կարեն Մովսիսյանն է, ով իր մահկանացուն կնքեց Էրեբունու կլինիկական հիվանդանոցում:

Բազմաթիվ ահազանգներ են ստացվում և մամուլում տեղեկություններ են հայտնվում ՔԿՀ-ներում թմրամոլների աճի և նրանց ծանր վիճակի վերաբերյալ: Այսպիսով, մամուլում տեղ գտած ինֆորմացիայից⁶ միայն Կոշ ՔԿՀ-ում մոտ 1000 դատապարտված անձանցից 35-ից 40-ը հանդիսանում են

⁵ <http://news.am/arm/news/64355.html>

⁶ <http://news.am/arm/news/50935.html>



Թմրամոլ, իսկ դրանցից 20-25-ը այսպես կոչված “բենզինիստներ”։ Թմրամոլների այդ խավը հանդիսանում են ամենածանր վիճակում գտնվող հիվանդները, որոնք թմրանյութ պատրաստելու համար օգտագործում են դեղահաբեր, բենզին և ծծումբ, որը ստանում են լուցկու գլխիկներից։ Այդ հիվանդների մոտ առաջանում է ոսկրային փթաղտ, և նրանք մահանում են տանջանքների մեջ։ Նույնիսկ այդ հիվանդների նկատմամբ թե՛ Արդարադատության, թե՛ Առողջապահության նախարարությունները ոչ մի քայլ չեն ձեռնարկում և բուժելու փոխարեն դատապարտում են ազատազրկման։ Դրա վառ օրինակը գրեթե 6 ամիս Դատապարտյալների հիվանդանոցում գտնվող Հովհաննես Ծիրատուրյանն է, ով կարիք ունի դիմաճնոտային վիրահատության և այդպես էլ չի որոշվում նրա բուժման խնդիրը։ Այդ խնդրի վերաբերյալ Գյումրու “Երաշխիք” քաղաքացիական հասարակության կենտրոն հասարակական կազմակերպության ներկայացուցիչները դիմել էին ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող խմբին, սակայն այդպես էլ որևէ դրական առաջընթաց չեղավ։

Խախտումներ. ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 61-րդ, 83-րդ հոդվածները, որոնք վերաբերում են դատապարտյալի բուժսանիտարական օգնությանը։

“Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականի առողջության պահպանման բաժնի 40.4-րդ, 40.5-րդ կետերի խախտումներ, որոնք վերաբերում են առաջնահերթ համապատասխան միջոցների առկայությանը, որոնց միջոցով հնարավոր կլինի իրականացնել հիվանդի բուժումը։ Բացի այդ յուրաքանչյուր բանտարկյալի պետք է հասանելի լինեն որակավորված ատամնաբույժի և ակնաբույժի ծառայությունները։



Խոշտանգում և անմարդկային վերաբերմունք

Չնայած այն բանի, որ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում կալանավորների և դատապարտյալների գտնվելն արդեն իսկ կարելի է դիտել որպես խոշտանգում և անմարդկային վերաբերմունք, այդուամենայնիվ մեր կողմից հարցված 2 անձանց նկատմամբ կիրառվել է կոնկրետ ֆիզիկական ուժ: Հարցվողներից Նիկոլ Փաշինյանը և Հարություն Ուռուբյանն իրենց հարցազրույցում նշեցին, որ ենթարկվել են դաժան ծեծի, որի հետևանքով նույնիսկ ունեցել են առողջական խնդիրներ:

Խախտումներ. *ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածը, համաձայն որի՝ “ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք”:*

Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքի 6-րդ(մարդասիրության սկզբունքի) հոդվածի 2-րդ կետը, որի համաձայն՝ դատավճռի հիման վրա ազատությունից զրկված ոչ մի անձ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ոչ մի հանգամանք չի կարող հիմք ծառայել խոշտանգումները կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժն արդարացնելու համար:

Խախտվում է նաև ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 7-րդ՝ անձնական անվտանգության ապահովման մասին կետը:

Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը(խոշտանգման, դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի արգելքը և պատիժը) և “Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականի ապահովության բաժնի 52.5 -րդ կետը, որի համաձայն՝ բանտերում պետք է հետևել առողջության և անվտանգության մասին ազգային օրենսդրության պահանջներին:



Աշխատանքով ապահովվածություն

Հարցված անձանցից և ոչ մեկը ՔԿՀ-ներում աշխատանքով ապահովված չի եղել, սակայն նրանք նշում էին, որ ՔԿՀ-ներում կան դատապարտյալներ, որոնք զբաղված են տարբեր բնույթի աշխատանքներով: Ոմանք զբաղված են խոհանոցային աշխատանքներով, վարսավիրանոցում, բաղնիքում, լվացքատանը, ընդգրկված են տարածքի մաքրման աշխատանքներում, և ամեն հիմնարկում մի քանի հոգի զբաղված են տարբեր արհեստագործական աշխատանքներով: Նախկին դատապարտյալ կանայք նշեցին, որ իրենց ցանկությանը հակառակ ստիպում էին կարատել տարածքի մաքրման և այլ ծանր աշխատանքներ:

Խախտումներ. ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 85-րդ՝ ուղղիչ հիմնարկում աշխատանքի մասին հոդվածի 1-ին կետը, ըստ որի՝ դատապարտյալը հնարավորության դեպքում ապահովվում է աշխատանքով կամ նրան իրավունք է վերապահվում ինքնուրույն իրեն ապահովելու աշխատանքով, որի կարգը և պայմանները սահմանվում են ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով:

“Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականի աշխատանքի բաժնի 26.2-րդ, 26.3-րդ, 26.6-րդ, 26.7-րդ կետերի խախտումներ, որոնք վերաբերում են աշխատանքի պայմաններին և որոնց համաձայն՝ քրեակատարողական մարմինները պարտավոր են ջանքեր գործադրել, որպեսզի բանտարկյալներին ապահովեն օգտակար բնույթի բավարար աշխատանքով:

Տեսակցություն հարազատների հետ և տեղեկատվություն

Խցային տիպի ՔԿՀ-ներում տեսակցությունները թույլատրվում են օրենքով սահմանված կարգով: Լինում են դեպքեր, երբ նախաքննություն իրականացնող մարմիններն արգելք են դնում տեսակցությունների վրա: Միայն Նուբարաշեն ՔԿՀ-ում է, որ կարճատև տեսակցության ընթացքում



կալանավորներն ու դատապարտյալները հարազատների հետ անմիջական շփման հնարավորություն չունեն. բաժանված են ապակե միջնորմով և միմյանց հետ խոսում են հեռախոսով: Բավականին լուրջ խնդիր է հանդիսանում նաև տեսակցության հետ կապված Երևան-Կենտրոն ՔԿՀ-ում, քանի որ ըստ մեր կողմից հարցաքննվող Մուրադ Բոջոյանի, ով այնտեղ անցկացրել է 15 տարի, ՔԿՀ-ում տեսակցության սենյակը ծառայում է նաև որպես քննիչների և դատապաշտպանների հետ հանդիպման վայր, այդ իսկ պատճառով այս սենյակը միշտ ծանրաբեռնված է և լինում են դեպքեր, որ հասանելիք տեսակցությանը կալանավորված և դատապարտված անձինք սպասում են ավելի երկար: Ինչ վերաբերում է երկարատև տեսակցությանը, ապա պետք է նշել, որ թե՛ Երևան-Կենտրոն ՔԿՀ-ն, թե՛ Նուբարաշեն ՔԿՀ-ն այն չեն տրամադրում, չնայած այն բանի, որ 2 ՔԿՀ-ներում էլ գտնվում են բավական մեծ թվով դատապարտված անձինք, այդ թվում և ցմահ դատապարտվածները: Այդ կապակցությամբ ՔԿՀ-ների ղեկավարները գտնում են մի պատճառաբանություն՝ համապատասխան տարածք և վայր չունենալը: Ինչ վերաբերում է այլ ՔԿՀ-ներին, ապա օրենքով սահմանված կարգով, երբեմն փոքր-ինչ ուշացումով տրամադրվում են թե՛ կարճատև, թե՛ երկարատև տեսակցությունները: Այդ նույն տեսակցության սենյակներում նաև ժամանակ առ ժամանակ թե՛ Կոշ, թե՛ Էրեբունի ՔԿՀ-ներում ըստ մեր կողմից հարցվող “Եհովայի վկաներ” կրոնական կազմակերպության ներկայացուցիչների՝ թույլ էր տրվում նաև հանդիպում իրենց երեցիի հետ: Բոլոր հարցվողները, բացառությամբ մեկի, նշեցին, որ իրենց իրավունքների և տեսակցությունների կանոնակարգն իրենց համար տեսանելի չի եղել. պարզապես, գտնվելով ՔԿՀ-ում, իրենք տեղեկացել են խցակիցներից կամ հարազատները դրսից տեղեկացել են, որ կարող են տեսակցել իրենց կալանավորված կամ դատապարտված հարազատին: ՔԿՀ-ներում կալանավորված և դատապարտված անձինք տեղեկատվություն կարող են ստանալ կամ հեռուստացույցից, որոնք տեղադրված են գրեթե բոլոր խցերում, կամ հարազատների կողմից ժամանակ առ ժամանակ



բերված թերթերի միջոցով: Թարգմանչի տրամադրման կարգի մասին տեղեկատվություն տեսանելի չի եղել: Հարցվողներն այս խնդրին չեն բախվել, քանի որ թարգմանչի կարիք չեն ունեցել:

Խախտումներ. ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ըստ որոնց՝ ուղղիչ հիմնարկի վարչակազմը ստեղծում է համապատասխան պայմաններ՝ ընտանիքի և արտաքին աշխարհի հետ դատապարտյալի կապն ապահովելու նպատակով: Այդ նպատակով ուղղիչ հիմնարկում ստեղծվում են կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ:

Մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ կարճատև տեսակցություն տրամադրվում է ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև չորս ժամ տևողությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

“Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականի կապն արտաքին աշխարհի հետ և տեղեկատվություն բաժինների 22.4-րդ և 30.2-րդ կետերը, որոնց համաձայն՝ տեսակցությունների կազմակերպման պայմանները պետք է լինեն այնպիսին, որպեսզի բանտարկյալներին թույլատրեն հնարավորին չափ բնականոն կերպով պահպանել և զարգացնել ընտանեկան հարաբերությունները, և բանտարկյալներին պետք է թույլատրվի իրենց մոտ ունենալ իրենց տրված տեղեկատվության(բանտի կարգապահության կանոնակարգերի և բանտում իրենց ունեցած իրավունքների և պարտականությունների մասին) գրավոր տարբերակը:

ՄԻԵԴ-ի կայացրած որոշումներից մեկում նշվում է, որ անձի ֆիզիկական բաժանումը հարազատից պետք է լինի պատճառաբանված:

Հնարավորության դեպքում ՔԿՀ ադմինիստրացիան պարտավոր է ապահովել հարազատների հետ անմիջական շփումը:

Կալանավորի անչափահաս երեխա (յ)ունենալը ՄԻԵԴ-ը կարող է դիտարկել որպես հանգամանք, որն անհրաժեշտ է հաշվի առնել



կալանավորի՝ հարազատների հետ տեսակցության իրավունքի սահմանափակման դեպքում:

Նամակագրություն

Գրաքննություն (Цензура)

Գրաքննության կանոնները և դրա հետ կապված սահմանափակումները տեսանելի չեն եղել կալանավորների և դատապարտյալների համար, նամակագրության կանոնները և դրա հետ կապված սահմանափակումները ևս: Հարցվողների մեծ մասը չի օգտվել նամակագրության իրավունքից, նախընտրել են հեռախոսակապը: Այն անձինք, ովքեր օգտվել են նամակագրության իրավունքից, երբեմն խնդիրներ են ունեցել՝ նամակները հասցեատիրոջը բավական ուշ հասցնելու կամ ընդհանրապես չհասցնելու հետ կապված: Այս խնդրին հիմնականում բախվել են քաղաքական հայացքների համար դատապարտված անձինք: Երբեմն նաև խնդիրներ են առաջացել ոչ հայերեն լեզվով գրված նամակները հասցեատերերին հասցնելու հետ կապված: Հարցվողներից սահմանափակվել է Վարդգես Գասպարիի, Սարգիս Հացպանյանի և Նիկոլ Փաշինյանի նամակագրության իրավունքը: Հեռախոսակապից օգտվելու իրավունք կալանավորներն ու դատապարտյալներն ունեցել են շաբաթական 2 անգամ 15-ական րոպե, սակայն միշտ չէ, որ այդ ժամանակահատվածն ապահովվել է. հաճախ տաքսաֆոններն անսարքություններ են ունեցել կամ տաքսաֆոնների մոտ հերթեր են գոյացել: Հեռախոսագրույցները հիմնականում տեղի են ունեցել տեսչական անձնակազմի ներկայությամբ:

Խախտումներ. ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 9-րդ կետը, ըստ որի՝ դատապարտյալն իրավունք ունի արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ, օգտվելու հեռախոսակապից, գրականությունից և հնարավոր լրատվական միջոցներից: 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը,



ըստ որոնց՝ դատապարտյալն իր առաջարկությունները, դիմումները և բողոքները կարող է ներկայացնել ամեն օր ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Գրավոր բողոքները ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում, ուղարկվում են հասցեատերերին: Դատապարտյալի առաջարկությունները, դիմումներն ու բողոքները գրաքննության ենթակա չեն: 92-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածները, ըստ որոնց՝ դատապարտյալին թույլատրվում է ստանալ և իր հաշվին ուղարկել ծանրոցներ, հանձնուքներ կամ փաթեթներ, առանց սահմանափակման կատարել և ստանալ դրամական փոխանցումներ, ինչպես նաև իր հաշվին վարել նամակագրություն՝ առանց նամակների, հեռագրերի թվի սահմանափակման: Ծանրոցները, հանձնուքները, փաթեթներն ու նամակներն ուղարկելու և ընդունելու, ինչպես նաև դրանք դատապարտյալին հանձնելու կարգը սահմանվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով: Կապի միջոցներից, այդ թվում՝ հեռախոսակապից, օգտվելու կարգը և քանակը սահմանվում են ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով: Նամակագրությունն իրականացվում է ուղղիչ հիմնարկի վարչակազմի միջոցով և առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու, ենթակա է արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով: Դատապարտյալի բացակայությամբ ստացված նամակներն ուղարկվում են նրա գտնվելու նոր վայր:

“Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականի՝ կապն արտաքին աշխարհի հետ բաժնի 24.1-ին և 24.5 -րդ կետերը, համաձայն որոնց՝ բանտարկյալներին պետք է թույլատրվի հնարավորին չափ հաճախ նամակով, հեռախոսով կամ հաղորդակցության այլ ձևերով հաղորդակցվել իրենց ընտանիքների, այլ անձանց և դրսի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տեսակցել թվարկված անձանց հետ: Քրեակատարողական մարմինները պետք է աջակցեն բանտարկյալներին՝ համարժեք շփումներ պահպանելու արտաքին



աշխարհի հետ և նրանց ցուցաբերեն դա անելու համար անհրաժեշտ բավարար սոցիալական օժանդակություն:

ՄԻԵԴ-ն իր կայացրած որոշումներից մեկում նշում է, որ “հսկողության տակ պահելու” մասին օրենքը չի պարունակում ենթակետեր, որոնցով կսահմանափակվեին ադմինիստրացիայի կամայական միջամտության իրավունքները կալանավորների անձնական նամակագրությանը: Օրենքում չեն նշվում միջամտության սահմանները և միջամտելու շարունակականության չափը: Ընդ որում, գոյություն չունի գրաքննության սահմանները և շարունակականությունը որոշելու անկախ հսկողության մեխանիզմ: Կամայական միջամտությունից զերծ մնալու երաշխիքի բացակայության հետ համատեղ դա կարող է ստեղծել իրավիճակներ, երբ կալանավորի նամակագրության վրա չափազանց շատ սահմանափակումներ են դրվում: Քանի որ մակարդակը չի համապատասխանում օրենքի որակի պահանջներին, սահմանափակումները և արգելքները, որոնք կարող են կիրառվել դրան համապատասխան, չեն հանդիսանում օրենքով նախատեսված: Դիտելով “Վլասովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության” գործը:

(Հղում. արգելքը պետք է հիմնված լինի նպատակահարմարության և նշանակալի իրավիճակների վրա և պետք է հաստատվի դրանցով):

Փաստաբանի հետ կապի ապահովում

Փաստաբանների հետ նամակագրություն տեղի չի ունենում: Փաստաբանը կարող է աշխատանքային ժամերին այցելել իր պաշտպանյալին գրեթե առանց խոչընդոտի. բացառություններ են կազմում Երևան-Կենտրոն ՔԿՀ-ն, որտեղ փաստաբանների և քննիչների հետ հանդիպման սենյակը հանդիսանում է նաև տեսակցությունների սենյակ և այն զբաղված լինելու պատճառով կարող է որոշ ժամանակ ուշանալ հանդիպումը: Հրատապ դեպքերում, երբ փաստաբանը ինչ-ինչ աղբյուրներից տեղեկանում է իր պաշտպանյալի կամ առողջական վատացման կամ խոշտանգման



վերաբերյալ(խոսքը վերաբերվում է հարցվող Նիկոլ Փաշինյանին, ում հանդիպումները փաստաբանների հետ խոչընդոտվել են Կոշ և Արթիկ ՔԿՀ-ներում: Կոշում 2 անգամ խոչընդոտվել է արհեստական պատճառաբանություններով, իսկ Արթիկում ընդհանրապես արգելվել է որևէ կապ և թղթաբանություն: Բազմիցս ներկայացրել է բողոքներ, սակայն ադմինիստրացիայի կողմից դրանց տրվել է կամայական մեկնաբանություն): Որևէ միջոց ձեռնարկված չէ, որպեսզի չառաջանան կամայական մեկնաբանման խնդիրներ:

Խախտումներ. ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 15-րդ՝ դատապարտյալի առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերը, համաձայն որոնց՝ գրավոր բողոքները ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում, ուղարկվում են հասցեատերերին, գրաքննության ենթակա չեն և դրանք քննարկող մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են անել դա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում և ընդունված որոշումների մասին տեղյակ պահել դատապարտյալին:

“Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականի դիմումները և բողոքները բաժնի 70.3-րդ կետը, որի համաձայն՝ եթե դիմումը կամ բողոքը մերժվում է, ապա բանտարկյալին պետք է տրամադրվեն մերժման պատճառները, և բանտարկյալը պետք է իրավունք ունենա այդ որոշման դեմ բողոքարկել որևէ անկախ մարմնի:

Առաջարկություններ

1. Հարկավոր է հրատապ լուծել պայմանական վաղաժամկետ ազատ արձակման հանձնաժողովն ավելի թափանցիկ դարձնելու հարցը: Թափանցիկության հարցը հնարավոր է կարգավորել ՀՀ-ում առավել հնչեղություն ունեցող իրավապաշտպան հասարակական



կազմակերպությունների աշխատողներով և լրագրողներով: Բացի այդ, կայացված որոշումները պետք է ներկայացվեն գրավոր տեսքով և լինեն հստակ պատճառաբանված, որպեսզի հետագայում հնարավոր լինի դրանք բողոքարկել դատարանում(հանձնաժողովի գործունեության վերաբերյալ բողոք՝ գրված Էրեբունի ՔԿՀ դատապարտյալների կողմից⁷)

2. Կալանավորված և դատապարտված անձանց ապահովել որակյալ և բազմազան սննդամթերքով, ընդլայնել ճաշացանկը, ճաշարանները համալրել արհեստավարժ խոհարարներով, մշակել մեխանիզմներ, որպեսզի ՔԿՀ-ներում սնունդ տրամադրելուց հետո չգոյանան մեծ քանակությամբ ավելցուկներ:

3. ՔԿՀ-ներում ապահովել որակյալ և ժամանակին ցուցաբերվող բուժօգնություն:

Քրեակատարողական հիմնարկներում բուժաշխատողները պետք է ենթարկվեն միայն Առողջապահության նախարարությանը, և նրանց մասնագիտական գործունեությունը պետք է վերահսկվի անմիջապես նախարարության կողմից: Ցանկալի կլիներ, որ Առողջապահության նախարարությունն ավելի լուրջ ուշադրություն դարձներ մասնագետների պրոֆեսիոնալիզմին, վերապատրաստման և դեղորայքով ու տարրական բուժսարքավորումներով ապահովման հարցերին: Հիվանդ կալանավորներին կամ դատապարտյալներին նեղ մասնագիտական կամ այլ հիվանդանոց տեղափոխելու ժամանակ հնարավորինս քչացնել ավելորդ թղթաբանությունը, որը ժամանակատար է և գործում է ի վնաս հիվանդի: Վերահսկել բուժսարքավորումների և դեղորայքի օգտագործման պահպանման և ժամկետանց դեղերի ոչնչացման ժամկետները:

4. ՔԿՀ-ներում աշխատատեղեր ստեղծելու միջոցներ ձեռնարկել՝ այս կերպ լուծելով դատապարտյալների և կալանավորների զբաղվածության խնդիրը, նաև հնարավորություն ընձեռնելով վերջիններիս վճարել

⁷ <http://hahr.am/index.php/en/library/letters-and-statements/448-namakvagh>



քաղհայցերը, եթե այդպիսիք կան, իսկ ոչ ապահով խավին՝ լուծել իր տարրական կենցաղային խնդիրները: Անարդյունավետ կերպով գործող “Աջակցություն դատապարտյալին” հիմնադրամի գործունեությունը կասեցնել և ՔԿՀ ադմինիստրացիային հնարավորություն ընձեռնել գործարար անձանց հետ պայմանավորվածությունների միջոցով դատապարտյալներին աշխատատեղերով ապահովելու:

5. Կարգավորել և վերացնել կոմունիստական ժամանակաշրջանից արմատացած անհիմն արգելքները՝ կապված հանձնուքի միջոցով ստացվող տարբեր տեսակի սննդամթերքի, մրգերի և բանջարաբոստանային կուլտուրաների հետ:

6. Որպես խրախուսանքի միջոց՝ դրական վարք ունեցող և կարգաապահ դատապարտյալներին տրամադրել հաշվառված բջջային հեռախոսներ՝ ֆիքսված հեռախոսահամարներով, նաև թույլատրել համակարգչի միջոցով օգտվել ինֆորմացիոն կայքերից:

7. Հնարավորություն ստեղծել Նուբարաշեն և Երևան-Կենտրոն ՔԿՀ-ների դատապարտյալների երկարատև տեսակցության համար: Առանձնակի ծանր հանցագործություն կատարած անձանց օրենքով հասանելիք տարին մեկ անգամ երկարատև տեսակցության քանակը կրկնապատկել: Նախաքննական և դատաքննական փուլերը 1 տարուց ավել տևելու դեպքում, թույլ տալ տվյալ կալանավորին օգտվելու երկարատև տեսակցությունից:

8. Ապահովել ՔԿՀ-ներում օրենքով հասանելիք շաբաթական մեկանգամյա լոգանքը՝ ամռան ամիսներին դրանց թիվը կրկնապատկելով:

9. Խցային տիպի ՔԿՀ-ներում ստեղծել ծխող և չծխող կալանավորների և դատապարտյալներին առանձին խցերում պահելու հնարավորություն:

10. Քանի որ դատապարտյալները բողոքում են, որ շատ դեպքերում իրենց նամակները կամ դիմում-բողոքները չեն հասնում հասցեատերերին, առաջարկում ենք, որ յուրաքանչյուր աշխատակից, ով առնչություն կունենա նամակների և դիմում-բողոքների հետ, ունենա գրանցամատյան, որտեղ



կգրանցվի, թե երբ է ստացվել նամակը, ում կողմից է ուղարկված և ում է ուղղված, երբ է հանձնվել այն այլ աշխատակցի, վերջինիս անուն-ազգանունը և ՔԿՀ-ից ելքի ամսաթիվը:



ԱՐԴԱՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ



Սույն զեկույցը կազմվել է կազմակերպության կողմից ՀՀ դատարաններում իրականացված մոնիտորինգի արդյունքում՝ 2011թ. հունվարից-դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում:

ՀՀ դատարաններում դիտարկումներ են կատարվել, մասնավորապես, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ, Ավան և Նոր-Նորք, Աջափնյակ և Դավթաշեն, Շենգավիթ, Էրեբունի և Նուբարաշեն, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարաններում, Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում, ինչպես նաև ՀՀ Վերաքննիչ և ՀՀ Վճռաբեկ դատարաններում: Ընդհանուր առմամբ մոնիտորինգային խմբի կողմից դիտարկման են ենթարկվել ավելի քան 75 գործ:

Արդար դատավարության և արդյունավետ պաշտպանական միջոցների իրավունքի վերաբերյալ մոնիտորինգի արդյունքում հստակ կարելի է նշել, որ դիտարկված դատաքննությունների ընթացքում ՀՀ դատարանները շարունակում են կոպտորեն և բացահայտ խախտել մի շարք ներպետական և միջազգային նորմեր, մասնավորապես՝

1. ՀՀ Սահմանադրության

3-րդ հոդվածը, համաձայն որի՝ “Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:”

17-րդ հոդվածը, համաձայն որի՝ ”Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և



ազատագրված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք”:

18-րդ հոդվածը. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը”:

21-րդ հոդվածը. «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:”

2. Խախտվում են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված մի շարք սկզբունքներ, այն է՝ օրինականության/հոդված 7/, օրենքի և դատարանի առջև հավասարության/հոդված 8/, անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու/հոդված 9/, իրավաբանական օգնության իրավունքի ապահովման/հոդված 10/, անձի անձեռնմխելիության/հոդված 11/, գործի արդարացի քննության/հոդված 17/, անմեղության կանխավարկածի/հոդված 18/, կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը/19 հոդված/, քրեական դատավարության ընթացքում մրցակցության/հոդված 23/ սկզբունքները:

3. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 3 և 6 հոդվածները:



Մուտքը դատարանի դահլիճ

Համաձայն ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի.

”1. Քրեական գործերի դատական քննությունը բոլոր դատարաններում դոնբաց է, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերի.”

Նույնը նախատեսում է նաև ՀՀ Դատական օրենսգիրքը.

“1. Հայաստանի Հանրապետության դատարաններում գործերի քննությունը դոնբաց է:

2. Դատական քննությունը կամ դրա մի մասն անցկացվում է դոնփակ՝ միայն դատարանի որոշմամբ...”

Եթե նախորդ տարիներին ՀՀ դատարաններում բազմաթիվ էին դեպքերը, երբ դատարանի կարգադրիչները տարբեր պատճառաբանություններով խոչընդոտում էին մուտքը դատարանի դահլիճ, ապա 2011 թվականին հիմնականում նման դեպքեր գրեթե չեն արձանագրվել: Սույն փաստը հավանաբար կապված է այն հանգամանքի հետ, որ նախորդ տարիներին դատարաններում լավոր ադմինիստրացիոն գործերի քանակը շատ էր:

27.12.2011թ. Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի/դատավոր Գ. Պողոսյան, մեղադրյալ՝ Տ. Առաքելյան մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածով, 258 հոդվածով, մեղադրյալ՝ Ա. Կարապետյան մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածով, 258 հոդվածով, մեղադրյալ՝ Ս. Գևորգյան մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածով, մեղադրյալ՝ Դ. Քիրամիջյան մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածով/ նիստը սկսելուց առաջ կարգադրիչները առանց որևէ բացատրության արգելել են դատարանի շենք մուտք գործել ՀԱԿ ակտիվիստներին: Մասնավորապես՝ ՀԱԿ ակտիվիստ Վարդգես Գասպարին, դատական նիստին ներկա գտնվելու նպատակով ներկայացել էր Կենտրոն և Նորք Մարաշ դատարան, օրենքով սահմանված կարգով ներկայացրել էր անձը հաստատող փաստաթուղթ, սակայն կարգադրիչները նրան ներս չէին թողել: Երբ վերջինս փորձել էր



պարզաբանում ստանալ կարգադրիչներից՝ ներս չթողնելու պատճառների մասին, նրան հրելով տապալել էին գետնին, ապա գետնից պառկած վիճակում, բռնելով ոտքերից և ձեռքերից, քաշքշելով շարտել էին դատարանի շենքից դուրս⁸:

Բոլոր դատարանների մուտքերի մոտ փակցված են հայտարարություններ՝ համաձայն որոնց արգելվում է մուտքը դատարան մարզական հագուստով: Այս երևույթին անդրադարձել են այն պատճառաբանությամբ, քանի որ վստահաբար կարելի է ասել, որ ՀՀ-ում դեռ բացակայում է նման վայրեր այցելության համար համապատասխան հագուստ կրելու կուլտուրան: Սակայն հագուստի մարզական լինել-չլինելը նույնպես թողնված է կարգադրիչների հայեցողությանը, ինչը լրացուցիչ լարվածություն է ստեղծում, քանի որ կարգադրիչները առաջնորդվում են ոչ թե կոնկրետ իրավական ակտով, այլ իրենց անձնական կարծիքով:

Անբացատրելի խիստ խտրական վերաբերմունք է ձևավորված հատկապես ՀՀ Վերաքննիչ և ՀՀ Վճռաբեկ դատարանների կարգադրիչների կողմից:

Հարկ է նշել, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանում դատախազները անարգել(առանց անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու և առանց անձնական իրերի զննության ենթարկվելու) անցնում են դատարանի դահլիճ:

Առավել անընդունելի է այն հանգամանքը, որ անգամ անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելուց հետո հանդիպել են դեպքեր, երբ փաստաբանին պարտադրել են բացել պայուսակները և անց են կացրել զննություն: Առանց որևէ հիմնավորման փաստաբանների մոտից, ժամանակավորապես առգրավում են անձնական իրեր, համապատասխան գործարանային փաթեթավորմամբ դեղամիջոցներ, ամռան շոգ օրերին իրենց հետ բերված փակ շշերով ջուրը և այլն: Նշվածը, անվտանգության ապահովման նկատառումներով, կարելի էր թերևս ողջունել, եթե նույն

⁸ <http://www.hahr.am/index.php/en/human-rights/the-court/444-december-27>

վերաբերմունքը ցուցաբերվեր նաև դատախազների և քննիչների նկատմամբ:

27.12.2011թ. Հելսինկյան ասոցիացիայի փաստաբանները այցել էին ՀՀ վերաքննիչ դատարան գործի նյութերին ծանոթանալու համար և մուտքի մոտ սպասելու ժամանակ ականատես էին եղել թե ինչպես տարբեր քրեական գործերով մասնակցելու նպատակով դատարան այցելած մեղադրողները առանց անձը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու առանց անձնական և անձնական իրերի զննության անցան դատարանի դահլիճ: Միննույն գործերով նիստին մասնակցելու համար ներկայացած փաստաբանները ներկայացնում էին անձը հաստատող փաստաթուղթ և անցնում էին թե անձնական, թե անձնական իրերի զննություն, իսկ օտարերկյա դիտորդներից մեկի մոտից ժամանակավոր առգրավվեց գործարանային փաթեթավորմամբ դեղամիջոց:

29.12.2011թ. Հելսինկյան ասոցիացիայի փաստաբաններ՝ Ն.Կարապետյանը և Գ.Խաչատրյանը ներկայացել էին ՀՀ վերաքննիչ դատարան՝ Ա. Ահարոնյանի, Վ.Բաղդասարյանի և մյուսների, քրեական գործով նիստին մասնակցելու նպատակով: Կարգադրիչները փաստաբաններից պահանջեցին ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, զննող սարքի միջոցով անցկացրեցին իրերի զննություն, իսկ մեղադրողներ՝ Կ.Փիլոյանը և Ա.Դավթյանը անարգել անցան դատարանի դահլիճ:

Մեկ այլ համատարած խախտումներից այն է, որ գրեթե բոլոր դատարաններում դատական նիստը սկսվելուց առաջ, հատկապես առաջին ատյանի դատարաններում, դատախազները այցելում են դատավորների առանձնասենյակներ, որոնք, ի դեպ, գտնվում են սահմանափակ մուտք ունեցող գոտում, ուր ըստ պատին փակցված ցուցանակի «մուտքը կողմնակի անձանց համար խստիվ արգելված է»: Դրան հակառակ փաստաբանի ցանկացած փորձ՝ հանդիպել դատավորին, անմիջապես կանխվում է կարգադրիչների կողմից: Այսինքն՝ անգամ մինչև բուն



դատական նիստի սկիզբն արդեն իսկ խախտվում է կողմերի հավասարության սկզբունքը:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում/դատավոր՝ Հ.Սարգսյան, մեղադրող՝ Պ.Պողոսյան, ամբաստանյալներ՝ Ա.Տերյան, Ա. Զեյթունյան, Մ.Մանուկյան, Ա.Ալեքսանյան/ մեղադրողը յուրաքանչյուր դատական նիստից առաջ և ընդմիջումներին այցելում է դատավոր Հ.Սարգսյանի առանձնասենյակ:

Դատական նիստերի սկիզբը

Համաձայն ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 317-րդ հոդվածի.

«Նախագահողը քրեական գործը քննելու համար նշանակված ժամին բացում է դատական նիստը և հայտարարում, թե որ գործն է ենթակա քննության:» Թերևս ամենատարածված խախտումներից է դատական նիստը ուշացումով սկսելը: Մոնիտորինգի ենթարկված քրեական գործերով դատական նիստերի մեծ մասը սկսվում են 15-45 րոպե ուշացումով: Դատական նիստը ուշացումով սկսելու վերաբերյալ դատարանը պարտավոր է հայտարարել նիստի ուշացման պատճառի և նիստը սկսելու ժամի մասին, սակայն ոչ միայն չի հայտարարվում, այլ բացառիկ դեպքերում է անդրադառնում նիստը ուշացումով սկսելու պատճառին:

Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի/դատավոր Ա.Վարդապետյան, դատախազ Դ.Գրիգորյան, պաշտպաններ Գ.Մադոյան(հանրային պաշտպան), Գ. Ազարյան, Է. Մայսուրյան, ամբաստանյալներ՝ Է.Գալստյան ըստ մեղադրանքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 266 հոդվածի 4-րդ մասով, Ա. Հովհաննիսյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածով, 266 հոդվածի 4 մաս, Ա. Խանչաչյան՝ 38-268 հոդվածով/ 09.06.2011թ. նիստը սկսեց 1 ժամ 40 րոպե ուշացումով: Դատական նիստի ուշացման կամ հետաձգման մասին դատական նիստ չհրավիրվեց: Ըստ միջանցքում

զբոսնող կարքադրիչների նիստը հետաձգվել էր ազատ դահլիճի բացակայության պատճառով, սակայն 1-ին դահլիճը ազատ էր:

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի /դատավոր՝ Ա. Գաբրիելյան, մեղադրող՝ Նուբարաշեն ՔԿՀ-ի հսկող դատախազ՝ Ա.Մուրադյան, հանրային պաշտպան՝ Ա. Ջուվանովա, ամբաստանյալ՝ Կ. Հարությունյան, ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 268 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով/ դատական նիստերը սկսվել են առնվազն 15 րոպե ուշացումով: 12.05.2011թ. դատական նիստը հետաձգվել է առանց պատճառը հայտարարելու:

18.10.2011թ. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում/դատավորներ՝ Ա. Դանելյան, Մ.Աղրամանյան, Մ.Ռեհանյան, դատախազ՝ Ա. Մելքոնյան, պաշտպան՝ Ն. Սարգսյան, ամբաստանյալ՝ Հ. Սահակյան, ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով/ նշանակված դատական նիստը սկսել է 25 րոպե ուշացումով:

10.11.2011թ. Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի նիստը/դատավոր Ա.Մկրտչյան, մեղադրողներ՝ Կ.Փիլոյան, Ա.Դավթյան, պաշտպաններ Գ.Խաչատրյան, Ն.Կարապետյանց, Գ.Հակոբյան, Տ.Սաֆարյան, Ռ.Բալոյան, Վ.Ենգիբարյան, ամբաստանյալներ՝ Վ.Բադդասարյան մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 10-րդ կետերով, 235-րդ հոդվածի 1-ին և 258-րդ հոդվածի 4-րդ մասերով, Ա.Ահարոնյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Պ.Գրիգորյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Հ.Սանդալյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Ա. Փոխարյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Դ.Սանդալյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-258-րդ հոդվածի 4-րդ մասով/նշանակված դատական նիստը ուշացավ 1 ժամ 40 րոպե: Միայն Հեղինակյան ասոցիացիայի փաստաբաններ՝ Ն.Կարապետյանցի և Գ. Խաչատրյանի դատարանի դահլիճը լքելուց հետո(նախապես դատարանի



գրասենյակում թողնելով համապատասխան դիմում) դատարանը որոշել է նիստով հետաձգել դատական նիստը:

Կարգը դատարանի դահլիճում

Դատական նիստի ժամանակ դատարանի դահլիճում կարգը վերահսկում է դատավորը՝ կարգադրիչներին տալով համապատասխան կարգադրություններ:

Բացառապես միայն դատավորն իրավունք ունի արգելելու կամ թույլատրելու իրականացնել ֆոտո և տեսաձայնագրություն, այն էլ միայն դատական նիստի ընթացքում: Նախքան դատական նիստի սկիզբը ցանկացած ֆոտո և տեսաձայնագրություն իրականացնելը արգելված չէ օրենքով:

Մոնիտորինգի ենթարկված գրեթե բոլոր դեպքերում նիստը սկսելուց առաջ կարգադրիչները իրենց վրա են վերցնում դատավորներին վերապահված իրավունքներն ու պարտականությունները և արգելում նկարահանում իրականացնել դատարանի դահլիճում և զբաղեցնել դահլիճի նստարանների առաջին շարքերը(հատկապես քրեական գործերով):

Դատարանի դահլիճում ուստիկանները և դատական կարգադրիչներն են որոշում, թե որտեղ պետք է այս կամ այն անձը նստի: Չնայած, որ դա դատարանի, այլ ոչ թե կարգադրիչների ֆունկցիան է՝ թույլատրել կամ չթույլատրել նստել առաջին շարքում:

Կարգադրիչներ

Վրամ Բաղդասարյանի, Արսեն Ահարոնյանի և այլոց գործի դատաքննության ընթացքում յուրաքանչյուր անգամ դատական նիստը սկսելուց առաջ կարգադրիչները փորձում էին արգելել Հելսինկյան ասոցիացիայի և լրագրողների կողմից լուսանկարահանումները: Այնինչ դատարանը նիստը սկսելուց հետո թույլատրում էր կատարել նկարահանում:



Եթե նախորդ տարիներին կարգադրիների դրսևորված վարքագիծը կարելի էր գնահատել խիստ անբավարար, ապա վերջին տարվա մոնիտորինգը արձանագրեց կտրուկ փոփոխություն: Վերջիններիս վարքագծում դրական փոփոխություններ են նկատվում: Սակայն արձանագրվել են նաև դեպքեր, երբ կարգադրիչը դրսևորել է ցինիզմի հասնող վարաքագիծ:

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի /դատավոր՝ Վ. Գրիգորյան, ամբաստանյալ՝ Մ. Բաշկով, ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 8-րդ կետերով, փաստաբան՝ Ա.Բեջանյան/ դատական նիստից առաջ դատարանի կարգադրիչները ծաղրելով նիստին ներկայացած հարազատներին, ստիպել են գրպաններից հանել անգամ թաշկինակները, ասելով, որ հատկապես թաշկինակներ են զնգում հատուկ միջոցներով զննելու ժամանակ:

Դատական նիստի արձանագրություն

Համաձայն ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածը նախատեսում է դատավարական գործողությունների ընթացքը արձանագրելու գրավոր կամ տեխնիկական միջոցների օգնությամբ պատրաստելը:

ՀՀ-ում պարբերաբար իրականացվել են բարեփոխումներ, ֆինանսավորվել են դատարանները, դրա արդյունքում վերակառուցվել և վերազինվել են նոր համակարգերով Երևան քաղաքի բոլոր դատարանների շենքերը: Այժմ Երևան քաղաքի բոլոր դատարաններում դատական նիստի արձանագրությունը կատարվում է համապատասխան տեխնիկական միջոցների օգնությամբ: Դատական նիստի արձանագրությանը ծանոթանալու համար կողմը հնարավորություն ունի վճարել օրենքով սահմանված պետական տուրք և դիմելով դատարանին ստանալ դրանք ձայնասկավառակների տեսքով:



Մարզերում գտնվող դատարանների վերազինումը կատարվել է մասամբ: Մեծամասամբ մարզերում գտնվող դատարանները շարունակվում են գտնվել ուղղակի անմխիթար վիճակում: Լավագույն դեպքում վերանորոգված են դատավորների առանձնասենյակները, այն էլ իրենց իսկ միջոցներով: Բացակայում են բնականոն աշխատանքի համար նվազագույն պայմանները:

Մարզերում հիմնականում նիստերը արձանագրվում են ձեռագիր, ինչի արդյունքում այն, ինչ ցանկալի չէ, որ արձանագրված լինի, պարզապես չի անցկացվում արձանագրության մեջ և հետագայում որևէ կերպ հնարավոր չի լինում անդրադառնալ դատական նիստի ժամանակ դատավորների և դատախազների կողմից կատարված կոպիտ խախտումներին: Ցանկացած միջնորդություն՝ նիստը տեսաձայնագրելու կամ ձայնագրելու, մերժվում է, անգամ եթե պաշտպանական կողմը առաջարկում է տրամադրել բոլոր անհրաժեշտ տեխնիկական միջոցները իր հաշվին: Թեև ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածով սահմանված է, որ՝ դատավարական գործողություններ իրականացնելիս կարող են կատարվել սղագրում, լուսանկարահանում, կինոնկարահանում, ձայնագրում և տեսագրում:

Դատավորի վարքագիծ

Արձանագրվել է, որ բազմաթիվ դատավորներ բավարար մասնագիտացված չեն, չեն պահպանում դատավորի էթիկայի կանոնները և դա պայմանավորված է նաև նրանով, որ Արդարադատության խորհուրդը օբյեկտիվ մոտեցում չի ցուցաբերում քաղաքացիների՝ դատավորների ոչ վայել վարքագծի և անօրինականությունները կանխելու վերաբերյալ բողոքներին:

Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի/դատավոր՝ Ա.Վարդապետյան, մեղադրող՝ Դ. Գրիգորյան, պաշտպաններ՝ Գ.Մադոյան, Գ. Ազատյան, ամբաստանյալներ՝ Ա.



Հովհաննիսյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 268 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 266 հոդվածի 4-րդ մասով, Է. Գալստյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 266 հոդվածի 4-րդ մասով, Ա.Խանչաչյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-268 հոդվածի 1-ին մասով, 268 հոդվածի 2-րդ մասի 1.2 կետով, 264 հոդվածով/ դատավոր Ա. Վարդապետյանը չի բացատրել մեղադրյալներին իրենց կողմից հարցերին չպատասխանելու օրենքով սահմանված իրավունքը, ինչպես նաև չի բացատրել դատարանին ինքնաբացարկ և մեղադրողին բացարկ հայտնելու հիմքերը և կարգը:

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի /դատավոր՝ Վոլոդյա Գրիգորյան, մեղադրող՝ Ա. Մուրադյան, ամբաստանյալ՝ Ս. Ջաբուրյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 34-268 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով/ դատավորը ամբաստանյալին հարցրել է ցանկանում է արդյոք նա պաշտպան ունենալ, ինչին ամբաստանյալը պատասխանել է «այո», բայց հայտնել է, որ գումար չունի պաշտպանին վճարելու համար: Դատավորը ճշտել է մեղադրողի կարծիքը, ինչին մեղադրողը պատասխանել է. «դե հիմա, որ ասեմ դեմ եմ, կասեք չի լինի այդպես, պաշտպանն ինչ ա անում, մեկա մեղքը ընդունել ա, թող արագացված չուզի, ես էլ մեղմ պատիժ կուզեմ կանցնի կգնա»: Դատավորը հայտարարել է 5 րոպե ընդմիջում: Դատական նիստն ընդմիջելու իմաստը արձանագրության ձայնագրությունը անջատելն էր, որպեսզի դատախազը հնարավորություն ունենա բանակցել ամբաստանյալի հետ: Ընդմիջման ժամանակ մեղադրողը մոտեցել է ամբաստանյալին և առաջարկել որպեսզի նա պաշտպան չուզի, արագացված դատավարությունից հրաժարվի, ինքն էլ իր հերթին մեղմ պատիժ կուզի և ավելացրել. «հո տուն տունիկ չենք խաղում»: 5 րոպե ընդմիջումից հետո նիստը վերսկսելով, դատավորը կրկին հարցրել է ամբաստանյալին պաշտպան ցանկանում է, թե ոչ ինչին ամբաստանյալը



պատասխանել է ոչ: Դատավորը պատասխանը համարել է բավարար և շարունակել դատական նիստը:

Արձանագրվել են դեպքեր, երբ դատարանը բացահայտ խախտել է անմեղության կանխավարկածը:

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի /դատավոր Ա.Գաբրիելյան, մեղադրող՝ Նուբարաշեն ՔԿՀ-ի հսկող դատախազ Ա.Մուրադյան, հանրային պաշտպան՝ Ա. Ջուվանովա, ամբաստանյալ՝ Կ. Հարությունյան, ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 34-268 հոդվածի 3-րդ մաս/ դատական նիստին դատավորը խախտելով անմեղության կանխավարկածը ասել է. «դու լավ ել գիտես թե ով է բերել այդ դեղը բայց մեկ է չես ասի, մենք ձեր նմաններին լավ գիտենք»:

Չնայած այն հանգամանքին, որ օրենքը դատարանի հայեցողությանն է թողնում գործի հետ կապված այս կամ այն հարցի լուծումը, հաճախ դատավորները չարաշահում են այդ իրավունքով և խիստ կողմնակալ վերաբերմունք են դրսևորում նույնանման խնդիրների վերաբերյալ: Նշվածի վառ օրինակ են հանդիսանում համատարած բնույթ ունեցող փորձաքննությունների ու ապացույցների խիստ սուբյեկտիվ գնահատումը, միջնորդությունների քննարկումը և այլն:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանը /դատավոր՝ Ա.Մկրտչյան, մեղադրողներ՝ Կ.Փիլոյան, Ա.Դավթյան, պաշտպաններ՝ Գ.Խաչատրյան, Ն.Կարապետյանց, Գ. Հակոբյան, Տ.Սաֆարյան, Ռ.Բալոյան, Վ.Ենգիբարյան, ամբաստանյալներ՝ Վ.Բադդասարյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ 235-րդ և 258-րդ հոդվածներով, Ա.Ահարոնյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով, Պ.Գրիգորյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով, Հ. Սանդալյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով, Ա. Փոխարյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով, Դ.Սանդալյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-258-րդ հոդվածով/ քրեական գործով հեռախոսային վերձանումները հետազոտելիս, որը ապացուցում էր

ամբաստանյալ՝ Վ.Բաղդասարյանի այլուրեքությունը, այն գնահատեց, որպես հեռախոսի գտնվելու վայր: Իսկ մեկ այլ դեպքում Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը/դատավոր՝ Ս.Կոստանյան, մեղադրող՝ Տ.Պողոսյան, ամբաստանյալ՝ Ա.Հովհաննիսյան ըստ մեղադրանքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, պաշտպաններ՝ Ն.Կարապետյանց և Գ.Խաչատրյան/ ապացուցները հետազոտելիս՝ հեռախոսային վերծանումները գնահատվեցին որպես ամբաստանյալի գտնվելու վայր:

2010թ. Հայաստանում ակտիվացել է պայքարը թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ: Կտրուկ ավելացել են դատարան ուղարկվող քրեական գործերի քանակը, որոնք պատիժ են նախատեսում ՀՀ Քրեական օրենսգրքի 266 և 268 հոդվածներով:

Միայն Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դիտարկվել է ավելի քան 20 ՀՀ քրեական օրենսգրքի 266 և 268 հոդվածներով հարուցված քրեական գործեր: Դիտարկված գործերից միայն 2 դեպքում է դատարանը որոշում կայացրել մեղադրյալին հարկադիր բուժման ուղարկելու մասին: Մնացած դեպքերում դատարանը հաստատված է համարել մեղադրյալի թմրամոլ լինելու փաստը, անհայտ պատճառներով հարկադիր բուժում չի նշանակել:

Էրեբունի Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը /դատավոր՝ Վ. Գրիգորյան, մեղադրող՝ Ա.Մուրադյան, ամբաստանյալ Ս.Ջաբուրյան մեղադրվում է 34-268h-1մասով/ հաստատված համարեց Ս.Ջաբուրյանի մեղքը, պատիժ նշանակեց 1 տարի 8 ամիս, սակայն հարկադիր բուժում չնշանակեց:

Էրեբունի Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը/դատավոր՝ Ա. Գաբրիելյան, մեղադրող՝ Ա. Մուրադյան, ամբաստանյալ՝ Կ.Սարգսյան 34-268h-1մասով/ հաստատված համարեց Կ.Սարգսյանի մեղքը պատիժ նշանակեց 6 ամիս ազատազրկման չկրած



պատիժը գումարելով վերջնական պատիժ նշանակեց 4տարի 5ամիս 27 օր, սակայն հարկադիր բուժում չնշանակեց:

Նշվածը կարելի է դիտարկել թե՛ որպես անփութություն, թե՛ որպես դատավորների անբավարար մասնագիտացվածություն, թե՛ որպես դիտավորություն: Ցանկացած պարագայում նշվածը պետք է որ հետաքրքրություն և համապատասխան վերաբերմունք առաջացնեք գոնե համապատասխան դատարանի նախագահի մոտ:

Մեղադրողի վարքագիծ

Մոնիտորինգի արդյունքում արձանագրվել են նաև դեպքեր, երբ մեղադրողների կողմից խախտվել են օրենքով սահմանված իրենց իրավունքները և պարտականությունները:

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում/դատավոր՝ Վ.Գրիգորյան, մեղադրող՝ Ա. Մուրադյան, ամբաստանյալ՝ Անահիտ Խաչատրյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, պաշտպան՝ Կ.Աղաջանյան, ամբաստանյալ՝ Կ. Արզումանյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 34-268 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, պաշտպան՝ Ա. Ջուվանովա, ամբաստանյալ՝ Հ.Կարապետյան, ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, պաշտպան՝ Տ.Գրիգորյան/ մեղադրողը վերադարձվել է մեղադրանքը, սակայն կողմերին չի տրամադրել մեղադրանքը փոփոխելու մասին որոշումը, ինչի արդյունքում պաշտպանական կողմը հնարավորություն չի ունեցել պատշաճ նախապատրաստվել գործին: Ավելին փոփոխված մեղադրանքը ներկայացվել է միմիայն ըստ հոդվածների, մեղադրողը չի ներկայացրել, թե ինչի արդյունքում և ինչ հիմքերով է փոփոխվել մեղադրանքը: Տեղի ունեցածի վերաբերյալ հայտարարություն է արել փաստաբաններից Տ.Գրիգորյանը, որից հետո դատարանը շտապ կերպով պատճենահանել և կողմերին է ներկայացրել վերադարձված որոշումը:



Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի/դատավոր՝ Վ.Գրիգորյան, մեղադրող՝ Ա.Մուրադյան, ամբաստանյալ՝ Ս.Զաբուրյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 34-268 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով/ դատավորը ամբաստանյալից ճշտելով, որ ցանկանում է արագացված դատաքննություն, որի դեպքում պաշտպան ունենալը պարտադիր է, սակայն անվճարունակ լինելու պատճառով չի կարող պաշտպան վարձել: Դատավորը հանրային պաշտպան տրամադրելու փոխարեն, ճշտելով մեղադրողի կարծիքը, որն էլ իր հերթին հայտարարեց, որ եթե արագացված դատաքննության կարգ չուզի, ինքն իր հերթին մեղմ պատիժ կպահանջի, ընդմիջեց դատական նիստը ամբաստանյալին համոզելով հրաժարվել պաշտպանից:

Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի /դատավոր՝ Ա. Վարդապետյան, մեղադրող՝ Դ. Գրիգորյան, ամբաստանյալ՝ Մ.Մոսիսյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 268 հոդվածի 1-ին մասով, պաշտպան Էդ. Աղաջանյան, ամբաստանյալ՝ Տ. Ղարիբյան ըստ մեղադրանքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 1-ին մասով պաշտպան Հ. Գևորգյան/ 16.06.2011թ նիստը սկսվելուց առաջ մեղադրողը ամբաստանյալին և նրա բարեկամներին հորդորում էր, որ արագացված պահանջեն, ինքն էլ իր հերթին «քիչ կուզի»: Նիստի ժամանակ ամբաստանյալը և նրա պաշտպանը պահանջեցին արագացված դատավարություն, մեղադրողը չառարկեց, դատարանը բավարարեց միջնորդությունը:

Ողջամիտ ժամկետ

Դատարանների կողմից խախտվում է նաև դատաքննության իրականացման ողջամիտ ժամկետները և քրեական, և քաղաքացիական գործերով: Կան բազմաթիվ գործեր, որոնց դատավարությունը ընթացել է մեկ տարուց ավել ժամանակով: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ դատարանների ծանրաբեռնվածությամբ, կողմերի



կողմից դատական նիստերի անհիմն ձգձգելով, լինում են դեպքեր, որ դատաքննությունը ընդհատվում է դատավորի արձակուրդ մեկնելու պատճառով:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող /դատավոր՝ Մ.Մակյան, մեղադրող՝ Ա.Խանգադյան, ամբաստանյալ՝ Խ. Հովսեփյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 266 հոդվածի 4-րդ մասով և 268 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, պաշտպան՝ Գ. Խաչատրյան/ դատավարությունը սկսվել է 2010թ. սեպտեմբերից և մինչ օրս գտնվում է առաջին ատյանի դատարանի վարույթում:

Վկաների հարցաքննության կարգի խախտում

Բազմաթիվ են դատարաններում վկաների հարցաքննության կարգի խախտման դեպքեր: Համաձայն ՀՀ Կառավարության 22. 12. 1999թ. N 767 որոշման “Հայաստանի Հանրապետությունում անձը(ինքնությունը) հաստատող փաստաթղթերն են՝ Հ Հ քաղաքացիների համար անձնագիրը, զինվորական գրքույկը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը, մինչև 16 տարեկան երեխաների համար՝ նաև ծննդյան վկայականը....”

Դիտարկված նիստերի ժամանակ մի դեպքում դատարանը անհասկանալի պատճառներով չի ընդունում, բացի անձնագրից անձը հաստատող այլ փաստաթղթեր, մյուս դեպքում բավարար է համարում օրինակ դատախազի անձամբ հարցաքննվող վկայի հետ ծանոթ լինելը՝ որպես “անձը հաստատող փաստաթուղթ”:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում/դատավոր՝ Հ.Սարգսյան, մեղադրող՝ Պ.Պողոսյան, ամբաստանյալ՝ Ա.Տերյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Ա. Զեյթունյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի



266 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Մ.Մանուկյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Ա.Ալեքսանյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 34-268 հոդվածի 3-րդ կետով/ դատաքննության ժամանակ վկաները ներկայացել էին առանց անձը հաստատող փաստաթղթի: Հարցաքննության ժամանակ դատավորը վերջիններիս անձը հաստատված համարեց, այն բանից հետո երբ մեղադրողը հայտարարեց որ ճանաչում է վերջիններիս և հաստատում է որ նրանք հենց վկայակոչված անձինք են:

Փորձաքննություններ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ գլուխը ամբողջությամբ նվիրված է փորձաքննություն նշանակելուն և կատարելուն:

Օրենքը թույլ է տալիս անհրաժեշտության դեպքում նշանակել կրկնակի և լրացուցիչ փորձաքննություններ, լրացուցիչ՝ եթե հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը համաձայն չեն փորձագետի եզրակացության հետ՝ վերջինիս ոչ բավարար չափով պարզ կամ լրիվ լինելու պատճառաբանությամբ, կրկնակի՝ եթե փորձագետի եզրակացությունը հիմնավորված չէ կամ կասկած է հարուցում, կամ ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվել է ոչ հավաստի կամ խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները:

ՀՀ Կոստայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող /դատավոր՝ Մ.Մակյան, մեղադրող՝ Ա.Խանգադյան, ամբաստանյալ՝ Խ.Հովսեփյան ըստ մեղադրանքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածով, 268 հոդվածով, պաշտպան՝ Գ. Խաչատրյան/ քրեական գործի ընթացքում նշանակվել է ստացիոնար դատաբժշկական փորձաքննություն դեռևս 2010 թվականի դեկտեմբերին պաշտպանի միջնորդության հիման վրա, որի կատարումը հանձնարարվեց ՀՀ ԱՆ կից միջգերատեսչական ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովին, որը



24.02.2011 թ-ին կայացրել է եզրակացություն, որի համաձայն՝ Խ.Հովսեփյանի մոտ հայտնաբերվել էր «Օրգանական ծագման անձի խանգարում», սակայն գտնվելով երկարատև դատաքննչական գործողությունների փուլում նրա մոտ առաջացել է «Ծանր սթրեսի ռեակցիա և հարմարվողականության խանգարում», ինչից ելնելով նա իր ներկա հոգեվիճակով չէր կարող ղեկավարել իր գործողությունները, հաշիվ տալ դրանց համար և մասնակցել դատավարական գործողություններին, ուստի խորհուրդ էր տրվել հարկադիր բուժում հատուկ հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում մինչ վերը նշված ժամանակավոր հիվանդագին խանգարված վիճակից դուրս գալը:

Քանի որ նշված եզրակացությունը դատախազության «սրտով չէր» դատարանը՝ անտեսելով պաշտպանական կողմի առարկությունները, բավարարեց մեղադրողի միջնորդությունը և 18.04.2011 թ-ին կայացրեց որոշում լրացուցիչ դատահոգեբուժական փորձաքննություն կատարելու մասին, որի կատարումը հանձնարարվել էր ՀՀ «փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին, դատախազն ու դատարանը անտեղյակ լինելով նման փորձաքննություն իրականացնելու լիազորություն չունենալու մասին, որտեղից գործը հետ ուղարկելուց հետո 07.06.11 թ-ին նոր որոշման հիման վրա լրացուցիչ փորձաքննության կատարումը հանձնարարվեց ՀՀ ԱՆ կողմից ստեղծված հանձնաժողովին:

16.08.11 թ-ին ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում լրացուցիչ դատահոգեբուժական փորձաքննություն կատարվեց և տրվեց եզրակացություն, որի համաձայն Խ.Հովսեփյանը տառապում է «Անձի օրգանական խանգարում» հոգեկան հիվանդությամբ, ներկայումս կարող է ղեկավարել իր գործողությունները, հաշիվ տալ դրանց համար և մասնակցել դատավարական գործողություններին, սակայն տվյալ փորձաքննությունը կատարվել էր դատավարական խախտումներով՝ լրացուցիչ ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու որոշում կայացնելուց հետո, դատարանը որոշում չէր կայացրել ՀՀ ԱՆ կողմից նշված անձանց



որպես փորձագետ ներգրավվելու մասին, ինչպես նաև լրացուցիչ դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ նշված չէր փորձագետների մասնագիտական ստաժը և մեթոդները, որով ղեկավարվել են փորձագետները, պաշտպան Գ.Խաչատրյանը կրկին միջնորդություն ներկայացրեց կրկնակի դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին, որը դատարանը բավարարեց և ներկայումս ամբաստանյալին տեղափոխել են հոգեբուժարան փորձաքննություն իրականացնելու համար:

Հարկ է նշել որ փորձաքննությունների եզրակացությունները ՀՀ-ում դատարանների համար ըստ էության որևէ դեր չեն խաղում, ավելի շուտ ձևական բնույթ են կրում: Նշանակվում են այնքանով որքանով որ այն նախատեսված է օրենքով:

Օրենքը թույլ է տալիս նշանակել լրացուցիչ և կրկնակի փորձաքննություններ սակայն հիմնականում դատարանը «իր ներքին համոզմունքից ելնելով արժանահավատ է» համարում այն եզրակացությունը, որը «ընդունելի» է լինում մեղադրող կողմի համար:

Այնինչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն «փորձագետի եզրակացությունը» համարվում է ապացույց, այնպես ինչպես ասենք իրեղեն ապացույցը, փաստաթղթերը և այլն:

Նույն օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ «դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված **իրենց ներքին համոզմամբ**»:

Բայց կա նաև նույն օրենսգրքի 18-րդ հոդվածը, որը իր էությամբ առավել բարձր է մնացած բոլոր վերը նշված հոդվածներից այն պարզ պատճառով, որ այն վերաբերվում է քրեական դատավարության ՄԿԶՖՈՒՆՔՆԵՐԻՆ, մասնավորապես անմեղության կանխավարկածին: Այն բառացիորեն նշում է հետևյալը «Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ **բոլոր**



կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, **մեկնաբանվում են հոգուտ** մեղադրյալի կամ կասկածյալի:»

Անհասկանալի է, թե այդ ինչն է խանգարում դատարանների ղեկավարվել օրենքով և ոչ թե դատախազության հաճոյանալու ցանկությամբ:

Դատաքննության ժամանակ ամբաստանյալի կողմից նախաքննության ընթացքում իրենց նկատմամբ կիրառված բռնությունների մասին հայտարարություններ

Կրկին համատարած բնույթ կրող մի երևույթ, որի մասին բազմիցս բարձրաձայնվել է, սակայն որևէ շարժ մինչ օրս չի նկատվում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածը նախատեսում է քրեական գործ հարուցելու առիթները, որի 3-րդ մասը ուղղակի մատնանշում է, որ քրեական գործ հարուցելու առիթ է. “հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս”:

Սակայն մոնիտորինգի ենթարկված դատաքննություններից և ոչ մեկում դատարանը որոշում չի կայացրել և նիստի ընթացքում հնչած հայտարարությունների վերաբերյալ նյութեր չի ուղարկել Հատուկ քննչական ծառայություն քննություն անցկացնելու համար:

Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում/դատավոր՝ Ս.Կոստանյան, մեղադրող՝ Տ.Հովհաննիսյան, ամբաստանյալ՝ Ա. Հովհաննիսյան ըստ մեղադրանքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175 հոդվածի 3-րդ մասի 1-րդ կետով/ քննվող քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից հիմնավորվում է, որ Ա.Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել բացառապես դատապարտյալներ Ս. Գասպարյանի և Խ. Մակարյանի հակասական ցուցմունքների հիման վրա,



որոնք դատավարության ընթացքում պատճառաբանել են, որ զրպարտչական ցուցմունքները տվել խոշտանգումների արդյունքում: Ընդ որում, Ս.Գասպարյանի մարմնական վնասվածքները արձանագրվել են “Նուբարաշեն” ՔԿՀ-ի կողմից, սակայն առաջացման պատճառները նշվել են մեկ օր առաջ աստիճաններից և ՁՊՎ-ում քննատեղից ընկնելու հետևանքով: Դատարանը որևէ կերպ չի արձագանքել խոշտանգման վերաբերյալ հայտարարություններին, իսկ նախաքննության մարմինն էլ խախտելով քննչական ենթակայությունը նշված քրեական գործի հետ համատեղ քննել է և որոշել, որ իրենց իսկ կողմից կատարած հանցագործության դեպքը բացակայում է:

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում/դատավոր՝ Ս. Պապոյան, մեղադրող՝ Ս. Հարությունյան, ամբաստանյալ՝ Ս. Հովակիմյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 38-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, պաշտպան՝ Ս. Սաֆարյան, ամբաստանյալ՝ Վ. Քերոբյան՝ ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 38-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, պաշտպան՝ Գ. Հովհաննիսյան/ առաջին իսկ դատական նիստից Ս.Հովակիմյանը դատարանում հայտնել էր, որ իր կողմից տրված ցուցմունքը կորզվել էին խոշտանգումների արդյունքում և այն ամբողջությամբ հորինված ու սուտ են, սակայն դատարանը այդ հայտարարությանը չի գնահատել: Ամբաստանյալները և նրանց պաշտպանները բողոքով դիմել են Հատուկ քննչական ծառայություն և պահանջել են քննություն անցկացնել բռնությունների մասին արված հայտարարությունների վերաբերյալ: Հատուկ քննչական ծառայության իրականացրած քննության արդյունքում բռնության փաստը չի հաստատվել:

Միջնորդությունների քննարկման կարգ և Կալանքի միջնորդություններ

Դատավարությունների ընթացքում համատարած խախտվում է կողմերի մրցակցության սկզբունքը, պաշտպանական կողմի միջնորդությունները



հաճախ մերժվում են առանց որևէ հիմնավոր պատճառաբանությունների, որի հետևանքով դատավարության ընթացքում և դատավճիռ կայացնելիս դատավորները հիմնականում սահմանափակվում են այն ապացույցներով, որոնք տրամադրում է մեղադրող կողմը: Այս երևույթը կրում է համատարած բնույթ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածը սահմանում է կալանքը, որպես խափանման միջոց ընտրելու հիմքերը, համաձայն որի՝

Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց, խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

Կալանավորումը և դրա այլընտրանքային խափանման միջոցը մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցագործության համար, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները:

Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, կասկածյալի կամ մեղադրյալի անձը, տարիքը և առողջական վիճակը, սեռը, զբաղմունքի տեսակը, ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը, գույքային դրությունը, բնակության մշտական վայրի առկայությունը, այլ էական հանգամանքներ:”



ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածի համաձայն՝

“1. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարան՝ խափանման միջոցի այդ տեսակը ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը:

Հելսինկյան Ասոցիացիայի հետ համագործակցող փաստաբաններից հայտնի դարձավ, որ դատարանները բացառիկ դեպքերում է, որ մերժում են քննիչների կողմից ներկայացված կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին և կալանքը երկարացնելու մասին միջնորդությունները: Հիմնականում քննիչների որոշումները անհիմն են և չպատճառաբանված, միջնորդությունները պարունակում են միայն օրենսգրքով սահմանված ստանդարտ ձևակերպումները:

Հիմնականում կալանք նշանակելիս հաշվի չեն առնում օրենքով ոչ ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը, ոչ առողջական վիճակը ոչ էլ օրենքով սահմանված այլ էական հանգամանքներ:

27.12.2011թ. Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում/դատավոր Գ. Պողոսյան, մեղադրյալ՝ Տ.Առաքելյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 258 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, մեղադրյալ՝ Ա. Կարապետյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 1-ին մասով, 258 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, մեղադրյալ՝ Ս. Գևորգյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, մեղադրյալ՝ Դ.Քիրամիջյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով/ խափանման միջոցի ընտրելու



դատաքննությանը Տ.Առաքելյանի պաշտպանը միջնորդել է փոխել պաշտպանյալի խափանման միջոցը կամ նրան գրավի դիմաց ազատ արձակել նշելով, որ Առաքելյանին կալանքի տակ պահելու համար չկան բավարար փաստեր, ինչպես նաև մեղադրող կողմը չի կարող հիմնավորել իր պաշտպանյալին կալանքի տակ գտնվելու անհրաժեշտությունը: Մեղադրողը կալանքի անհրաժեշտությունը հիմնավորող փաստ է ներկայացրել այն, որ «միջադեպի օրը իրենց ունեցած տեսանյութում երևում է, որ Տ.Առաքելյանը արյունոտ վերնաշապիկով է, այնուհետև նա երևում է մերկ, իսկ քիչ անց՝ մաքուր վերնաշապիկով: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ Առաքելյանը ազդեցություն կարող է ունենալ իր ընկերների վրա և խոչընդոտել քննությանը:» Այլ «հիմնավորում» մեղադրողը չի ներկայացրել: Սույն միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելու համար դատավոր Գ.Պողոսյանը 2 ժամով հեռացավ խորհրդակցական սենյակ: Տ.Առաքելյանի կալանքը վերացնելու կամ գրավով փոխելու մասին միջնորդությամբ մերժվեց:

Վերաքննիչ դատարան

Վերջին տարում ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը առավել ակտիվ սկսել է կիրառել վճռաբեկության կարգով վերաքննիչ բողոքների լուծման հարցը: Հարկ է նշել, որ վճռաբեկության կարգով քննության անցկացումը չի հակասում օրենսդրությանը:

Այսպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին կետի

համաձայն

«1. Վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կատարվում է սույն գլխում շարադրված կանոններով, ինչպես նաև վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով:» Սակայն օրենսդիրը քրեական գործի վերաքննության կամ վճռաբեկության կարգով քննելու որոշումը թողել է դատավորի հայեցողությանը, որը հիմնականում արդարացված չէ:



Սակայն մեր խորհին համոզմամբ գործերի քննությունը վճարեկության կարգով լուրջ խոչընդոտներ է ստեղծում գործի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ լուծման հարցում, քանի որ էականորեն սահմանափակվում են մեղադրյալի և պաշտպանական կողմի հնարավորությունները պաշտպանություն կազմակերպելու հարցում:

Առավել անընդունելի է, երբ գործերի քննության վճարեկության կարգ է նշանակվում առանձնապես ծանր և իրենց ծավալով ու բովանդակությամբ բարդ համարվող հանցագործությունների դեպքում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածը նախատեսում է դատական սխալներից տուժածների իրավունքների վերականգնումը: Այստեղից հետևում է, որ օրենսդիրը ենթադրում է, որ դատական համակարգում կարող է տեղի ունենալ նաև դատական սխալներ: Եվ դատական սխալների բացառման կամ գոնե նվազագույնի հասցնելու նպատակով էլ պետք է հնարավորություն ստեղծվի որպեսզի վերաքննիչ դատարանում ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական գործերը լավեն վերաքննության կարգով:

Հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը որ ՀՀ-ում փաստացի գործում է ոչ թե եռաստիճան այլ երկաստիճան դատական համակարգ: ՀՀ վճարեկ դատարանը կարելի է այլևս չհամարել բարձրագույն դատական ատյան, քանի որ այն իր հայեցողությամբ է գործը վարույթ ընդունում, իսկ գործը վարույթ ընդունելու մասին մերժման դեպքում էլ չի ներկայացնում որևէ հիմնավորում կամ պատճառաբանություն:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը/դատավորներ Գ.Ավետիսյան, Ե.Դարբինյան, Ս.Չիչոյան, մեղադրողներ՝ Կ.Փիլոյան, Ա.Դավթյան, պաշտպաններ Գ. Խաչատրյան, Ն. Կարապետյանց, Ռ.Բալոյան, ամբաստանյալներ՝ Վ. Բաղդասարյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ , 10-րդ կետերով, 235-րդ հոդվածի 1-ին և 258-րդ հոդվածի 4-րդ մասերով, Հ. Սանդալջյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Ա. Փոխարյան՝ ՀՀ

քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով/ որոշում է կայացրել քրեական գործը քննել վճռաբեկության կարգով: Այս գործը 2011 թ-նի ամենահինչեղ գործերից մեկն էր, քանի որ այս գործով ամիսներ շարունակ դիտավորյալ սպանության մեղադրանքը առաջադրված է եղել Արաբկիր վարչական շրջանի թաղապետ Հ.Շահինյանի քրոջ որդուն՝ Արսեն Ահարոնյանին, ապա գործում եղած ապացույցների համաձայն թաղապետ Հ.Շահինյանի ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի հետ հանդիպումից հետո գործում տեղի է ունեցել կտրուկ շրջադարձ և դիտավորյալ սպանության մեղադրանքը առաջադրվել է Վոսմ Բաղդասարյանին:

Այս գործի հետ կապված մեղադրանք է առաջադրվել նաև ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության նախկին պետ Հովհաննես Թամամյանին, որը իբր չարաշահել է պաշտոնական դիրքը՝ որի հետևանքով Վ. Բաղդասարյանը գերծ է մնացել քրեական պատասխանատվությունից:

18.10.2011թ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում/դատավոր՝ Ա.Դանիելյան, Մ.Աղամանյան, Մ.Ռեհանյան, մեղադրող՝ Ա. Մելքոնյան, ամբաստանյալ՝ Հ. Սահակյան ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 2,3,4 կետերով, պաշտպան Ն. Սարգսյան/ գործը քննվեց վճռաբեկության կարգով: Մեղադրյալը իրեն մեղավոր չճանաչեց և հայտնեց, որ իրեն նախաքննության ընթացքում ծեծի են ենթարկել և ստիպել գրել ոստիկանների ասածը: Մեղադրողը միջնորդեց բողոքը մերժել և դատավճիռը թողել անփոփոխ ցմահ ազատազրկում: Դատարանը հեռացավ խորհրդակցական սենյակ վճիռ կայացնելու: Վճիռը հրապարակվեց 15 րոպեից:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության

արդյունավետ միջոցների իրավունք: Քրեական գործերով կարող են ներգրավվել միայն արտոնագրված փաստաբաններ:

08.12.2011 թ-ին «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ են տեղի ունեցել, համաձայն որի պետք է ստեղծվի «Փաստաբանական դպրոց», որը ավարտելուց հետո ունկնդիրը կարող է մասնակցել որակավորման քննություններին և ստանալ արտոնագիր: Մինչև փաստաբանական դպրոցի ստեղծումը գործում է փաստաբանական գործունեություն իրականացնելու համար արտոնագիր ստանալու հին կարգը:

Փաստաբանների գործունեությանը խոչընդոտումը շարունակվում է թե՛ ոստիկանությունում, թե՛ դատախազություններում և թե՛ դատարաններում: Հիմնականում նշված մարմինները իրենց անօրինականությունները իրականացնելու համար, քաղաքացիներին փորձում են համոզել, որ փաստաբանի ծառայությանը պետք չէ դիմել:

Լինում են դեպքեր, երբ փաստաբան են առաջարկում նախաքննության մարմինները, և հիմնականում դրանք լինում են նախաքննության մարմինների հետ համագործակցող անբարեխիղճ փաստաբաններ, որոնց օգնությամբ քննիչները ստանում են իրենց համար ցանկալի ցուցմունքները:

Այսպիսով, վերլուծելով կատարված մոնիտորինգի արդյունքները կարելի է հանգել այն եզրակացության որ Հայաստանում դատական համակարգը անկախ չէ:

Բացակայում է հավասարության սկզբունքը մեղադրող և պաշտպանական կողմերի միջև, մեղադրող կողմը գերիշխում է դատարաններում: Մեծամասամբ դատարանները դատավճռի կամ որոշման տեսքով կրկնում են դատախազների և քննիչների կայացրած որոշումները: Դատարանների անկախության բացակայության, ինչպես նաև վախի ու անորոշության արդյունք է այն, որ ոչ բարեփոխումները, ոչ ներդրումները, ոչ կոռուպցիայի դեմ ակտիվ պայքարը չեն հանգեցնում ցանկալի գոնե նվազագույն արդյունքների:



ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ(ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 1-ն մասով և 235 հոդվածի 1-ին մասով)

Սույն գործը կազմվել է դատապարտյալ Աշոտ Հակոբյանի քրոջ կողմից վճռաբեկ դատարան դիմելուց հետո տրամադրված դատարանների կողմից կայացված դատավճռի, որոշումների, փորձաքննությունների եզրակացությունների և այլ գրավոր նյութերի հիման վրա:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

20.12.2008թ. ՀՀ Ոստիկանության Նոր-Նորքի քննչական բաժնի կողմից հարուցված թիվ 17133408 քրեական գործի շրջանակներում Աշոտ Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 1-ին մասով և 235 հոդվածի 1-ին մասով, այն բանի համար, որ նա 2008թ. դեկտեմբերի 20-ին 03:30 սահմաններում Երևան քաղաքի Դավիթ Մալյան 4 հասցեում գործող բիլիարդի խաղասրահում վիճաբանել է Վարուժան Հովհաննիսյանի հետ, որի ընթացքում մեկ ուրիշին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ ապօրինի ձեռք բերված և իր մոտ պահված «Մակարով» տեսակի ատրճանակից կրակել է Վ. Հովհաննիսյանի կրծքավանդակի շրջանին: Կրակոցը ունեցել է միջանցիկ ընթացք, թափանցել է որովայնի խոռոչ վնասել է լյարդը, լայնական հաստ աղին ստամոքսի հաստ աղիքային կապանը, առաջ բերելով ներքին արյունահոսություն և տարածուն կղանքային պերետոնիտ, պատճառելով առողջությանը ծանր վնաս կյանքին վտանգ սպառնացող, սակայն իր կյանքից անկախ հանգամանքներում մինչև վերջ չի կարողացել իրականացնել իր հանցավոր դիտավորությունը, քանի որ Վ.Հովհաննիսյանը տեղափոխվել է հիվանդանոց և ստացել է բժշկական օգնություն, իսկ Ա. Հակոբյանը դեպքի վայրից դիմել է փախուստի:

17.06.2009թ-ին Ա.Հակոբյանի վերաբերյալ թիվ 17133408 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որը դատարանում



մուտքագրվել է 18.08.2009 թ-ին /դատավոր Ս. Ուզունյան, մեղադրող՝ Ա.Մկրտչյան, պաշտպաններ՝ Կ.Քամալյան, Ա. Փարսադանյան/:

Դատարանը 22.09.2009թ.-ի որոշմամբ քրեական գործը ընդունել է վարույթ, իսկ 06.07.2009 թ-ի որոշմամբ նշանակել է դատաքննություն 20.07.2009 թ-ին: Դատարանը 25.06.2009թ.-ին նշանակել է դատահոգեբանական փորձաքննություն, իսկ գործի վարույթը կասեցրել մինչև փորձաքննության ավարտը:

05.03.2010թ-ին ստացել է փորձագետի թիվ 09-2252 եզրակացությունը: Դատարանը 19.07.2010 թ-ին նշանակել է կրկնակի դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր ստացիոնար փորձաքննություն, իսկ գործի վարույթը կասեցրել մինչև փորձաքննության ավարտը:

23.11.2010թ-ին ստացվել է կրկնակի դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր ստացիոնար փորձաքննության թիվ 179 եզրակացությունը:

Դատաքննության ընթացքում հետազոտվել են մի շարք ապացույցներ: Մեղադրյալ՝ Աշոտ Հակոբյանը, իրեն մեղավոր է ճանաչել մասնակիորեն և ցուցմունք տվել այն մասին, որ դեպքից երկու օր առաջ ինքը այցելել է մոր գերեզմանին և այնտեղ գտել «Մակարով» տեսակի ատրճանակ, այն պահել է իր մոտ հետագայում հանձնելու համար: Դեպքի օրը դեկտեմբերի 20-ի գիշերը ժամը 02-ի սահմաններում ընկերոջ՝ Կ. Ղազարյանի առաջարկով, գնացել են «ԶԵՏ ԲԵՏՏԱ» ՍՊԸ –ին պատկանող բիլիարդի խաղասրահ, որտեղ եղել են տուժող՝ Վարուժան Հովհաննիսյանը, և այլ անձինք: Հակոբյանը և ընկերը նույնպես նստել են սեղանի շուրջ սակայն կոնյակ չեն խմել: Երբ խմիչքը վերջացել է տուժող Վարուժան Հովհաննիսյանը՝ դիմելով Աշոտ Հակոբյանին, ասել է. «Գնա կոնյակ ու ուտելիք բեր:» Ինչին Հակոբյանը պատասխանել է. «Ես քո համար երեխա չեմ, ուզում ես գումարը ես տամ դու գնա բեր», որից հետո տուժող Հովհաննիսյանը իր համար անսպասելի արմունկով հարվածել է իր դեմքին՝ քթի շրջանում, ուժեղ ցավից Հակոբյանը վայր է ընկել գետնին, երկու ձեռքերով բռնել գլուխը՝ փորձելով

պաշտպանվել հարվածներից: Այդ պահին տուժող Հովհաննիսյանը իրեն մայր է հայիոյել, որը ինքը առավել ցավագին է տարել, քանի որ իր հանգուցյալ մոր քառասունքի օրերն են եղել, որից հետո ինքը չի հասկացել, թե ինչ է կատարվում իր հետ և թե ինչպես է ինքը գոտկատեղից հանել ատրճանակը ու կրակել չի հիշում: Դրանից հետո ինքը հեռացել է խաղասրահից: Դուրս գալով խաղասրահից գնացել է շենքի հետևի կողմը և ճանապարհին ատրճանակը շպրտել է աղբարկղը և իրեն շատ վատ է զգացել, ոտքերը թուլացել են և նույնիսկ փսխել է: Ինքը մի կերպ զանգահարել է քրոջը, որը եկել է և իրեն տարել է տուն:

Տուժող Վարուժան Հովհաննիսյանը ցուցմունք տվեց այն մասին, որ դեպքի օրը ընկերների հետ գտնվել է «ԶԵՏ ԲԵՏՏԱ» ՄՊԸ-ին պատկանող բիլիարդի խաղասրահում, և կոնյակ են օգտագործել: Մոտ երկու ժամ հետո խաղասրահ են եկել նաև Հակոբյանը ընկերոջ հետ:

Երբ խմիչքը վերջացել է ինքը՝ դիմելով Աշոտ Հակոբյանին, ասել է. «Գնա կոնյակ բեր»: Հակոբյանը իր պահանջը չի կատարել, որի հետևանքով իրենց միջև վիճաբանություն է ծագել և ինքը հարվածել է Հակոբյանի դեմքին, ծեծի ենթարկել նրան և մայր հայիոյել, որից հետո Ա.Հակոբյանը ատրճանակով երկու անգամ կրակել է տարբեր ուղղություններով, իսկ երկրորդ կրակոցը կալել է իր կրծքավանդակի շրջանին, որից հետո ինքը ընկել է գետնին և կորցրել գիտակցությունը:

Վ. Հովհաննիսյանը հայտնել է, որ ինքը ամբաստանյալի նկատմամբ քաղ հայցի կամ այլ պահանջ չունի և գիտակցում է, որ իր գործողությունների հետևանքով է Ա.Հակոբյանը հասել այդ վիճակին: 10.02.2010թ. Վ.Հովհաննիսյանը դիմում է ներկայացրել դատարանին, ուր նշել է «Ա.Հակոբյանի նկատմամբ որևէ պահանջ բողոք չունեմ: Խնդրում եմ Հակոբյանին դատարանի դահլիճից ազատ արձակել, քանի որ նա հանցագործությունը կատարել է իմ անօրինական գործողությունների արդյունքում»:



Ուսումնասիրվել է նաև փորձագետի թիվ 09-2252 դատահոգեբանական փորձաքննություն եզրակացությունը, համաձայն որի. «Աշոտ Հակոբյանը որևէ հոգեկան հիվանդությամբ չի տառապել և չի տառապում, նրա մոտ հայտնաբերվում են փսիխոպաթիկ գծեր: Ա.Հակոբյանը կարող էր և կարող է հաշիվ տալ իրեն իր գործողությունների համար, ինչպես իրավախախտումը կատարելու պահին այնպես էլ ներկայումս: Ուստի Աշոտ Վանիկի Հակոբյանին իրեն մեղսագրվող արարքի նկատմամբ հարկ է ճանաչել մեղսունակ: Աշոտ Հակոբյանը հանցագործությունը կատարելու պահին չի գտնվել ֆիզիոլոգիական աֆեկտ վիճակում, նա գտնվել է հուզական լարված վիճակում, որը կարող էր էապես ազդել նրա վարքի և գիտակցության վրա»:

Ուսումնասիրվել է նաև փորձագետի թիվ 179 կրկնակի դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր ստացիոնար փորձաքննության եզրակացությունը, համաձայն որի. «Իր ներկա հոգեկան վիճակով նա կարող է մասնակցել դատաքննչական գործողություններին: Սակայն Աշոտ Վանիկի Հակոբյանը արարքը կատարելու պահին գտնվել է ֆիզիոլոգիական աֆեկտ վիճակում: Դրա մասին են վկայում ֆիզիոլոգիական աֆեկտին բնորոշ եռափուլային ընթացքի առկայությունը»:

06.05.2011թ. դատավճռով դատարանը մեղավոր է ճանաչել Աշոտ Վանիկի Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 1-ն մասով և 235 հոդվածի 1-ին մասով: Ա.Հակոբյանի նկատմամբ վերջնական պատիժ նշանակելով ազատազրկում 10 տարի ժամկետով:

ՀՀ վերաքննիչ դատարանը Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2011 թ. դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ:

ՀՀ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունել:



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՏԵՍԱԿԵՏԸ

Այն որ գործի քննությունը ի սկզբանե տարվել է սխալ ճանապարհով, հիմնավորվում է նրանով, որ նախաքննության մարմինը գնահատական չի տվել դեպքին նախորդող տուժողի ապօրինի գործողություններին, այն է հարբած վիճակում տուժող Վարուժան Հովհաննիսյանը փորձել է նվաստացնել Աշոտ Հակոբյանին, ապա հարվածել է արմունկով նրա դեմքին տապալել է գետնին շարունակելով ծեծի ենթարկել, ինչից հետո սեռական բնույթի հայհոյանք տվել դեպքից շաբաթներ առաջ մահացած մոր հասցեին: Այս ամենից հետո միայն Աշոտ Հակոբյանը կրակել է տուժողի ուղղությամբ: Այս փաստը հաստատում է նաև ինքը տուժողը: Վերլուծելով դեպքին նախորդող իրադարձությունները կարծում ենք, որ Աշոտ Հակոբյանը արարքում ամբողջանում է ՀՀ քրեական օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մասով (**«Հոգեկան խիստ հուզմունքի վիճակում առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը»**) նախատեսված հանցագործության հանցակազմի հատկանիշները ու նրան պետք է մեղադրանք առաջադրվեր այդ հոդվածով:

Մեր կարծիքով, սույն գործում առկա է մեկ այլ սխալ ևս: Առավել ուշագրավ է այն, որ դատաքննության ընթացքում կատարվել է 2 փորձաքննություն, որոնցից առաջինը եկել է այն եզրահանգման, որ. «Հակոբյանը հանցագործության կատարման պահին չի գտնվել ֆիզիոլոգիական աֆեկտի վիճակում, նա գտնվել է հուզական լարված վիճակում, որը կարող էր էապես ազդել նրա վարքի և գիտակցության վրա»:

Իսկ 2-րդը հանգել էր այն եզրակացության, որ «Հակոբյանը արարքը կատարելու պահին գտնվել է ֆիզիոլոգիական աֆեկտի վիճակում»:

Առաջին փորձաքննությանը մասնակցող մասնագետներն ի թիվս այլ օգտագործված մեթոդական և մասնագիտական գրականության իրենց անցկացրած փորձաքննության ընթացքում օգտվել են հայտնի ակադեմիկոս Էլդա Գրինի «Իրավաբանական հոգեբանություն» գրքից, իսկ 2-րդ փորձաքննությանը մասնակցել է անձամբ ինքը՝ Էլդա Գրինը:



Առաջին փորձաքննության տրված եզրակացությունը հասկանալի չի եղել կողմերի համար ու նրանց միջնորդությամբ, դատարան է հրավիրվել «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ հոգեբանական փորձաքննությունների բաժնի պետ՝ Մարինե Պետրոսյանը, պարզաբանումներ տալու համար, որը չի կարողացել հիմնավորել իրենց կողմից տրված եզրակացությունը: Դեռ ավելին խուսափել է պատասխանել պաշտպանական կողմից տրված այն հարցին, թե արդյոք «աֆեկտ» տերմինը չի օգտագործվել, քանի որ դատախազության կողմից ճնշում է գործադրվել վերջիններիս

վրա:

Ի տարբերություն Մարինե Պետրոսյանի, 2-րդ փորձաքննությանը մասնակցած Էլդա Գրինը, որը նույնպես հրավիրվել էր դատարան, հիմնավորել է իրենց կողմից ներկայացրած եզրակացությունները, և պնդել, որ «Հակոբյանը արարքը կատարելու պահին գտնվել է ֆիզիոլոգիական աֆեկտ վիճակում»:

Եվ այս պարագայում դատարանը պարտավոր էր գնահատել փորձաքննության եզրակացությաունը՝ որպես ապացույց: Դժվար է ասել թե ինչ տրամաբանությամբ է գործել Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս.Ուզունյանը, սակայն 06.05.2011թ. դատավճռով ամբաստանյալի մոտ հանցագործությունը կատարելու պահին «ֆիզիոլոգիական աֆեկտ» լինելու հանգամանքը հաշվի չի առնվել:



ԱՎԵՏԻՔ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ՀՀ քրեական օրենսգրքի 175 հոդվածի 3 մասի 1 կետով)

Սույն գործը կազմվել է Հեղինակյան ասոցիացիայի փաստաբաններ Գ.Խաչատրյանի և Ն.Կարապետյանցի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն: Նախաքննության ավարտից հետո Ա.Հովհաննիսյանի ծնողները դիմել են Հեղինակյան ասոցիացիա իրենց որդու պաշտպանությունը իրականացնելու խնդրանքով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ավետիք Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ զենքի գործադրմամբ, առանձնապես խոշոր չափերի գույք բացահայտ հափշտակելու նպատակով, նախնական համաձայնության գալով Ս.Գասպարյանի և Խ.Մակարյանի հետ, 2009թ. դեկտեմբերի 16-ին գնացել են Վ.Ամիրխանյանին պատկանող բնակարանի մուտքի դռան մոտ, որտեղ Խ.Մակարյանը տվել է դռան զանգը և սպասել դրսում: Վ.Ամիրխանյանի կողմից դուռը բացելուց հետո հարցրել, իբր վարձով բնակարան է փնտրում, որի ընթացքում Ա.Հովհաննիսյանն ու Ս.Գասպարյանն ապօրինի մուտք են գործել բնակարան, սակայն հանդիպելով բնակարանատեր Վ.Ամիրխանյանի դիմադրությանը, նրա կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով՝ Ս.Գասպարյանն իր մոտ ապօրինի կերպով պահվող, հրազեն հանդիսացող «Մակարով» տեսակի ատրճանակի բռնակով հարվածներ է հասցրել Վ.Ամիրխանյանի դեմքի և գլխի շրջաններին, որի ընթացքում ատրճանակից կրակոց է արձակել առաստաղի ուղղությամբ: Հարվածների հետևանքով Վ.Ամիրխանյանի առողջությանը՝ գլխուղեղի աջ կիսագնդի շրջանի ենթասուր սուբդորալ հեմատոմայի, աջ ակնակապճի շրջանի փափուկ հյուսվածքների արյունահավաքի, աջից ստոր ակնակապճային շրջանի և քթի շրջանի քերծվածքների, ձախ ստորին կոպի շրջանի արյունազեղման ձևով պատճառվել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս, որից հետո տուժողի կողմից օգնություն կանչելու

ձայներից և բողոքողներից, առանց որևէ գույք հափշտակելու երեքով դիմել են փախուստի:

Դատարանը դատավճիռ կայացնելիս արժանահավատ է համարել վկաներ դատապարտյալներ Ս.Գասպարյանի և Խ.Մակարյանի կողմից նախաքննության ընթացքում տված ցուցմունքների միայն մի մասը, քանի որ դրանք ըստ դատարանի դրանք իրենց մանրամասներով համապատասխանում են տուժող Ամիրխանյանի ցուցմունքներին և գործի մյուս տվյալներին:

Դատարանը սխալ գնահատելով վկաներ՝ Ն.Գալստյանի և Ս.Միքայելյանի ցուցմունքները/որոնք հաստատում են Ա.Հովհաննիսյանի այլուրեքությունը/ և դրանք խեղաթյուրելով, անարժանահավատ է համարել Ն.Գալստյանի և Ս.Միքայելյանի տված ցուցմունքները, այն մասին, որ դեպքի ամբողջ օրը տեսել են ամբաստանյալին տանը, և դատաքննության ընթացքում տրված ցուցմունքները գնահատել, որպես ամբաստանյալ Ա.Հովհաննիսյանին քրեական պատասխանատվությունից ազատելու նպատակով:

Դատարանը արժանահավատ չի համարել դատապարտյալներ Ս.Գասպարյանի և Խ.Մակարյանի կողմից նախաքննության ընթացքում տված ցուցմունքները, որոնցում վերջիններս ցուցմունք են տվել այն մասին, որ Հովհաննիսյանը ներկա չի եղել ավագակային հարձակում կատարելու ժամանակ, իսկ նրա դեմ զրպարտչական ցուցմունքները տվել են խոշտանգումների հետևանքով:

Դատարանը գնահատելով Ա.Հովհաննիսյանի բջջային հեռախոսահամարի մուտքային և ելքային զանգերի և դրանք սպասարկող կայանների տեղակայման հասցեների վերծանումները, որը ցույց է տալիս հեռախոսի գտնվելու վայրը, հաստատված է համարել, որ ամբաստանյալ՝ Ա.Հովհաննիսյանը, 2009թ. դեկտեմբերի 16-ի առավոտյան իր բնակության վայրից՝ Երևանի Հարավ-Արևմտյան թաղամասից հեռացել է ժամը 11-12-ից գտնվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի տարածքում՝ տուժող Վ.Ամիրխանյանի բնակության վայրը սպասարկող կայարանների

ծածկություն, իսկ ժամը 12:51-ից ամբաստանյալը անջատել է հեռախոսը: Նույն օրը դեկտեմբերի 16-ին ժամը 21:20-ին, երբ Ա.Հովհաննիսյանը միացրել է բջջային հեռախոսը, արդեն գտնվել է Մասիսի քաղաքը սպասարկող կայանի ծածկություն, իսկ գտնվել իր բնակության վայրը սպասարկող կայանի ծածկություն:

Վերը նշված “ապացույցներով” դատարանը ամբաստանյալ Ավետիք Հովհաննիսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 175 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և այդ հոդվածի սանկցիայով Ավետիք Հովհաննիսյանին դատապարտել ազատազրկման 10 տարի:

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՏԵՍԱԿԵՏԸ

Դատարանը սույն գործը քննելիս դրնորել է խիստ կողմնակալ մոտեցում, օբյեկտիվ չի գնահատել գործում եղած փաստերը և հաստատել դատախազության կողմից ներկայացված անհիմն մեղադրանքը:

Դատավճռի հիմքում դրված և ոչ մի ապացույց չի հիմնավորում Ա.Հովհաննիսյանի մեղքը: Դատարանը Հովհաննիսյանին մեղսագրված հանցանքը հաստատված է համարել նաև դեպքի վայրի զննության, դիմակը հայտնաբերելու, հեռախոսահամարի մուտքային և ելքային զանգերի և նրա զանգերը սպասարկած կայանների տեղակայման հասցեների վերծանումներով, ինչպես նաև ատրճանակը, երկու գնդակը, պարկուճը և դիմակի ձևափոխած սպորտային գլխարկն իրենք ապացույցներ ճանաչելու որոշումներով:

Նշված փաստերից ոչ մեկը որևէ կերպ չի առչվում Ա.Հովհաննիսյանի հետ և այդ իսկ պատճառով չի կարող հիմնավորել վերջինիս մեղքը:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից հիմնավորվում է, որ Ա.Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել բացառապես դատապարտյալներ Ս.Գասպարյանի և Խ.Մակարյանի հակասական ցուցմունքների հիման վրա, որոնք դատավարության ընթացքում պատճառաբանել են, որ զրպարտչական ցուցմունքները տվել

խոշտանգումների արդյունքում: Ընդ որում, Ս.Գասպարյանի մարմնական վնասվածքները արձանագրվել են “Նուբարաշեն” ՔԿՀ-ի կողմից, սակայն առաջացման պատճառները նշվել են մեկ օր առաջ աստիճաններից և ՁՊՎ-ում քնելատեղից ընկնելու հետևանքով: Դատարանը որևէ կերպ չի արձագանքել խոշտանգման վերաբերյալ հայտարարություններին, իսկ նախաքննության մարմինն էլ խախտելով քննչական ենթակայությունը նշված քրեական գործի հետ համատեղ քննել է և որոշել, որ իրենց իսկ կողմից կատարած հանցագործության դեպքը բացակայում է:

Գասպարյանի վնասվածքների վերաբերյալ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Սակայն նախաքննության մարմինը որևէ գնահատական չի տվել փորձագետի եզրակացությանը այն մասին, որ “քիչ հավանական է, որ Ս.Գասպարյանի վնասվածքները առաջանային քնելատեղից վայր ընկնելու հետևանքով”:

Դատարանը արժանահավատ չի համարել վկա Ն. Գալստյանի դատաքննության ընթացքում տրված ցուցմունքը, այն մասին 2009թ. դեկտեմբերի 16-ին ժամը 17-ից հետո գնացել է Ֆեոդոսիա Հովհաննիսյանի տուն, գումար հանձնելու համար և շուրջ երկու-երեք ժամ մնացել է նրա տանը, որտեղ եղել է նաև Ա. Հովհաննիսյանը և տանից չի բացակայել, և որ ինքն այդ օրը հիշում է, քանի որ եղել է գումարը բաժանելու օրը:

Դատարանը արժանահավատ չի համարել վկա Ս.Միքայելյանի ցուցմունքը այն մասին որ 2009թ. դեկտեմբերի 16-ին առավոտյան ժամը մոտ 11:00 մինչև ուշ երեկո եղել է Ավետիք Հովհաննիսյանի տանը և որ Հովհաննիսյանը տանից չի բացակայել:

Հարկ է նշել, որ վկաներ Ս.Միքայելյանը և Ն.Գալստյանը դատաքննության ընթացքում բազմիցս նշել են նաև, որ նախաքննության ընթացքում վերջիններիս վրա հոգեբանական ճնշում է գործադրվել քննիչների կողմից: Քննիչները ահաբեկել են, որ եթե վկաները հրաժարվեն ցանկալի ցուցմունք տալ, ապա նախքննության մարմին կբերվեն նաև նրանց ամուսինները և



զավակները: Դատարանը վերջիններիս հայտարարություններին նույնպես որևէ կերպ չարձագանքեց:

Դատարանը արժանահավատ չի համարել վկաներ նույն գործով արդեն դատապարտյալներ Ս.Գասպարյանի և Խ.Մակարյանի ցուցմունքները այն մասին, որ Ա.Հովհաննիսյանը իրենց հետ դեպքի վայրում ներկա չի եղել և որ իրենց նախաքննության ժամանակ ծեծի և խոշտանգման արդյունքում են ստիպել գրել զրպարտչական ցուցմունքներ:

Դատարանը հաշվի չի առել փորձագիտական եզրակացությունը, համաձայն որի հայտնաբերված դիմակի վրայի քրտինքի հետքերը չեն համապատասխանում 3 մեղադրյալներից և ոչ մեկին:

Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք: Այս դեպքում ևս ՀՀ վերաքննիչ դատարանում գործի լսումը նշանակվել է վճռաբեկության կարգով:



ԽԱՉԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ (ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 2-րդ մասի 2 կետով, 266 հոդվածի 4-րդ մասով և 268 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով)

2010թ-ին ՔԿՀ-ներում մոնիտորիզ իրականացնելու ընթացքում Հեղինակյան ասոցիացիայի ղիտորդական խմբին ղիմել են Խ.Հովսեփյանը և Ա.Գևորգյանը, խնդրելով իրականացնել իրենց պաշտպանությունը: Նյութը կազմվել է Հեղինակյան ասոցիացիայի փաստաթան Գ.Խաչատրյանի կողմից տրամադրված նյութերի հիման վրա:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարությամբ գտնվող Խաչիկ Հովսեփյանի նկատմամբ հարուցված քրեական գործով մարմնական վնասվածքներ են արձանագրվել “Նուբարաշեն” ՔԿՀ-ի կողմից, բայց թե Խ.Հովսեփյանի, թե Ա.Գևորգյանի մարմնական վնասվածքների առաջացման պատճառ է նշվել բերման ենթարկելուց մեկ օր առաջ տան մոտ սայթաքելու և վայր ընկնելը:

Խ.Հովսեփյանի նկատմամբ դատավարությունը դեռ չի ավարտվել, գործի քննության ձգձգման պատճառը ստացիոնար դատաբժշկական փորձաքննություն իրականացնելու պատճառն է, մասնավորապես՝ 2010 թվականի դեկտեմբերին Խ.Հովսեփյանի պաշտպան Գ.Խաչատրյանի միջնորդության հիման վրա նշանակվեց դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվեց ՀՀ ԱՆ կից միջգերատեսչական ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովին՝ “Հոգեբուժական բժշկական կենտրոն” ՓԲԸ բաժնի վարիչ-փորձագետ՝ Ս.Թադևոսյանի նախագահությամբ, ՀՀ ոստիկանության բժշկական վարչության պետ, բ/ծ գնդապետ, բժիշկ-փորձագետ՝ Վ.Մովսիսյանի, “Դատապարտյալների հիվանդանոց” ՔԿՀ հոգեբույժ-փորձագետ՝ Ա.Սուքիասյանի, “Հոգեբուժական բժկական կենտրոն” ՓԲԸ Նուբարաշեն հոգ.կլինիկայի հոգեբույժ-փորձագետ՝ Վ.Բաբայանի և “Հոգեբուժական բժկական կենտրոն” ՓԲԸ Նուբարաշեն հոգ.կլինիկայի ստացիոնար ԴՀՓ-ի բաժնի վարիչ, հոգեբույժ-



փորձագետ՝ Ա.Ղահրամանյանի կազմով, որոնք 24.02. 11 թ-ին կայացրել են եզրակացություն, որի համաձայն՝ Խ.Հովսեփյանի մոտ հայտնաբերվել էր “Օրգանական ծագման անձի խանգարում”, սակայն գտնվելով երկարատև դատաքննչական գործողությունների փուլում նրա մոտ առաջացել է “Ծանր սթրեսի ռեակցիա և հարմարվողականության խանգարում”, ինչից ելնելով նա իր ներկա հոգեվիճակով չէր կարող ղեկավարել իր գործողությունները, հաշիվ տալ դրանց համար և մասնակցել դատավարական գործողություններին, ուստի խորհուրդ էր տրվել հարկադիր բուժում հատուկ հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում մինչ վերը նշված ժամանակավոր հիվանդագին խանգարված վիճակից դուրս գալը:

Քանի որ նշված եզրակացությունը դատախազության “սրտով չէր” դատարանը՝ անտեսելով պաշտպանական կողմի առարկությունները, դատարանը բավարարեց մեղադրողի միջնորդությունը և 18.04.2011 թ-ին կայացրեց որոշում լրացուցիչ դատահոգեբուժական փորձաքննություն կատարելու մասին, որի կատարումը հանձնարարվել էր ՀՀ “փորձաքննությունների ազգային բյուրոյին” ՊՈԱԿ-ին, որը թերևս նման փորձաքննություն իրականացնելու լիազորություն չունեի /դատախազն ու դատարանը տեղյակ չէին դրա մասին/, այնուհետև ՀՀ “փորձաքննությունների ազգային բյուրոյին” ՊՈԱԿ-ից գործը հետ ուղարկելուց հետո 07.06.11 թ-ին նոր որոշման հիման վրա լրացուցիչ փորձաքննության կատարումը հանձնարարվեց ՀՀ ԱՆ կողմից ստեղծված հանձնաժողովին:

Անհայտ պատճառներով գործը առողջապահության նախարարությունից վերադառնալուց հետո, վերջապես կազմվեց հանձնաժողով և 16.08.11 թ-ին ՀՀ ԱՆ “Հոգեբուժական բժշկական կենտրոն” ՓԲԸ-ի Ավանի կլինիկայի ղեկավար՝ Ա.Հակոբյանի նախագահությամբ, ՀՀ ԱՆ “Հոգեբուժական բժշկական կենտրոն” ՓԲԸ-ի Ավանի կլինիկայի դիսպանսերային բաժանմունքի վարիչ՝ Լ.Խաչատրյանի և ՀՀ ԱՆ “Հոգեբուժական բժշկական



կենտրոն” ՓԲԸ-ի Նուբարաշենի կլինիկայի բաժնի վարիչ՝ Ջ.Հարությունյանի կազմով լրացուցիչ դատահոգեբուժական փորձաքննություն կատարվեց և տրվեց եզրակացություն, որի համաձայն Խ.Հովսեփյանը տառապում է “Անձի օրգանական խանգարում” հոգեկան հիվանդությամբ, ներկայումս կարող է ղեկավարել իր գործողությունները, հաշիվ տալ դրանց համար և մասնակցել դատավարական գործողություններին, իսկ այն հարցին՝ թե Խ.Հովսեփյանը ներկայումս մեղսունակ, սահմանափակ մեղսունակ թե անմեղսունակ է հարցին պատասխան չի տրվել, տեղին չլինելու պատճառաբանությամբ:

Քանի որ լրացուցիչ ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու որոշում կայացնելուց հետո, դատարանը որոշում չէր կայացրել ՀՀ ԱՆ կողմից նշված անձանց որպես փորձագետ ներգրավվելու մասին, որը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին, և առանց այդ որոշման կատարվել էր փորձաքննություն, ինչպես նաև լրացուցիչ դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ նշված չէր փորձագետների մասնագիտական ստաժը և մեթոդները, որով ղեկավարվել են փորձագետները, պաշտպան Գ.Խաչատրյանը միջնորդություն ներկայացրել կրկնակի դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին, որը դատարանը բավարարել է: Կրկնակի դատահոգեբուժական փորձաքննությունը իրականացվելու է 09.12.2012 թ-ին:



ՎԱՀԵ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ(ՀՀ քրեական օրենսգրքի 117 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3 կետով)

Սույն գործը կազմվել է դատապարտյալ Վահե Սանթրոսյանի հարազատների կողմից ՀՀ վերաքննիչ դատարան դիմելուց հետո տրամադրված դատարանի կողմից կայացված դատավճռի և այլ գրավոր նյութերի հիման վրա:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

18.02.2011թ-նի Տավուշի մարզի քննչական բաժնի Դիլիջանի քննչական բաժամունքի քննիչ Գ.Ավետիսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով հարուցվել է թիվ 36100511 քրեական գործը:

21.02.2011թ-ն որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով Վահե Սանթրոսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

25.02.2011թ. առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետերով Սանթրոսյանը որպես մեղադրյալ է ներգրավվել այն բանի համար, որ նա նախկինում 2 անգամ ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի հատկանիշներով դատապարտված լինելով դատվածությունը չմարած, 2011թ-ի 9-ից 10-ը ընկած ժամանակահատվածում, նախնական հանցավոր համաձայնության գալով համաքաղաքացի Գ.Ավետիսյանի հետ լուսամուտը բացելու միջոցով մուտք է գործել Գ.Ալիխանյանի տուն և այնտեղից գողացել խոշոր չափի շուրջ 887000ՀՀ դրամ արժողության 18 կտոր տարբեր քաշերի ոսկյա զարդեր և 5 կտոր տարբեր քաշերի արծաթյա զարդեր, 7000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության 1 հատ «Ֆիլիպս» տեսակի լազերային տեսաձայնագրիչ և 6000 ՀՀ դրամի 1 հատ «Մեդիա սթար» ավեհավաք:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանը Սանթրոսյանի մեղքն ապացուցված է համարել միայն բացառապես նույն գործով անցնող



մեկ այլ մեղադրյալի՝ Գ. Ավետիսյանի՝ Սանթրոսյանին զրպարտելու ցուցմունքի հիման վրա և պատիժ է նշանակել ազատազրկում 3 տարի ժամկետով: Իսկ զրպարտչական ցուցմունք տվող Գուրգեն Ավետիսյանը դատապարտվել է պայմանական ազատազրկման:

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՏԵՍԱԿԵՏ

Վահե Սանթրոսյանը անչափահաս տարիքում երկու անգամ դատապարտված է եղել: Առաջին անգամ հեծանիվ է «գողացել», քշել և այնուհետև վերադարձրել, ինչի համար դատվել է երկու տարի ժամկետով, իսկ երկրորդ անգամ, երկու բլոկ ծխախոտ և 13.000 ՀՀ դրամ գողանալու համար դատապարտվել է չորս տարի ազատազրկման: Սակայն, դրական վարքագիծ ցուցաբերելու արդյունքում վաղաժամկետ ազատվել է:

ՔԿՀ-ից դուրս գալուց հետո Վ.Սանթրոսյանը պարբերաբար ենթարկվել է ոստիկանության կողմից ճնշումների: Երբ 2010 թվականին Սանթրոսյանը հերթական գողության կասկածանքով բերման է ենթարկվել ոստիկանության բաժին, նրան ծեծի են ենթարկել՝ փորձելով ստիպել, որպեսզի խոստովանի իր մեղքը: Չդիմանալով ճնշումներին՝ Սանթրոսյանը քննիչի սենյակում ածելիով կտրում է իր վիզը: Նրան տեղափոխում են հիվանդանոց, որտեղ բժիշկներին հաջողվում է փրկել նրա կյանքը: Հետագայում ոստիկանությունը բացահայտում է այն գործով իրական մեղավորին:

Սանթրոսյանի մայրը՝ Հրանուշ Կոխիկյանը, վախենալով ոստիկանության սպառնալիքներից, տղային ինքնասպանության հասցնելու մասին հայտարարություն չի ներկայացրել ոստիկանություն, սակայն պահանջել է, որպեսզի ոստիկանությունն իրեն 1000 ԱՄՆ դոլար վճարի՝ տղայի բուժման ծախսերը հոգալու համար: Ըստ տիկին Կոխիկյանի, այժմ իր որդին պատասխան է տալիս ոստիկանության վճարած այդ գումարի համար:

2011 թ-ի փետրվարի 18-ին Դիլիջան քաղաքի բնակիչ Վահե Սանթրոսյանին ոստիկանության բաժանմունք են հրավիրել՝ մեկնաբանելով, որ վիճաբանություն է տեղի ունեցել և անհրաժեշտ են պարզաբանումներ:



Բաժանմունքում անջատել են Սանթրոսյանի հեռախոսը և չեն թույլատրել, որպեսզի կապվի փաստաբանի և ընտանիքի անդամների հետ: Հաջորդ օրը առավոտյան նրա մորը՝ Հրանուշ Կոխլիկյանին զանգահարել են ոստրիկանության աշխատակիցներն ու ասել, որ իր տղայի համար հագուստներ բերի: Ոստիկանության բաժանմունքում մայրն իմացել է, որ Վահե Սանթրոսյանը մեղադրվում է գողության մեջ և որ նրա նկատմամբ խափանման միջոց է կիրառվում կալանքը:

Սանթրոսյանի մեղքն ապացուցող միակ փաստը նույն գործով անցնող մեկ այլ մեղադրյալի՝ Գուրգեն Ավետիսյանի՝ Սանթրոսյանին հանցակից ճանաչող ցուցմունքն է: Գուրգեն Ավետիսյանը, դատաքննության ընթացքում բազմիցս հայտնել է, որ Սանթրոսյանին չի ճանաչել և ոստիկանության կողմից կիրառված բռնության արդյունքում է նրա վերաբերյալ զրպարտչական ցուցմունքներ տվել:

Հետագայում ցանկացել է իր ցուցմունքները փոխել, սակայն քննիչները հրաժարվել են նրանից նոր իրականությանը համապատասխանող ցուցմունք վերցնել: Դատարանում, Ավետիսյանը պնդել է, որ հանցագործությունը կատարել է միայնակ:

Դատարանը որևէ կերպ չի արձագանքել ոստիկանությունում մեղադրյալ Ավետիսյանին բռնության ենթարկելու մասին հայտարարությանը:

Հնարավորություն չունենալով ապացուցել իր անմեղությունը Վ.Սանթրոսյանը 2011թ. հունիսի 14-ին դատավճռի հրապարակումից հետո Իջևանի ոստիկանության բաժնում ինքնասպանության փորձ է կատարել, ապա ոստիկանների ուղեկցությամբ Սանթրոսյանը տեղափոխվել է «Իջևանի ԲԿ» ՓԲԸ որովայնի և մարմնի տարբեր մասերի կտրած վերքերով:

ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը քննության առնելով վերաքննիչ բողոքը գործը լսել է վերաքննության կարգով և որպես վկա հրավիրել դատարան Գ.Ավետիսյանին: Գ.Ավետիսյանը վերաքննիչ դատարանում պնդեց իր առաջին աստիճանում տրված ցուցմունքները:



Սանթրոսյանի թևերը ամբողջությամբ սպիապատ էին ինքնավնասման բազմաթիվ փորձերից, իսկ պարանոցի վրա երևում էր Դիլիջանի ոստիկանության բաժնում պարանոցը վնասելու արդյունքում առաջացած մեծ սպին: Այս վնասվածքները դատավորները որակեցին ` որպես վնասվածքներ, որոնք հատուկ են թմրամոլներին և հայտնեցին, որ դժվարանում են պատկերացնել, որ ոստիկանների ճնշումները կարող են բավականաչափ սարսափելի լինել, որպեսզի մարդը նման քայլի դիմի:

Հատկանշական է, որ նիստի ընթացքում դատավոր Պետրոսյանը բջջային հեռախոսով գրուցելուց հետո դատարանի աշխատակցուհիներից մեկի հետ որոշ փաստաթղթեր էր ուսումնասիրում` ոչ մի ուշադրություն չդարձնելով նիստի ընթացքին:

2011 թ. հոկտեմբերի 3-ին ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը որոշում կայացրեց Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը անփոփոխ թողնելու մասին:



**«ՆԿ Յուկոս օյլ» ԲԲԸ-ին պատկանող
«Յուկոս ՄՆԳ Ինվեսթմենթ» ՍՊԸ
Գործը**

1. Նախապատմությունը

Մոսկվա քաղաքի արբիտրաժային դատարանի 04.08.2006թ. որոշմամբ «Նեֆտենայա կոմպանիյա «Յուկոս» ԲԲԸ-ն(այսուհետ նաև Յուկոս, Յուկոս օյլ, ՆԿ Յուկոս) ճանաչվել է սնանկ:

Դատարանի որոշմամբ Յուկոսի սնանկության կառավարիչ է հաստատվել Էդուարդ Կոնստանտինովիչ Ռեզբունը(այսուհետ նաև Ռեզբուն):

Յուկոս ընկերության սնանկացումը եղել է Ռուսաստանի Դաշնության կողմից Յուկոս ընկերության դեմ 2003թ. նախաձեռնված գործողությունների արդյունք, որոնց նպատակն է եղել սնանկացնել ընկերությունը և այսուհետև՝ լուծարել:

2007թ.-ի օգոստոսի 13-ին Ռեզբունի և «Նեֆտենայա կոմպանիյա «Ռոսնեֆտ» ԲԲԸ(այսուհետ նաև Ռոսնեֆտ) միջև կնքվել է առուվաճառքի թիվ ԿՈՒ/ԿՊ/18/0001107/2683 պայմանագիրը, որով Ռոսնեֆտին է վաճառվել Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գործող «Յուկոս ՄՆԳ Ինվեսթմենթ» ՍՊԸ 100 տոկոս բաժնեմասը(այսուհետ՝ Գործարք):

31.07.2009թ. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Արաբկիրի տարածքային ստորաբաժանման կողմից գրանցվել է «Յուկոս ՄՆԳ Ինվեսթմենթ» ՍՊԸ կանոնադրական կապիտալի 100%-ի նկատմամբ «ՆԿ «Ռոսնեֆտ» ԲԲԸ սեփականության իրավունքը:

2. Մարդու իրավունքների և ազատությունների խախտումներ

Իրականում վերոնշյալ գործընթացը տեղի է ունեցել Յուկոս ընկերության բաժնետերերի և պարտատերերի իրավունքների և հիմնարար ազատությունների բազմաթիվ խախտումներով: Այդ անձանց իրավունքները սկսելով խախտվել Ռուսաստանի Դաշնությունում, կոպտորեն շարունակվել են խախտվել Հայաստանի Հանրապետությունում: Մասնավորապես.

1. 2007թ. հուլիսի 7-ին պրն Ռեզբունը հայտարարեց Յուկոս Օյլի գույքի աճուրդի մասին՝ լոտ 18, որը ներառում էր Հայաստանում գրանցված Յուկոս ՄՆԳ Ինվեսթմենթ ՍՊԸ ընկերությունում /այսուհետ Յուկոս ՄՆԳ/ Յուկոսի

100 տոկոս բաժնեմասը: Հայտարարությունը հրապարակվեց միայն ռուսերեն լեզվով:

2. 2007թ. օգոստոսի 8-ին Ռոսնեֆտը ներկայացրեց առաջարկ լոտ 18-ի համար, և հաղթեց հենց առաջին հայտով: ООО Benefit-ը, որը աճուրդին մասնակցող միակ մյուս ընկերությունն էր, չներկայացրեց մրցակցային հայտ, այլ ընդամենը հաստատեց մեկնարկային գնով մասնակցելու իր մտադրության մասին:

3. 2007թ. օգոստոսի 13-ին պրն Ռեբգունը և Ռոսնեֆտը ստորագրեցին հաղթած հայտի գնով լոտ 18-ի վաճառքի մասին պայմանագիր (Վաճառքի պայմանագիր): Վաճառքի պայմանագիրը, ի թիվս այլ դրույթների, պարունակում էր պայմանագրի կատարման հետևյալ նախապայմանները.

ա. Ռեբգունը պետք է ծանուցեր Յուկոս ՄՆԳ-ին իր բաժնետոմսերի վաճառքի մասին և այդ ծանուցումը հաստատող ապացույցը տրամադրեր Ռոսնեֆտին:

բ. Ռոսնեֆտը Վաճառքի պայմանագրի օրվանից՝ 14-օրյա ժամկետում պետք է կատարեր աճուրդի ամբողջ գնի վճարումը, և որ այդ վճարումը չկատարելու դեպքում Վաճառքի պայմանագրի գործողությունն պետք է դադարեր 2007թ. օգոստոսի 28-ի կեսգիշերին:

4. Ավելի քան մեկ տարի անց՝ 2008թ. սեպտեմբերի վերջերին Ռոսնեֆտի ներկայացուցիչները կապվեցին Յուկոս ՄՆԳ-ի տնօրեն Արմեն Միքայելյանի հետ (պրն Միքայելյան) Յուկոս ՄՆԳ-ի ձեռքբերման առնչությամբ և հանդիպում խնդրեցին՝ 2008թ. օգոստոսի 3-ին ընկերության կառավարման փոխանցումը քննարկելու նպատակով: Պրն Միքայելյանը հրավիրեց ռուս իրավապաշտպան և Յուկոս ՄՆԳ-ի նախկին փաստաբան Դրյու Հոլիներին հանդիպմանը ներկա գտնվելու նպատակով:

5. Երբ 2008թ. հոկտեմբերի 3-ի առավոտյան պրն Հոլիները ժամանեց Երևան, նրա մուտքը Հայաստան մերժվեց, չնայած այն հանգամանքի, որ վայրկյաններ առաջ նրան տրվել էր Հայաստանի վիզա: Հայաստանի սահմանապահները պրն Հոլիներին տեղեկացրեցին, որ նրանք



իրականացնում են իրենց հետ համատեղ Հայաստանի սահմանը հսկող՝ իրենց ռուս գործընկերների որոշումը: Հարկ է նշել, որ այս դեպքից առաջ պարոն Հովհերը մի քանի անգամ ազատ էլումուտք է ունեցել ՀՀ:

6. 2008թ. հոկտեմբերի 3-ին Ռոսնեֆտը Յուկոս ՄՆԳ-ին ներկայացրեց ծանուցում Վաճառքի պայմանագրի գոյության մասին և պահանջեց, որ տնօրեն Արմեն Միքայելյանը 3 օրվա ընթացքում հանձնի ընկերության կնիքը և փաստաթղթերը: Որպես իր պահանջի հիմնավորում Ռոսնեֆտը ներկայացրեց Մոսկվայի միջնորդ դատարանի 2006թ. օգոստոսի 1-ի որոշման (Սնանկության գործով դատական որոշում), Վաճառքի պայմանագրի և Լոտ 18-ի փոխանցման ակտի /2007թ. օգոստոսի 31-ի ամսաթվով/ պատճենները: Ո՛չ սնանկության գործով դատարանի որոշման մեջ, ո՛չ էլ փոխանցման ակտում որևէ հղում արված չէր Յուկոս ՄՆԳ-ին:

7. 2008թ. հոկտեմբերի 6-ին Յուկոս ՄՆԳ-ն սկսեց վարույթներ Հայաստանի Վարչական դատարանում(Վարչական գործ)՝ փորձելով կանխել Հայաստանի Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեզիստրի կողմից Ռոսնեֆթի որպես Յուկոս ՄՆԳ-ի 100 տոկոսի բաժնետոմսերի սեփականատիրոջ գրանցումը: Ի թիվս այլ փաստերի, Յուկոս ՄՆԳը հիմնվում էր այն փաստի վրա, որ իր սեփական բաժնետոմսերը ետ գնելու իր առաջնային իրավունքը չի հարգվել, և որ պրն Ռեբգունը իրավասու չէր վաճառելու բաժնետոմսերը՝ առանց Հայաստանի որևէ դատարանի որոշման: Բացի այդ Յուկոս ՄՆԳ-ն պահանջեց հայցի ապահովման միջոցի կիրառում (արգելել Ռոսնեֆթի գրանցումը որպես Յուկոս ՄՆԳ բաժնեմասի սեփականատեր), մինչև գործի ըստ էության լուծումը՝ այն հիմքով, որ եթե Ռոսնեֆթը գրանցվեր որպես Յուկոս ՄՆԳ-ի 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր, ապա դա կկանխորոշեր դատավարության ելքը:

8. Հարկ ենք համարում հատուկ շեշտել, որ Յուկոս ՄՆԳ այն ժամանակվա տնօրեն Ա. Միքայելյանին պահանջ ներկայացվեց տրամադրել ընկերության կնիքը առանց ոչ մի ապացույց ներկայացնելու առ այն, որ



Յուկոս ՄՆԳ բաժնեմասի վաճառքի գործընթացը կայացել է, պահպանվել են վաճառքի պայմանագրի բոլոր դրույթները: Դեռ ավելին, Ա. Միքայելյանից կնիքը պահանջող անձինք չէին հանդիսանում Յուկոս ՄՆԳ նոր նշանակված տնօրեն կամ վերջինիս կողմից լիազորված անձ, ինչպես նաև Ռոսնեֆթը այդ պահին ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում դեռևս գրանցված էլ չէր որպես Յուկոս ՄՆԳ 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր:

9. 2008թ. հոկտեմբերի 7-ին Յուկոս ՄՆԳ-ն պատասխանեց Ռոսնեֆթի՝ 2008թ. հոկտեմբերի 3-ի նամակին՝ նշելով, որ նրա տրամադրած ապացույցները բավարար չէին և, ի թիվս այլոց, պահանջեց լրացուցիչ ապացույցներ առ այն, որ.

ա. Հայաստանում ճանաչվել էր սնանկության գործով Ռուսաստանի Դաշնության դատարանի որոշումը,

բ. Վաճառքի պայմանագրի համաձայն Ռոսնեֆթը բաժնետոմսերի դիմաց վճարումները կատարել էր 14-օրյա ժամկետում:

գ. Ռոսնեֆթը կատարել էր Ռուսաստանի մրցակցության և ընկերությունների մասին օրենքի համապատասխան նորմերը, այդ թվում՝ իրավունքների չարաշահմանը և խոշոր ձեռքբերումներին առնչվող նորմերը, և

դ. Յուկոս ՄՆԳ-ին ժամանակին ուղարկվել էր բաժնեմասի վաճառքի մասին նախնական ծանուցում՝ համաձայն «Սահմանափակ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և Վաճառքի պայմանագրի:

Յուկոս ՄՆԳ-ն նման ծանուցում չէր ստացել:

10. Ռոսնեֆթը Յուկոս ՄՆԳ-ին չէր ներկայացրել այդ պահանջված ապացույցները, չնայած պարտավոր էր դա անել համաձայն Սահմանափակ Պատասխանատվությամբ ընկերությունների մասին ՀՀ օրենքի հոդված 15-ի 3-րդ մասի:



11. 2008թ. հոկտեմբերի 13-ին Վարչական դատարանի դատավոր Միրզոյանը վարչական գործը ընդունեց վարույթ և նույն օրն էլ բավարարեց հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը:
12. 2008թ. նոյեմբերի 11-ին Ռոսնեֆթը կրկին անգամ գրավոր ներկայացրեց Յուկոս ՄՆԳ-ի կնիքը և փաստաթղթերն իրեն փոխանցելու պահանջը՝ այն կատարելու համար Յուկոս ՄՆԳ-ին տալով երկու օր: Ռոսնեֆթը այս անգամ ևս չներկայացրեց Յուկոս ՄՆԳ-ի կողմից ավելի վաղ պահանջված ապացույցները:
13. Նույն ժամանակ Ռոսնեֆթը ՀՀ իրավապահ մարմիններին՝ պահանջելով սկսել քրեական հետապնդում պրն Միքայելյանի դեմ “պաշտոնի չարաշահման” կապակցությամբ: Ենթադրյալ չարաշահումն այն էր, որ նա մերժել էր հանձնել Յուկոս ՄՆԳ-ի կնիքը և փաստաթղթերը: Ռոսնեֆթը չտվեց որևէ հիմնավոր պատասխան Յուկոս ՄՆԳ-ի՝ լրացուցիչ ապացույցներ տրամադրելու պահանջին և ոչ էլ հիշատակեց այն փաստը, որ Վարչական դատարանի կողմից կիրառված հայցի ապահովման միջոցն ուժի մեջ էր:
14. 2008թ. նոյեմբերի 19-ին Յուկոս ՄՆԳ-ն պատասխանեց Ռոսնեֆթի՝ 2008թ. նոյեմբերի 11-ի նամակին և կրկին անգամ պնդեց ապացույցներ տրամադրելու իր պահանջի մասին: Ռոսնեֆթը չպատասխանեց:
15. 2008թ. դեկտեմբերի 29-ին Յուկոս ՄՆԳ-ն քաղաքացիական հայց ներկայացրեց Երևանի Քաղաքացիական դատարան՝ վիճարկելով Ռոսնեֆթի կողմից Յուկոս ՄՆԳ-ի բաժնեմասի գնումը:
16. Հայաստանի դատական համակարգի բարեփոխումից հետո, 2009թ. փետրվարի 27-ին քաղաքացիական հայցը Երևանի Քաղաքացիական դատարանից փոխանցվեց Կենտրոն և Նորք-Մարշ վարչական դատարան:
17. 2009թ. մարտի 20-ին Երևանի Ոստիկանությունը սկսեց քրեական գործով քննություն պրն Միքայելյանի դեմ՝ համաձայն Քրեական Օրենսգրքի “Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չահաշահելը” 214-րդ հոդվածի: Բերված հիմնավորումը



կայանում էր նրանում, որ պրն Միքայելյանը հիմնվելով անհիմն փաստարկների վրա մերժել էր հանձնել [Յուկոս ՄՆԳ-ի] պետական գրանցման վկայականը, կնիքը և ֆինանսական փաստաթղթերը, այդպիսով՝ խոչընդոտելով ընկերության գույքի իրավունքի գրանցմանը և տնտեսական գործունեության իրականացմանը, և արդյունքում՝ էական վնաս հասցրել Ռոսնեֆտ ընկերության իրավունքներին և իրավական շահերին:

18. 2009թ. ապրիլի 6-ին Երևանի ոստիկանությունը պրն Միքայելյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու հրաման տվեց (չնայած նա գտնվում էր Միացյալ Նահանգներում) և կարգադրեց խուզարկություն անցկացնել նրա տանը և նրա ընտանիքի անդամների տներում:

19. 2009թ. ապրիլի 14-ին Վարչական դատարանը որոշում կայացրեց վարչական գործով վարույթը կասեցնելու մասին (կասեցման մասին որոշում)՝ մինչև Ռոսնեֆթի դեմ Յուկոս ՄՆԳ-ի քաղաքացիական գործով հայցի լուծումը: Նույն օրը Ռոսնեֆթը առաջին անգամ դիմեց Վարչական դատարան հայցի ապահովման միջոցը վերացնելու պահանջով:

20. 2009թ. մայիսի 25-ին պրն Միքայելյանի փաստաբանը միջնորդություն ներկայացրեց Երևան քաղաքի դատախազին՝ խնդրելով կարճել նրա դեմ քրեական հետապնդում սկսելու ոստիկանության որոշումը: Պրն Միքայելյանի փաստաբանը, ի թիվս այլոց, նշեց, որ ընկերության կնիքը Ռոսնեֆթին հանձնելու նրա մերժումը հիմնավորված էր դատարանի հայցի ապահովման որոշմամբ, և որ չկար նաև Ռոսնեֆթի կողմից ներկայացված ոչ մի ապացույց այն մասին, որ Ա. Միքայելյանի գործողությունների արդյունքում ընկերությունը վնասներ է կրում կամ կրել է:

21. 2009թ. մայիսի 29-ին Երևան քաղաքի դատախազն առանց պատճառի մերժեց պրն Միքայելյանի միջնորդությունը:

22. 2009թ. հուլիսի 1-ին Կենտրոն և Նորք-Մարաշ տարածքային դատարանը մերժեց պրն Միքայելյանի բողոքը իր նկատմամբ քրեական հետապնդում սկսելու ոստիկանության որոշման դեմ, գտնելով, որ



«քրեական գործ հարուցելու մասին որոշումը չի կարող ենթարկվել դատական կարգավորման»: Պրն Միքայելյանը բողոքարկեց:

23. Քաղաքացիական գործով 2009թ. հուլիսի 9-ին Կենտրոն և Նորք-Մարաշ տարածքային դատարանի դատավոր Պետրոսյանը կայացրեց վճիռ՝ մերժելով Յուկոս ՄՆԳ-ի հայցը: Դատավորի կողմից բերված պատճառները հակասական էին: Մի կողմից դատավորը գտավ, որ Յուկոս ՄՆԳ-ն ուներ բաժնեմասի հետգնման նախապատվության իրավունք, սակայն՝ ՍՊԸ-ի մասին օրենքի 20-րդ հոդվածով սահմանված հանգամանքներում, որը թույլ է տալիս բաժնետիրոջ բաժնեմասի հարկադիր վաճառք՝ վարկատուների պահանջները միայն դատարանի որոշման հիման վրա բավարարելու նպատակով: Մյուս կողմից, դատարանը գտավ, որ Հայաստանում պրն Ռեբգունի կողմից Յուկոս ՄՆԳ-ի բաժնետոմսերի վաճառքի դատական կարգով ճանաչման կարիք չկա, քանի որ այն հիմնված չի եղել դատարանի որոշման վրա, այլ կատարվել է զուտ վաճառքի պայմանագրով:

24. Ավելին, վճռում անդրադարձ չեղավ ՍՊԸ-ի մասին օրենքի 20-րդ հոդվածը կիրառելու անխուսափելի հետևանքներին. խոսքը մասնավորապես այն բանի մասին էր, որ նույնիսկ դատարանի որոշման պարագայում Յուկոս ՄՆԳ-ին, այնուամենայնիվ, պետք է տրվեր հնարավորություն օգտվելու իր նախապատվության իրավունքից, և միայն այդ իրավունքից չօգտվելու դեպքում է, որ բաժնետոմսերը կարող էին վաճառվել հանրային աճուրդում: Այնուամենայնիվ, Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանի որոշումը չունեի իրավական ուժ, քանի դեռ Յուկոս ՄՆԳը չէր կարողացել ամբողջությամբ սպառել բողոքարկելու իր իրավունքները:

25. 2009թ. հուլիսի 16-ին Վճռաբեկ դատարանը բավարարեց Ռոսնեֆթի վճռաբեկ բողոքը կասեցման որոշման դեմ, և վարչական գործը ետ ուղարկեց Վարչական դատարան՝ գործն ըստ էության քննության առնելու համար:



26. 2009թ. հուլիսի 21-ին դատավոր Միրզոյանը ինքնաբացարկ հայտնեց՝ որպես կասեցման որոշումը վերացնելու դեմ բողոքի նշան, պատճառաբանելով, որ «անհնար» էր քննարկել վարչական գործը, քանի որ քաղաքացիական գործով վերջնական որոշումն ուժի մեջ չէր մտել:
27. 2009 թվականի հուլիսի 21-ին, Նիդեռլանդներում գրացված Yukos International B.V. /Մեծ Բրիտանիա/ ընկերությունը դիմեց Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ Յուկոս Օյլ-ի դեմ մոտավորապես 850 մլն դոլարի չափով Լոնդոնի Արբիտրաժային դատարանի արբիտրաժային որոշման ճանաչման դիմումով (Արբիտրաժային գործ): Դիմումն ուղեկցվում էր պահանջի ապահովման, մասնավորապես՝ Յուկոս ՄՆԳ-ում Յուկոս Օյլ-ի բաժնեմասի վրա արգելանք դնելու մասին դիմումով:
28. Վարչական գործով 2009 թվականի հուլիսի 23-ին, դատավոր Միրզոյանի փոխարեն վարչական գործով դատավոր նշանակվեց դատավոր Ա. Ղազարյանը: Նույն օրը դատավոր Ղազարյանը վարույթները վերսկսելու վերաբերյալ որոշում կայացրեց և հայցի ապահովման միջոցի վերաբերյալ Ռոսնեֆթի դիմումի քննարկումը նշանակեց 2009 թվականի հուլիսի 27-ին:
29. Չնայած Յուկոս ՄՆԳ ներկայացուցչի առարկություններին, առանց պատճառաբանությունների, դատավոր Ղազարյանը վերացրեց հայցի ապահովման միջոցը: Այնուհետև, դատավոր Ղազարյանը հետաձգեց ըստ էության վարչական գործի լսումը մինչև հաջորդ օրը, այսինքն՝ 2009թ. հուլիսի 28-ը:
30. Նույն օրը/2009թ. հուլիսի 27-ին/ Արբիտրաժային գործով Yukos International-ի ներկայացուցիչը ստացավ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. հուլիսի 24-ով թվագրված որոշումը, որով արգելանք էր դրվում Յուկոս ՄՆԳ-ում Յուկոս Օյլ-ի բաժնեմասի նկատմամբ: Yukos International-ի ներկայացուցիչը նույն օրը որոշումը ներկայացրեց Պետոեզիստր, այսպիսով՝ կանխելով բաժնեմասի նկատմամբ Ռոսնեֆթի իրավունքների գրանցումը: Այնուհետև,



Ռոսնեֆթը դիմեց Արաբկիր և Քանաքառ-Զեյթունի համայնքների ընդհանուր իրավասության դատարան այդ արգելանքը ևս վերացնելու պահանջով:

31. 2009թ. հուլիսի 30-ին, Վարչական դատարանն անցկացրեց վարչական գործով դատավարություն: Դատավոր Ղազարյանը մերժեց Յուկոս ՍՆԳ-ի՝ ոտնահարված իրավունքների, մարդու իրավունքների և հանրային կարգի խախտման վրա հիմնված իր փաստարկները հիմնավորող վկայի ցուցմունքները լսելու միջնորդությունը, ինչպես նաև փաստաթղթային ապացույցներն ընդունելու միջնորդությունը՝ գտնելով, որ այդ ապացույցները “վերաբերելի չեն”: Դատավոր Ղազարյանը հայտարարեց վայրույթը փակված և դատական վճռի կայացումը հետաձգեց մինչև 2009թ. օգոստոսի 4-ը:

32. Նույն օրը, Արաբկիր և Քանաքառ-Զեյթուն տարածքային դատարանը Ռոսնեֆթին՝ որպես երրորդ կողմ ներգրավեց Արբիտրաժային գործով, լսեց նրա՝ արգելանքը հանելու մասին միջնորդությունը և վերացրեց նախկինում կայացրած իր իսկ որոշումը՝ համարելով, որ դատական արգելանքի մասին որոշումը տարածվում է միայն հայցերի և ոչ թե դիմումների վրա: Yukos International-ը նույն օրը այդ որոշման դեմ վերքննիչ բողոք ներկայացրեց, որը վերաքննիչ դատարանը չքննեց այն հիմնավորմամբ, որ դատարանի արգելանքը վերացնելու մասին որոշումը վերաքննության կարգով ենթակա չէ բողոքարկման, այնինչ ընդհանուր իրավասության դատարանը իր որոշմամբ ամրագրել էր կողմի որոշումը բողոքարկելու իրավունքը:

33. 2009թ. հուլիսի 31-ին /այսինքն՝ հենց հաջորդ օրը/, առանց Յուկոս ՍՆԳ-ին ծանուցելու, Պետոեզիստորը Ռոսնեֆթին գրանցեց որպես Յուկոս ՍՆԳ-ի 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր: Դա տեղի ունեցավ, չնայած այն փաստի, որ համաձայն համապատասխան պահանջների.

ա/ օրենքով սահմանված էր 5-օրյա ժամկետ գրանցման համար,

բ/ դիմումատուն պարտավոր էր գրավոր հաստատել, որ պահպանվել է Ընկերության /Յուկոս ՍՆԳ/ գնման նախապատվության իրավունքը, մի բան, որ չէր կատարվել:



զ/ Չներկայացվեց ոչ մի ապացույց այն մասին, որ Ռոսնեֆտը վաճառքի պայմանագրով սահմանված կարգով վճարել է Յուկոս ՄՆԳ բաժնեմասի համար:

34. 2009թ. օգոստոսի 3-ին, Յուկոս ՄՆԳ-ի փաստաբանը վերադասության կարգով բողոք ներկայացրեց արգելանքը վերացնելու մասին վարչական դատարանի 2009թ. հուլիսի 27-ի որոշման դեմ:

35. 2009թ. օգոստոսի 4-ին, Քրեական գործերով վերաքննիչ դատարանը մերժեց պրն Միքայելյանի բողոքը Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի ավելի վաղ կայացրած որոշման դեմ, որով մերժվել էր պրն Միքայելյանի նկատմամբ քրեական հետապնդում սկսելու մասին ոստիկանության որոշման դեմ նրա բողոքը: Քրեական գործերով վերաքննիչ դատարանը գտավ, որ քրեական հետաքննություն սկսելու սուսկ փաստը չի ոտնահարում պրն Միքայելյանի իրավունքները և նա կարող էր ցանկացած ժամանակ և ըստ անհրաժեշտության դատարան բերել իր դեմ հարուցված գործին առնչվող ցանկացած փաստարկ:

36. 2009թ. օգոստոսի 5-ին, Ռոսնեֆթի փաստաբան Ջարուհի Դանիելյանը Յուկոս ՄՆԳ-ի փաստաբանին բանավոր կերպով տեղեկացրեց, որ Ռոսնեֆտը գրանցվել է որպես Յուկոս ՄՆԳ-ի 100 տոկոսի սեփականատեր, որ տնօրենի պաշտոնից հեռացվել է պարոն Միքայելյանը և նրա փոխարեն նշանակվել է Նիկիտա Տոլստիկովը և, որ Ռոսնեֆտը դիմել է Պետեզիստր՝ այդ փոփոխությունը գրանցելու նպատակով: Ռոսնեֆթի ներկայացուցիչը Յուկոս ՄՆԳ -ի փաստաբանից պահանջեց նաև իրեն փոխանցել Յուկոս ՄՆԳ-ի կնիքը: Յուկոս ՄՆԳ-ի փաստաբանը մերժեց այս պահանջը, հիմնավորելով, որ այն արվել է ոչ թե Յուկոս ՄՆԳ-ի տնօրենի, այլ ենթադրյալ բաժնետիրոջ կողմից և պահանջեց պաշտոնական ծանուցում:

37. Նույն օրն՝ ավելի ուշ Յուկոս ՄՆԳ-ի փաստաբանը ստացավ վարչական գործով Վարչական դատարանի վճռի պատճենը: Դատարանը մերժել էր Յուկոս ՄՆԳ-ի բողոքը առանց քննելու նրա փաստարկներն ըստ



էության, գտնելով, որ հայցը վաղաժամկետ էր՝ գրանցման մասին որոշում չլինելու պատճառով:

38. 2009թ. օգոստոսի 6-ին, Պարոն Տոլստիկովը, որը արդեն պաշտոնապես գրանցվել էր Պետական ռեգիստրում, պահանջեց, որպեսզի Յուկոս ՄՆԳ-ի փաստաբանը իրեն հանձնի Յուկոս ՄՆԳ-ի կնիքը, որը կատարվեց: Յուկոս ՄՆԳ-ի փաստաբանը միաժամանակ տեղեկացրեց պարոն Տոլստիկովին, որ նա Յուկոս ՄՆԳ-ի ղեկավարության կողմից հրահանգված էր շարունակել բողոքներ ներկայացնել և, որ նա մտադիր է կատարել այդ հրանգները:

39. 2009թ. օգոստոսի 6 և 7-ին Յուկոս ՄՆԳ-ի փաստաբանը ներկայացրեց հետևյալ բողոքները.

ա. Վերաքննիչ բողոք քաղաքացիական գործով կայացված վճռի դեմ,

բ. Վճռաբեկ բողոք վարչական գործով կայացված վճռի դեմ:

40. 2009թ. օգոստոսի 7-ին, Յուկոս ՄՆԳ-ի փաստաբանները տեղեկացվեցին, որ Յուկոս ՄՆԳ-ի անունից հանդես գալու նրանց իրավասությունը կասեցվել է նորանշանակ տնօրենի կողմից և, որ նոր փաստաբան է նշանակվել նրանց փոխարեն:

41. 2009թ. օգոստոսի 13-ին, Յուկոս ՄՆԳ-ի նախկին փաստաբանը ծանուցում ստացավ առ այն, որ վարչական գործով վճռի դեմ բերված նրա բողոքը հետ է վերցվել Յուկոս ՄՆԳ-ի նորանշանակ փաստաբանի կողմից:

42. Հետագայում պարզվեց նաև, որ հետ է վերցվել նաև քաղաքացիական գործով կայացված վճռի դեմ բերված բողոքը:

43. Այս ամենից հետո Յուկոս ընկերության նախկին բաժնետեր Լյուքսթոնա Լիմիթեդ ընկերությունը, Յուկոսի բաժնետերերի և պարտատերերի իրավունքների պաշտպանության համար ստեղծված և վերջիններիս անունից դատական գործընթացներ սկսելու իրավասություն ունեցող Ստիխտինգ Ադմինիստրատենկանտոր Ֆայնենշլ Փերֆորմանս Հոլդինգս հիմնադրամը (Stichting Administratiekantoor Financial Performance Holdings), Յուկոս ՄՆԳ-ն, Արմեն Միքայելյանը և Յուկոս Ինթերնեյշնլ



ընկերությունը, որպես Յուկոսի պատատեր, մի շարք դատական գործեր նախաձեռնեցին Հայաստանի Հանրապետությունում Յուկոս ՄՆԳ-ի բաժնեմասի վերադարձման ուղղությամբ, քանի որ գտնում էին, որ բաժնեմասի բռնի զավթման արդյունքում խախտվել են այդ ընկերությունների, ինչպես նաև Յուկոսի նախկին պարտատերերի և բաժնետերերի իրավունքները:

44. Ընդհանուր առմամբ նախաձեռնվեց 3 դատական գործ, որոնցից 2-ը վարչական և մեկը քաղաքացիական: Յուրաքանչյուր գործ բաղկացած էր գրեթե 80 էջանոց հայցադիմումից, իսկ ներկայացված փաստերը ապացուցող փաստաթղթերի ընդհանուր ծավալը կազմում էր առավել քան 5000 էջ:

45. Չնայած այս ամենին, բոլոր դատարանները, առանց ուսումնասիրելու ներկայացված փաստարկները, հայցվորների կողմից ներկայացված ապացույցները, ՀՀ դատական պրակտիկայի համար դիմեցին շատ բացառիկ քայլի՝ կիրառեցին արագացված դատաքննություն, և շտապ կերպով մերժեցին բոլոր պահանջները:

46. Դատարանները հրաժարվեցին ուսումնասիրել բերված բազմաթիվ ապացույցները, լսել վկաներին: Նույնիսկ չփորձեցին պարզել, թե ինչ են հայցվորները ցանկանում ապացուցել վկաների և այդ ապացույցների միջոցով:

47. Կասկածելով դատավորների անաչառությանը, քանի որ գործերի մի մասը քննվում էր արդեն իսկ նախկինում Ռոնսեֆտի օգտին որոշումներ կայացրած դատավորների կողմից /օր. Վարչական վերոնշյալ գործը քննած դատավոր Ա. Ղազարյանը քննում էր նաև երկրորդ վարչական հայցը, Արբիտրաժային գործը քննած դատավոր Ս. Ղազարյանը քննում էր երկրորդ քաղաքացիական հայցը/, հայցվորների նորկայացուցիչները ապարդյուն փորձեր կատարեցին ինքնաբացարկի միջնորդություններ ներկայացնելու միջոցով հեռացնել իրենց կարծիքով կանխակալ դատավորներին, սակայն միջնորդությունները մերժվեցին:



48. Այս ամենի արդյունքում գտնում ենք, որ խախտվեցին հայցվորների հետևյալ իրավունքներ՝

49. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ սահմանադրության 18 և 19-րդ հոդվածները:

50. Ասվածը հիմնավորվում է նրանով, որ գործերը քննվել են ոչ անաչառ դատավորների կողմից, ինչի արդյունքում անհիմն մերժվել և չեն քննարկվել հայցվորների կողմից ներկայացված իքնաբացարկի միջնորդությունները, դատարանի նախաձեռնությամբ հետաձգվել են դատական նիստերը և որպես արդյունք, անհասկանալի պատճառներով դատարանը որոշել է կիրառել արագացված դատաքննություն և մերժել հայցը:

51. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

52. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որի իրավասությունը, Կոնվենցիայի 32-րդ հոդվածի համաձայն, տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը, այս կամ այն մասնակից պետության նկատմամբ կայացված իր բազմաթիվ վճիռներում, անդրադառնալով արդար դատաքննության իրավունքի չափանիշների հարցին, նշել է, որ այդ իրավունքը ներառում է, *inter alia*, քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առնչությամբ դատարան հայց հարուցելու և այն ըստ էության քննության առարկա դարձնելու իրավունքը (տե՛ս, *mutatis mutandis*, *Golder v. the United Kingdom*, no. 4451/70, judgment of 21 February 1975, §§ 26-36):

53. Դատարանները կիրառել են արագացված դատաքննություն, ինչի արդյունքում առանց ուսումնասիրելու, հետազոտելու գործով ներկայացված



ապացույցները (առավելապես՝ գրավոր), առանց կողմին այդ ապացույցների վերաբերյալ դիրքորոշում (և կամ առարկություններ) ներկայացնելու հնարավորություն ընձեռելու հետացել են խորհրդակցական սենյակ վճռահատության:

54. Հայցվոր կողմը հայցադիմումի ներկայացման հետ միաժամանակ դատարան է ներկայացրել միջնորդություն՝ վկա ներգրավելու վերաբերյալ: Դատարանները միջնորդության մեջ նշված անձանց գործով վկա ներգրավելու հարցի լուծմանը չեն անդրադարձել և չեն քննարկել միջնորդությունը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 86-րդ, 99-րդ հոդվածների հաշվառմամբ դատարանը պետք է նախնական դատական փուլում պարզեր և հստակեցներ դատավարությանը վկաներ ներգրավելու հարցը՝ անդրադառնալով համապատասխան միջնորդությանը:

55. Դատարանների կողմից ապացույցները չհետազոտելը, կողմի՝ վկաներ հրավիրելու միջնորդությանը չանդրադառնալը (ապացույց ներկայացնելու հնարավորությունից զրկում) և առանց դատական նիստում ապացույցների հետազոտման վճիռ կայացնելը հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի խախտում: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ արդարացի լսումների պահանջը (որը հանդիսանում է արդար դատաքննության տարր) կարող է քննարկվել միայն տվյալ գործի դատաքննության՝ որպես ամբողջության, համատեքստում: Կրասկան ընդդեմ Շվեյցարիայի գործով վճռում դատարանն ընդգծել է. «6-րդ հոդվածի 1-ին կետը, «դատարանին» պարտավորեցնում է կատարել կողմերի ներկայացրած բացատրությունների, փաստարկների և ապացույցների պատշաճ հետազոտում, առանց խոչընդոտելու դատարանի՝ ապացույցների վերաբերելիությունը գնահատելու հայեցողությանը»:

56. Արագացված դատաքննության կիրառումը հանգեցրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի խախտմանը, համաձայն որի՝ վարչական դատարանը պարտավոր է ապահովել, որ



կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

57. Դատարանները դիտավորյալ կամ հայցվորների համար անհասկանալի պատճառներով չեն անդրադարձել հայցվորների կողմից բարձրացված հետևյալ հարցերին

ա) Ռուսաստանի Դաշնությունում տեղի ունեցած մարդու իրավունքների բազմաթիվ խախտումները, որոնց հետևանքով և շնորհիվ կնքվել է քննարկվող առուվաճառքի պայմանագիրը, որի հիման վրա էլ Ռեսնեֆթ ԲԲԸ-ն վիճելի վարչական ակտով գրացվել է որպես «Յուկոս ՄՆԳ Ինվեսթմենթ» ՍՊԸ-ի բաժնեմասերի սեփականատեր ու նրա միակ մասնակից: Ռուսաստանի Դաշնությունում տեղի ունեցած խախտումներով կազմված հիմքերով նշված բաժնետոմսերի նկատմամբ երրորդ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերումը կամ այդ իրավունքի ճանաչումը կհակասի Հայաստանի Հանրապետության հանրային կարգին: Հայցերի մերժումը կխախտի ՀՀ սահմանադրության հիմնարար դրույթներից մեկը՝ 3-րդ հոդվածը, համաձայն որի. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը չի կարող ճանաչել Ռուսաստանի Դաշնությունում պետության կողմից ՆԿ Յուկոս ԲԲԸ-ի ակտիվների ծրագրավորված բռնագավթումն իր բոլոր հետևանքներով: Այլ



կերպ ասած, մարդու հիմնական իրավունքների բազմաթիվ խախտումներով կազմված հիմքերով ընդունված կամ կայացված վարչական ակտը չի կարող իր ուժը պահպանել կամ իրավաչափ ճանաչվել կամ համարվել:

բ) Յուկոս ՄՆԳ բաժնեմասի առուվաճառքի պայմանագիրն առոչինչ է ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 169 հոդվածին համապատասխան: Հետևաբար, առոչինչ գործարքի հիման վրա կայացված կամ ընդունված վարչական ակտը ևս առոչինչ է, քանի որ դրա հասցեատիրոջն այդ ակտով տրամադրվել է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունքներ:

գ) Առուվաճառքի քննարկվող գործարքը չի գործել, իրավաբանական ուժ չի ունեցել ոչ պետական գրանցման համար դիմելու պահին, ոչ էլ պետական գրանցման պահին, հետևաբար, առանց որևէ հիմքի կայացված կամ ընդունված վարչական ակտը առոչինչ է, քանի որ դրա հասցեատիրոջն այդ ակտով տրամադրվել է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունքներ, որոնք հիմնագուրկ են:

դ) Պետական ռեգիստրի գործակալությունը երրորդ անձի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը պարտավոր էր կարճել Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 50 հոդվածի 1-ին մասի դ. և գ. կետերի հիման վրա, իսկ եթե նույնիսկ գտներ, որ առկա չեն կարճման համար բավարար հիմքեր, ապա վարչական վարույթը պարտավոր էր առնվազն կասեցնել նույն օրենքի 49 հոդվածի 1-ին մասին համապատասխան:

ե) Դատարանները չեն քննարկել հայցվորների կողմից առաջ քաշված գործարքի առոչնչության հանգամանքները:

ե) Դատարանները չեն քննարկել հայցվորների կողմից բարձրացված վարչական ակտի առոչնչության հիմքերը:

Վերոթվարկված բոլոր խախտումների արդյունքում դատարանները չեն կատարել օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, ինչի հետևանքով խախտվել են հայցվորների արդար դատաբնության իրավունքը, կայացվել են սխալ վճիռներ: Մեր կարծիքով արդար և օբյեկտիվ դատաբնության



արդյունքում, հետազոտելով գործում առկա բոլոր ապացույցները, լսելով կողմերի դիրքորոշումները՝ դատարանները կպարզեն, որ հայցերը հիմնավոր են և ենթակա են բավարարման:

Դատարանների կողմից Ռոսնեֆթին, որպես «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ սեփականատեր գրանցման անօրինականության վերաբերյալ հիմնավորումներն ըստ էության քննության չառնելը, ինքնին հանդիսանում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, անկախ դատավորի անաչառ կամ ոչ անաչառ լինելու հանգամանքից (Hiro Balani v. Spain, 9 December 1994, Series A no. 303-B):

ՀՀ պարտականությունը պահպանել և պաշտպանել իր իրավասության ներքո գործող անձանց իրավունքներն ու /կամ/ ազատությունները այն դեպքում, երբ վերջիններս դիմում են դատական ատյաններին կամ վարչական մարմիններին, այլ երկրներում իրենց իրավունքների խախտման արդյունքում ամրագրված է Եվրոպական դատարանի պրակտիկայով (Markovic and Others v. Italy [GC], no. 1398/03, ECHR 2006-XIV; Pellegrini v. Italy, no. 30882/96, ECHR 2001-VIII).

Ցանկանում ենք ավելացնել, որ վերջին դատական գործը, որն է՝ երկրորդ քաղաքացիական գործը, ավարտվել է 2011 թվականին:

2011թ.-ի դեկտեմբերի 6-ին Ա. Միքայելյանի փաստաբանը միջնորդություն է ներկայացրել ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի քննչական վարչություն՝ Ա. Միքայելյանի նկատմամբ հատուցված քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին, որը ամենայն հավանականությամբ ևս կմերժվի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ⁹**

⁹ Զեկույցի հետևյալ մասը պատրաստվել է Արտակ Զեյնալյանի և Արայիկ Հարությունյանի կողմից

Սույն զեկույցն ընդգրկում է Եվրոպական դատարանի կողմից Հայաստանի վերաբերյալ կայացված առաջին վճռից մինչև 2011թ. դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածը: Հաշվի առնելով, որ Եվրոպական դատարանի վճիռների կատարումը շարունակական գործընթաց է, որոշ կոնկրետ գործերով տեղի ունեցած զարգացումները սյուն զեկույցում արտացոլված չեն:

Հրապարակախոսական, գիտական աղբյուրներում աներկբա նշվում է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան միջազգային փաստաթղթերից ամենակիրառվող է և ամենագործունն է: Այս մեծ համբավը Կոնվենցիային, թերևս, բերել է Մարդու Իրավունքների Եվրոպական դատարանը (հետայսու՝ Եվրոպական դատարան): Այսօր Եվրոպական դատարանն իր հեղինակությամբ պայմանավորված գերծանրաբեռնված է: Եվրոպական դատարանում, վերջին տվյալներով¹⁰ ավելի քան 152800,00 գանգատ կա մուտքագրված, որից ավելի քան 40850,00-ը Ռուսաստանի Դաշնության դեմ: 14-րդ արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո, 40850,00 գանգատներից միայն 5 հազարն է, որ գնահատվել է առաջնային: Այս ցուցանիշների հարաբերակցությունը Հայաստանի և մյուս անդամ պետությունների պարագայում, աննշան տարբերությամբ՝ նույնանման են: Առկա է լրջագույն խնդիր. որքան էլ խիստ լինեն գանգատների, այսպես կոչված ընդունելության չափանիշները և նույնիսկ դատական ակտերը կայացվեն Եվրոպական դատարանի մեկ դատավորի կազմով, գանգատների կուտակումները ոչ միայն չեն նվազի, այլև կավելանան: Կոնվենցիայի և ՄԻԵԴ հեղինակությունը վտանգված է: Այստեղ է, որ էական է դառնում Վճիռների լիարժեք կատարումը, դրանց ինկորպորացիան ներպետական դատական ակտերի մեջ:

¹⁰ Ըստ <http://www.echr.coe.int/ECHR/EN/Header/The+Court/Introduction/Information+documents/> կայքի՝ 30.11.2011թ դրությամբ:

2002թ. ապրիլի 26-ին վավերացնելով Կոնվենցիան, Հայաստանի Հանրապետությունը ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի ուժով ամրագրեց Կոնվենցիայի դրույթների գերակայությունը և դրանց ուղղակի կիրառությունը ազգային օրենսդրության մեջ:

Եվրոպական դատարանի վճիռներում արտահայտված եզրահանգումները, որպես այդպիսին, դեկլարատիվ բնույթ են կրում, սակայն Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պետությունները պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որոնցում նրանք կողմ են¹¹: Այսինքն, Եվրոպական դատարանի վճիռները Կոնվենցիայի անդամ պետությունների համար պարտադիր են այնքանով, որքանով որ պետություններն են ընդունում դրանց պարտադիր բնույթը:

ՀՀ Սահմանադրությունը Հայաստանի իրավագործության ներքո գտնվող անձանց երաշխավորում է ավելի ընդարձակ իրավունքներ, քան Կոնվենցիան, սակայն Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների հնարավոր խախտումների նկատմամբ հասարակության և պետական մարմինների զգոնությունն ավելի բարձր է, ինչը պայմանավորված է միջազգային դատարանի՝ Եվրոպական դատարանի կողմից այդպիսի խախտումների նկատմամբ վերահսկողությամբ: Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանի վճիռները, որպես Կոնվենցիայի մեկնաբանություններ, ինքնին հանդիսանում են իրավունքի աղբյուր Հայաստանում: Առանձնահատուկ ուշադրության են արժանի Եվրոպական դատարանի՝ Հայաստանի մասնակցությամբ կայացված վճիռներում արտահայտած իրավական դիրքորոշումների կյանքի կոչումը ընդհանրապես և իրավունքի խախտման գոհի իրավունքների վերականգնումը մասնավորապես: Եվրոպական դատարանի վճիռների

¹¹ Verein Gegen Tierfabriken Schweiz (VgT) ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի (2) (ՄՊ), թիվ 3277202, 30/06/2009թ. պարբ. 61:



ամբողջությամբ կատարումը այն պարտադիր պայմանն է, որով Հայաստանը ապահովված կլինի իր իրավագործության ներքո գտնվող անձանց ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված միջազգային դատարան դիմելու իրավունք: Եթե վճիռները չկատարվեն կամ ամբողջությամբ չկատարվեն, ապա այդ իրավունքը կդադարի իրական իրավունք լինելուց:

Զեկույցի հիմքում դրվել են մի շարք սուբյեկտիվ չափանիշներ, որոնք հնարավորություն են տվել անկողմնակալ վերլուծության և ամփոփումների արդյունքում վեր հանել օրենսդրության մեջ և իրավակիրառ պրակտիկայում առկա առավել էական ու արդիական հիմնախնդիրները: Անհրաժեշտ է նշել, որ նոր խմբագրությամբ Սահմանադրության և օրենքների գործողության պայմաններում Եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարմանը նպաստող մեխանիզմները վերջնականապես մշակված չեն, իսկ առանձին դեպքերում օրենքի նորմերն ուղղակիորեն խոչընդոտում են միջազգային դատարան դիմելու անձանց սահմանադրական և կոնվենցիոն իրավունքի իրականացմանն ու մարդու իրավունքների պաշտպանությանը:

Եվրոպական դատարանի վճիռների կատարման ընթացքի վերաբերյալ տարեկան զեկույց իրավապաշտպան հանրության կողմից Հայաստանում գրվում է առաջին անգամ: Զեկույցը հնարավորության կտա ոչ միայն արձանագրել իրավական նորմերի խախտումները հանդես գալ համապատասխան առաջարկություններով, այլև կանխել տարբեր վարույթների մասնակիցների նկատմամբ կիրառվող հնարավոր կամայականությունները:

Իրավակիրառ պրակտիկայում, իսկ 2007թ. ընդունված Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածով վերահաստատեց Եվրոպական դատարանի որոշումների պարտադիր բնույթը ազգային դատարանների համար: Հետագա զարգացումները իրավակիրառ պրակտիկայում ցույց տվեցին, որ

ՀՀ դատարանները (ընդհանուր իրավասության դատարանները, վարչական դատարանները և Սահմանադրական դատարանը) հետևողականորեն ընդունում են Եվրոպական դատարանի որոշումների պարտադիր բնույթը: Մասնավորապես՝ 2005 թվականից ի վեր¹² ՀՀ վճռաբեկ դատարանն իր բազմաթիվ որոշումներում վկայակոչել է Եվրոպական դատարանի նախադեպերը՝ դրանց տալով գերակայություն և ապահովելով դրանց ուղղակի կիրառությունը տվյալ գործով: Նույնը կարել է ասել նաև ՀՀ Սահմանադրական դատարանի մասին: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը թե՛ օրենսդրությամբ, թե՛ պրակտիկայում ընդունում է Եվրոպական դատարանի որոշումների պարտադիր բնույթը:

Վճիռների կատարման վրա վերահսկողության բնույթը

Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, «դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ»¹³: Անդամ պետությունը պարտավորություն է կրում Նախարարների

¹² Թեև մինչ 2005 թվականը առանձին դեպքերում դատարաններն իրենց որոշումներում վկայակոչել են Կոնվենցիան կամ Եվրոպական դատարանի նախադեպային որոշումները, այդուհանդերձ, դրանք առանձին որոշումներ էին որոնք պրակտիկայի կամ օրենսդրության վրա որևէ ազդեցություն չէին թողնում: Դրությունը փոխվեց 2005թ Սահմանադրական բարեփոխումներով, որի 92-րդ հոդվածը Վճռաբեկ դատարանին շնորհեց բարձրագույն աստիճանի հատկանիշներով՝ օրենքների միատեսակ կիրառությունն ապահովելու, վերջնական, պարտադիր և նախադեպային որոշումներ կայացնելու արտակարգ լիազորություններով: Սահմանադրական այս նորմի ընդունումից կարճ ժամանակ անց, 2005թ. հուլիսի 22-ին, Վճռաբեկ դատարանն ընդունեց Սալարցոցյանի գործով իր հայտնի որոշումը, որը հիմք հանդիսացավ մի ամբողջ ինստիտուտի՝ վարչական կալանքի վերացմանը թե՛ պրակտիկայում և թե՛ օրենսդրության մեջ: Նախկինում դեռ երբեք դատական աստիճանի մեկ որոշումը այդ աստիճանի մեծ ազդեցություն չէր ունեցել ազգային իրավունքի զարգացման վրա: Նշված որոշումն ընդունելիս Վճռաբեկ դատարանը լայնորեն վկայակոչել է Եվրոպական դատարանի մի քանի նախադեպեր՝ դրանց տալով գերակայություն և ուղղակի կիրառություն: Այս որոշումից հետո Վճռաբեկ դատարանը սկսեց հետևողականորեն վկայակոչել Կոնվենցիայի դրույթները և Եվրոպական դատարանի նախադեպերը իր որոշումներում: Դա է պատճառը, որ հեղինակը գտնում է, որ հենց Սալարցոցյանի գործով սկսվեց Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ինստիտուցիոնալ մուտքը ՀՀ ներպետական իրավունք:

¹³ Նախարարների կոմիտեն Եվրոպայի խորհրդի որոշում կայացնող մարմինն է, որն իր բնույթով քաղաքական մարմին է: Այն կազմված է Կոնվենցիայի անդամ պետությունների արտաքին գործոց նախարարներից կամ դիվանագիտական կարգավիճակ ունեցող մշտական ներկայացուցիչներից: Նախարարների կոմիտեն ունի բազմաթիվ գործառնություններ, որոնցից մեկը Եվրոպական դատարանի որոշումների կատարման վերահսկողությունն է:

կոմիտեին (այսուհետ՝ ՆԿ) պարբերաբար տեղեկացնել վճռի կատարումն իրականացնելու ուղղությամբ իր կողմից ձեռարկվելիք միջոցների մասին: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանը նշում է, որ այդ պարտականությունը բխում է Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայից¹⁴, որի խորագրի երրորդ պարբերության և 26-րդ հոդվածի համաձայն, միջազգային պայմանագրի մասնակից պետությունները պարտավորություն են կրում պայմանագիրը կատարել բարեխղճորեն¹⁵: Այդուհանդերձ, դա չի նշանակում, որ վճռի կատարման հարցում ՆԿ-ն ունի վերահսկողության անսահմանափակ լիազորություն: Ինչպես նշվել է բազմիցս, ՆԿ-ի վերահսկողությունը «քայլում է ձեռք-ձեռքի տված» մասնակից պետության հետ, որտեղ մասնակից պետությունն ունի որոշակի հայեցողություն վճռի կատարման նպատակով միջոցների ընտրության հարցում: Սա բխում է Կոնվենցիայի սուբսիդիարության ընդհանուր սկզբունքից, ըստ որի Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորությունները կատարելու հարցում պատասխանող պետությունն ունի միջոցների ընտրության հարցում որոշակի ազատություն: Ավելին, միջոցների ընտրության հարցում պատասխանող պետությունն ունի առաջնահերթություն, որն հստակորեն արտահայտվում է նաև ՆԿ-ի ընթացակարգերում, բազմաթիվ կանոնակարգերում և փաստաթղթերում. նախ պատասխանող պետությունն է որոշում, թե ինչպիսի միջոցներ են անհրաժեշտ կիրառել տվյալ գործով վճռի կատարման համար, իսկ ՆԿ-ն, վերահսկելով դրանց կատարումը, կարող է արտահայտել իր համաձայնությունը կամ անհամաձայնությունը միջոցի ընտրության հարցում:

ՆԿ-ն իր վերահսկողության շրջանակներում նպատակ է հետապնդում, որպեսզի վերականգնվի և՛ տվյալ անձի խախտված իրավունքները, և՛

¹⁴ Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ է մտել 2005թ. հունիսի 16-ին:

¹⁵ Verein GegenTierfabriken Schweiz (VgT) ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի (2) (ՄՊ), վկայակոչված վերևում, պարբ. 87: Այսուհետ համառոտ՝ Verein-ի գործով վճիռ:

լուծվեն համակարգային խնդիրները: Այս նպատակով ՆԿ-ն պահանջում է կիրառել անհատական և ընդհանուր բնույթի միջոցներ:

Անհատական բնույթի միջոցներ

Որպես կանոն, արդարացի փոխհատուցման նվազագույն եղանակը խախտված իրավունքի ճանաչումն է: Հաճախ Եվրոպական դատարանը հենց սրանով էլ բավարարվում է՝ նշելով, որ իր վճիռը և դրանում Կոնվենցիայի խախտման ճանաչման փաստն ինքնին հանդիսանում են բավարար արդարացի փոխհատուցում դիմումատուի կրած ոչ նյութական վնասի համար¹⁶: Ավելի հաճախ, ելնելով խախտման բնույթից և դրա՝ դիմումատուի վրա թողած ազդեցությունից (օրինակ՝ ֆիզիկական սուր ցավ, հոգեկան տառապանք, հիասթափություն, անելանելիության և անորոշության զգացում, նվաստացում, առողջության կորուստ, հեղինակության կամ գործարար համբավի կորուստ, ընկերության կառավարման խարխլում և այլն), Եվրոպական դատարանը ոչ նյութական (բարոյական) վնասի դիմաց սահմանում է դրամական փոխհատուցում՝ նշելով, որ նման բացասական ազդեցությունների դիմաց չի կարող բավարար կերպով արդարացի փոխհատուցել սոսկ խախտման փաստի ճանաչումով¹⁷:

Առավել կարևորություն ունի այնպիսի անհատական միջոցի կիրառումը, որը կնպաստի խախտված իրավունքի վերականգնմանը *restitutio in integrum*¹⁸ սկզբունքի հիման վրա, որի բնորոշումը տրվել է Նախարարների կոմիտեի թիվ R (2000) 2 հանձնարարականում, ըստ որի, ի լրումն նշանակված արդարացի փոխհատուցման և/կամ ընդհանուր բնույթի միջոցառումների, անհրաժեշտ է կիրառել այնպիսի միջոցներ, որպեսզի

¹⁶ Արման Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 6562/03, 11/01/2007թ., պարբ. 49:

¹⁷ «Մելտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 32283/04, 17/06/2008թ., էջ 31, պարբ. 7:

¹⁸ Լատինական արտահայտություն է, որը նշանակում է «վերականգնել նախնական իրավիճակում»: Ընդհանուր իրավունքի համակարգից բխող սկզբունք է, որը կիրառվում էր անզգուշորեն հասցրած վնասի փոխհատուցման հիմքով դատական վարույթներում:

տուժող կողմը հնարավորինս վերադարձվի նույն իրավիճակի մեջ, որում նա գտնվել է նախքան Կոնվենցիայի խախտումը¹⁹:

Խախտված իրավունքը վերականգնելու անհատական միջոցի հարցում կենտրոնական տեղ է գրավում վարույթի վերաբացման կամ գործի վերաքննության հնարավորության ապահովումն ազգային դատարանի կողմից: Թիվ R (2000) 2 հանձնարարականը նվիրված է հենց այս միջոցին՝ որպես *restitution in integrum* սկզբունքի ապահովման «ամենաարդյունավետ, եթե ոչ միակ միջոցը»²⁰:

Վերաբացման կամ վերաքննության հնարավորությունը պետք է տրամադրվի ցանկացած դեպքում, եթե ազգային իրավական համակարգը տրամադրում է իրավական պաշտպանության նման հնարավորություն և մեխանիզմներ, հակառակ դեպքում *restitution in integrum* սկզբունքը կսահմանափակվի անթույլատրելիության աստիճանի, որից լրջորեն կտուժի Կոնվենցիայի և Եվրոպական դատարանի արդյունավետությունը, որպես իրավական պաշտպանության միջոց:

Ընդհանուր բնույթի միջոցներ

Ընդհանուր բնույթի միջոցների կիրառումը նպատակ է հետապնդում ներպետական օրենսդրության մեջ և պրակտիկայում լուծել այնպիսի համակարգային խնդիրներ, որոնց առկայության պայմաններում նմանատիպ գործերի հոսքը Եվրոպական դատարան չի դադարում²¹: Այլ կերպ ասած, ընդհանուր բնույթի միջոցների նպատակն է, որպեսզի տվյալ գործով բարձրացված խախտումներն այլևս չկրկնվեն տվյալ պետությունում: Որպես կանոն, ընդհանուր բնույթի միջոցներն ուղղված են կոնկրետ

¹⁹ Թիվ R (2000) 2 հանձնարարականը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կայացված վճիռների հիման վրա ներպետական մակարդակով որոշակի գործեր վերաքննելու կամ վերաբացելու մասին: Տե՛ս Հանձնարարականի նախաբանի 5-րդ պարբերությունը:

²⁰ Հանձնարարականի նախաբանի 7-րդ պարբերություն:

²¹ Սրանից էլ բխում է պիլոտային վճիռներ կայացնելու մարտավարությունը, որի նպատակն է մեկ վճռով համակարգային լուծում առաջարկել բազմաթիվ նմանատիպ գործերի համար, որոնք կամ արդեն ներկայացվել են Եվրոպական դատարան, կամ էլ ամենայն հավանականությամբ ներկայացվելու են, քանի որ տվյալ համակարգային խնդիրը պետության ներսում դեռ չի վերացել:

ուղորտներում օրենսդրական, ենթաօրենսդրական դաշտի կամ դատական պրակտիկայի բարելավմանը:

ՆԿ-ին այսօր առանձնապես հետաքրքրում է վճիռների կատարման համար ներպետական մակարդակով արդյունավետ մեխանիզմների առկայության մասին հարցը, հատկապես, եթե վճիռը մատնանշում է պետության ներսում համակարգային խնդիրների առկայություն: Եվրոպական դատարանին անհանգստացնում է այն միտքը, որ որքան շատ է վճիռ կայացնում և արձանագրում կոնվենցիոն իրավունքների խախտում և ներպետական համակարգային խնդիրներ, այնքան ավելանում է դիմումների հոսքը դեպի Եվրոպական դատարան: Ընդ որում, բոլոր դիմումների 73 տոկոսը կազմում են կրկնվող գործերը, որոնցում Եվրոպական դատարանը ստիպված է եղել անդրադառնալ այնպիսի խնդիրների, որոնց արդեն անդրադարձել է նախկինում կայացված վճիռներում և որոնք, լինելով համակարգային խնդիրներ, զարկ են տալիս կրկնվող, նմանատիպ գանգատների, չեն վերացվել²²: Սա հիմք է տալիս կարծելու, որ պետություններն առավել հակված են կիրառելու անհատական, քան թե ընդհանուր բնույթի միջոցները և որ հաճախ այնքան էլ շահագրգռված չեն վերացնելու այն համակարգային խնդիրները, որոնք զարկ են տալիս նույնանման գանգատների մեծ հոսքի Եվրոպական դատարան:

Նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը, իրավական հիմքերը և ընթացակարգերը ՀՀ-ում

Հայաստանի իրավական համակարգում համեմատաբար նոր ինստիտուտ է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը «նոր հանգամանքի» հիմքով: Իրավական համակարգ այն ներմուծվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 18.02.2004թ. ՀՕ-39-Ն և «Հայաստանի Հանրապետության քրեական

²² ԵԽԽՎ փաստաթուղթ թիվ 12370, կետ 2:



դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 18.01.2005թ. ՀՕ-57-Ն օրենքներով: Դատավարական օրենսգրքում իրավական այդ ինստիտուտը, դրա ներդրումից ի վեր, հինգ անգամ ենթարկվել է փոփոխությունների, որից երեքը՝ հիմնովին. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում՝ 15.03.2007թ. ՀՕ-98-Ն, 20.12.2007թ. ՀՕ-277-Ն, 29.12.2008թ. ՀՕ-233-Ն, 20.05.2010թ. ՀՕ-94-Ն, 08.11.2012թ. ՀՕ-269-Ն ՀՀ օրենքներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 20.06.2006թ. ՀՕ-91-Ն, 18.12.2007թ. ՀՕ-270-Ն, 29.12.2008թ. ՀՕ-237-Ն, 14.06.2010թ. ՀՕ-96-Ն, 08.11.2012թ. ՀՕ-270-Ն ՀՀ օրենքներով:

Նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայումը կարգավորող նորմերի դրույթներն առնվազն հինգ գործով դարձել են սահմանադրաիրավական վեճի կամ Սահմանադրական դատարանի իրավական գնահատականի առարկա: Մասնավորապես՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 11.05.2007թ. ՍԴՈ-701, 09.09.2008թ. ՍԴՈ-758, 23.02.2010թ. ՍԴՈ-866, 14.10.2008թ. ՍԴՈ-767, 13.10.2009թ. ՍԴՈ-833, 15.07.2011թ. ՍԴՈ-984 որոշումներում իրավական գնահատականներ է տվել նոր հանգամանքի ինստիտուտի իրավակարգավորող նորմերի դրույթներին կամ դրանք ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ իր որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում: Հայաստանում որպես «նոր հանգամանք» էր (դրա ներդրման պահին) դիտարկվում.

- 1) ՀՀ սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած որոշումը, որով ամբողջությամբ կամ մի մասով հակասահմանադրական է ճանաչվել այն օրենքը կամ իրավական այլ ակտը, որը կիրառել է դատարանը.
- 2) ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը, որով հիմնավորվել է անձի՝ ՀՀ միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի (իրավունքների) խախտման հանգամանքը:



ՀՀ Սահմանադրական դատարանի 15.07.2011թ ՍԴՈ-984 որոշմամբ և դատավարական օրենսգրքերում 08.11.2012թ ՀՕ-269-Ն և ՀՕ-270-Ն օրենքներով ներմուծվեց ևս մեկ հիմք՝ սահմանադրական դատարանը տվյալ գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Պարզունակ ձևակերպված՝ սահմանվեց երկու «նոր հանգամանք»՝ հակասահմանադրական նորմը և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտումը: Առաջինը կարող էր տեղի ունենալ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից իրավական ակտն ամբողջությամբ կամ դրա մի մասի հակասահմանադրական ճանաչելուց հետո՝ դրանց անվավեր դառնալու դեպքում, իսկ երկրորդը՝ անհատական գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում (որով ճանաչվել է իրավունքի խախտման փաստը): Փաստորեն, նոր հանգամանքը ճանաչվեց գործոն, որի առկայության պարագայում կարելի է «խախտել» իրավական կայունության տարր հանդիսացող դատական ակտերի կայունությունը: Միևնույն ժամանակ հավասարակշռությունն ապահովվեց ժամկետի սահմանումով՝ ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման պահանջ ներկայացնելու համար, այն է՝ համապատասխան հանգամանքներն առաջանալու օրվանից եռամսյա ժամկետ:

Միջազգային դատարան դիմելու իրավունքի երաշխիքը ՀՀ Սահմանադրության մեջ սահմանված է 18րդ հոդվածով, իսկ Կոնվենցիայում՝ 34-րդ հոդվածով:

Դատավարական օրենքները պետք է երաշխավորեն ու ապահովեն Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված միջազգային դատարան դիմելու Հայաստանի իրավագործության ներքո գտնվող մարդու իրավունքը:



Այս պահին գործող իրավակարգավորման համաձայն նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայելու լիազորություն ունի Վերաքննիչ դատարանը, իսկ Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ Վճռաբեկ դատարանը (Քաղ. դատ. օր. հ. 204.30 և Քր. դատ. օր. հ. 426.1):

Նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք է վերապահված գործին մասնակցող անձանց և նրանց իրավահաջորդներին և այն անձանց, ովքեր Հայաստանի մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից համապատասխան դատական ակտի կայացման պահին ունեցել են միջազգային պայմանագրի պահանջներին (ժամկետներին) համապատասխան միջազգային դատարան դիմելու իրավունք (Քաղ. դատ. օր. հ. 204.31 և Քր. դատ. օր. հ. 426.2), ինչպես նաև՝ գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ քրեական գործերով:

Այս նորմերով ընդլայնված է անձանց շրջանակը, ովքեր պոտենցիալ հնարավորություն ունեն դիմել դատարան՝ իրենց նկատմամբ ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու պահանջով: Վերանայման պահանջով դատարան կարող են դիմել նաև այն անձինք, ովքեր չեն հասցրել կամ չեն դիմել միջազգային դատարան, տվյալ դեպքում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, սակայն նրանք դարձել են Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման այնպիսի գոհ, ինչպիսին որ եղել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի դեմ գործը շահած այլ անձը: Այս սկզբունքը Հայաստանի իրավական համակարգ ներմուծվել է ՀՀ սահմանադրական դատարանի 13.10.2009թ. ՄԴՈ-833 որոշմամբ: Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա նոր հանգամանքով դատական ակտերը վերանայելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակն ընդլայնելը կոմպենսացնում է Եվրոպական դատարանի կողմից քննված գործերի թվի ցածր ցուցանիշը, ինչն ունակ է արագ տեմպերով զարգացնել ներպետական



իրավունքը և արագացնել ՀՀ Սահմանադրության նախաբանում ու 1ին հոդվածում արձանագրված նոր նպատակներին հասնելը:

Նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք բերելու ժամկետը սահմանափակված է. այն կարող է բերվել 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին: Եռամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է Հայաստանի մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումն այդ դատարանի կանոնակարգերով սահմանած կարգով այդ դատարան ղիմած անձին հանձնելու օրվանից (Քաղ. դատ. օր. հ. 204.34 և Քր. դատ. օր. հ. 426.4): Ի տարբերություն քրեական գործերի՝ քաղաքացիական գործերով այս ժամկետը բոլոր դեպքերում սահմանափակված է նաև քսան տարով:

Այս դրույթներով սահմանափակված ժամկետը վերաբերում է միայն միջազգային դատարան ղիմած անձին, սակայն ինչպես նշվեց, դատական ակտը վերանայելու պահանջով դատարան ղիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակն ավելի ընդգրկում է, իսկ քրեական գործերով՝ դրանց թվում են նաև գլխավոր դատախազը և նրա տեղակալները, որոնց միջազգային դատարանը չի ուղարկում իր դատական ակտի օրինակ: Ուստի, սահմանափակող ժամկետի հաշվարկի սկիզբը սահմանելու իրավակարգավորումը լրացուցիչ հստակեցման և ընդլայնման կարիք ունի: Բացի դրանից, միջազգային դատարանի դատական ակտը, որպես կանոն, կայացվում է ոչ հայերենով, իսկ դատավարական օրենքներով սահմանված է, որ փաստաթղթերը դատարաններ պետք է ներկայացվեն հայերեն պատշաճ թարգմանությամբ: Միջազգային դատարանի դատական ակտի թարգմանության պարտականությունը ղիմող սուբյեկտի վրա թողնելը անհամաչափ ծանրաբեռնվածություն կդնի անձի վրա, ինչը միջազգային դատարան ղիմելու իրավունքը կիմաստազրկի և կզրկի անձին դատարանի մատչելիության իրավունքից: Միննույն ժամանակ, Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սահմանված պետության պարտավորությունների մեջ է մտնում



Եվրոպական դատարանի դատական ակտերի մայրենի լեզվով թարգմանությունն ու հրապարակումը (տես՝ Նախարարների կոմիտեի «Կոնվենցիայի և Դատարանի դատական նախադեպի հրապարակման և տարածման մասին» թիվ Rec(2002)13 հանձնարարականը), հետևաբար առկա է այս խնդրի կարգավորման իրավական բաց:

Վերանայման պահանջի մասին դատարաններ ուղղված անձանց բողոքը, ի թիվս այլոց, պետք է համապատասխանի դատավարական օրենքով նախատեսված վավերապայմաններին կամ ձևական պահանջներին՝ լինի գրավոր, պետք է պարունակի այն դատարանի անվանումը, որին բողոքը հասցեագրվում է, վերանայման ենթակա դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, դատական ակտի վերանայման համար հիմք դարձած նոր հանգամանքի շարադրանքը, բողոքով ներկայացվող պահանջը՝ ըստ համապատասխան նոր հանգամանքի, բողոք ներկայացրած անձի անունը, ազգանունը (անվանումը), բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

Այս վավերապայմանների մեջ ուշագրավ է այն, որ բողոքի պահանջը պետք է համապատասխանի՝ բխի նոր հանգամանքից: Սա նշանակում է, որ նոր հանգամանքով դատական ակտը վերանայելու դիմումի (բողոքի) առարկան՝ պահանջը, հավանական է, որ տարբերվի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի համար հիմք հանդիսացած դիմումի (հայցի, բողոքի) առարկայից՝ պահանջից: Այս հանգամանքը պայմանավորված է թե՛ Եվրոպական դատարանի, թե՛ Սահմանադրական դատարանի կողմից գործն ի պաշտոնե քննելու լիազորություններով: Բացի դրանից, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման փաստի ճանաչումն առաջին հերթին պետության պարտավորությունն է, ուստի և Եվրոպական դատարանի կողմից իրավունքի խախտման փաստի ճանաչումն առնվազն ենթադրում է վերանայման բողոքում՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման փաստի ճանաչման պահանջ և դրանից ածանցվող այլ պահանջներ:



Վերոգրյալ սկզբունքը տեղ չի գտել Քրեական դատավարության օրենսգրքում, ինչն ըստ մեզ, չի ապահովում միջազգային դատարանների և Սահմանադրական դատարանի դատական ակտերի կատարման պետության երաշխավորված պարտականությունը:

Քրեական դատավարության կարգով ներկայացված վերանայման պահանջի մասին բողոքը պետք է, ի տարբերություն քաղաքացիական դատավարության կարգով ներկայացրածի, պարունակի բողոք ներկայացրած անձի պաշտոնը, ապացույց այն մասին, որ բողոքի պատճենը, նոր հանգամանքը հաստատող նյութերի պատճենների հետ պատշաճորեն ուղարկվել են դատավարության մասնակիցներին (բացառությամբ քննիչի և հետաքննության մարմնի):

Դիմումին ներկայացվող թվարկված ձևական պահանջների և վավերապայմանների առկայության դեպքում դատարանը՝ քաղաքացիական գործերով ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, որոշում է կայացնում դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին (Քաղ. դատ. օր. հ. 204.37, մ. 1): Բացի դրանից, օրենքը սպառիչ կերպով թվարկել է այն նախապայմանները, որոնց առկայության դեպքում դատական ակտի վերանայման վերաբերյալ բողոքը կարող է մերժվել: Դրանք են՝ բողոքում նշված դատական ակտը չի կայացրել այն դատարանը, որին հասցեագրվել է բողոքը, բողոքը ներկայացվել է դրա համար օրենսգրքով նախատեսված ժամկետի խախտմամբ, և բողոք ներկայացրած անձը միջնորդություն չի ներկայացրել դա վերականգնելու մասին, դատական ակտը վերանայելու համար հիմք դարձած նոր հանգամանքը հաստատող ապացույց չի ներկայացվել, և դատարանը լրացուցիչ պարզել է, որ այդպիսի հանգամանք չկա: Վերջին նախապայմանը դատարանի կողմից ապահովվելը հնարավոր է միայն, եթե պետությունը պաշտոնապես հրապարակի միջազգային դատարանի դատական ակտի պաշտոնական թարգմանությունը:



Քրեական դատավարությունում, ի տարբերություն քաղաքացիականի, դատարանը դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու կամ մերժելու մասին որոշում կայացնում է տասնօրյա ժամկետում (Քր. դատ. օր. հ. 426.8, մ. 3): Այլ էական տարբերություններ այս երկու վարույթները չունեն: ՀՀ Սահմանադրական դատարանի 15.07.2011թ ՄԴՈ-984 որոշումից և դատավարական օրենսգրքերում 08.11.2012թ ՀՕ-269-Ն և ՀՕ-270-Ն օրենքներով կատարված փոփոխություններից հետո գործի վերանայման իրավասությամբ օժտված դատարանը լիազորված է միայն բեկանել նախկին դատական ակտը, սակայն դատարանին հնարավորություն է տրված նաև «չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 204.32 կամ 204.33 հոդվածով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա» (Քաղ. դատ. օր. հ. 204.38, մ. 2, Քր. դատ. օր. հ. 426.9, մ 2):

Կոնվենցիայի խախտումը չբացահայտած և հակասահմանադրական օրենքի դրույթի վրա հենված դատական ակտերի եզրափակիչ մասերը չփոփոխելու լիազորություն նախատեսող իրավակարգավորումը հնարավորություն է ստեղծում չկատարել Եվրոպական դատարանի վճիռը, չճանաչել Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման փաստը, իսկ իրավունքի խախտման փաստի ճանաչում հնարավոր է միայն դատական ակտի բեկանելու և նոր հանգամանքին համապատասխան ներկայացված պահանջով բողոքի բավարարման դեպքում: **Դատավարական օրենսգրքերում 08.11.2012թ ՀՕ-269-Ն և ՀՕ-270-Ն օրենքներով կատարված փոփոխությունները**, մասնավորապես՝ Քաղ. դատ. օր. հ. 204.38, մ. 2 և Քր. դատ. օր. հ. 426.9, մ 2 տրված վերոգրյալ իրավակարգավորումները, հակասում են ՀՀ Սահմանադրական դատարանի 15.04.2008թ. ՄԴՈ-751, 09.09.2008թ. ՄԴՈ-758, 23.02.2010թ., և հատկապես՝ ՄԴՈ-866 15.07.2011թ ՄԴՈ-984 որոշումներին, հետևաբար՝ ՀՀ Սահմանադրությանը և Կոնվենցիային:



Եվրոպական դատարան ներկայացված գանգատների, կայացված վճիռների վերաբերյալ ստատիստիկական որոշ տվյալներ

Հայաստանի նկատմամբ Եվրոպական դատարանի իրավագործության հաստատման պահից՝ 26.04.2022թ, մինչև 2011 թվականի հունվարի 1-ը, Դատարանում առկա է եղել 923 գանգատ՝ որոնց ընդունելիության հարցի լուծմանը դեռևս դատական կազմերը չեն անդրադարձել: Այդ նույն ժամանակահատվածում կայացված է եղել անընդունելիության մասին 474 որոշում:

2002 թվականից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Եվրոպական դատարանը Հայաստանի մասնակցությամբ կայացրել է 30 վճիռ: Կից ներկայացված հավելված-աղյուսակում արտացոլված են Եվրոպական դատարան մուտքագրված գանգատների, կայացված վճիռների բաշխվածությունն ըստ տարիների. Համեմատության համար բերված են նաև Վրաստանի և Ադրբեջանի վերաբերյալ նույն տվյալները:

(Տես՝ կից ներկայացված աղյուսակը)²³

Հայաստանի կողմից Եվրոպական դատարանի վճիռների կատարման ընթացքի գնահատականը և եզրակացությունը

Վերը նկարագրվեց այն իրավական դաշտը, որը կարգավորում է Եվրոպական դատարանի վճիռների կատարման իրավահարաբերությունները: Կից ներկայացված հավելված-աղյուսակում արտացոլված են Հայաստանի կողմից Եվրոպական դատարանի վճիռների կատարման վերաբերյալ մեր գնահատականը՝ ըստ գործող օրենսդրության:

(Տես՝ կից ներկայացված աղյուսակը)²⁴

²³ <http://hahr.am/files/grid1.pdf>

²⁴ <http://hahr.am/files/grid2.pdf>



Հայաստանի մասնակցությամբ գործերից մի մասով, ինչպես նաև բազմաթիվ նույնանման գործերով, որոնք Եվրոպական դատարանի կողմից մերժվել են միայն գանգատ ներկայացվելու ժամկետի բացթողնման պատճառով, ներպետական ատյաններում իրավունքի խախտումների գոհերի ներկայացուցիչները ակտիվորեն վկայակոչել են Կոնվենցիան և Եվրոպական դատարանի լավ ձևավորված նախադեպային իրավունքը, սակայն դրանք չեն կիրառվել ու հանգեցրել են Հայաստանի կողմից Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման փաստի արձանագրման:

Հաշվի առնելով Եվրոպական դատարանի վճիռների կատարման ոչ բավարար վիճակը՝ անհրաժեշտություն է առաջանում իրականացնել գործող օրենսդրության շարունակական կատարելագործում և դրանց համապատասխանեցումը Հայաստանի մասնակցությամբ միջազգային կազմակերպությունների հանձնարարականների պահանջներին, իրականացնել կրթական ծրագրեր, բացահայտել և վերացնել այն տեսանելի և անտեսանելի պատճառները, որոնք խոչընդոտում են Եվրոպական դատարանի վճիռների լիարժեք կատարմանը՝ պայմաններ ստեղծելով անձի խախտված կոնվենցիոն իրավունքների և օրինական շահերի վերականգնման համար:

Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական դատարանի վճիռների կատարման ընթացքի ուսումնասիրության արդյունքում կարելի է հանգել հետևության, որ

- բոլոր գործերով իրավունքի խախտման գոհին վճարվել է վճռով սահմանված արդարացի փոխհատուցման գումարները, սակայն՝ վճռով սահմանված ժամկետի ավարտին մոտ. գումարները հատկացվել են ՀՀ կառավարության որոշմամբ՝ Կառավարության պահուստային ֆոնդից,
- որոշ գործերով Եվրոպական դատարանի վճիռները չեն թարգմանվել և չեն հրապարակվել,



- գրեթե բոլոր գործերով իրականացվել են Նախարարների կոմիտեի կողմից սահմանված ընդհանուր միջոցները,
- իրավունքի խախտման գոհերից քչերն են (30 գործերից 5-ը), որ նոր հանգամանքով ներպետական դատական ակտերի վերանայման պահանջ են ներկայացրել դատարան,
- միայն մեկ հոգի է՝ չհանդիսանալով Եվրոպական դատարանի վճռի կողմ՝ նոր հանգամանքով ներպետական դատական ակտերի վերանայման պահանջ ներկայացրել դատարան,
- այն գործերով, որոնց դեպքում իրավունքի խախտման գոհերը նոր հանգամանքով ներպետական դատական ակտերի վերանայման պահանջ են ներկայացրել դատարաններ, վերանայման վարույթ հարուցելու մասին որոշումները, բոլոր դեպքերում, կայացվել են դատավարական օրենսգրքերով սահմանված ժամկետներից շատ ավելի ուշ,
- այն գործերով, որոնց դեպքում իրավունքի խախտման գոհերը նոր հանգամանքով ներպետական դատական ակտերի վերանայման պահանջ են ներկայացրել դատարաններ՝ գործերից մի մասի դեպքում դատական ակտերի վերանայում իրականացվել է, սակայն, **որևէ դեպքում նախկին դատական ակտով խնդրին տրված լուծումից տարբերվող լուծում չի տրվել՝ գործի ելքը չի փոխվել,**
- որևէ գործով վճռի պաշտոնական հրապարակումը չի համընկել նոր հանգամանքով դատական ակտի վերանայման համար սահմանված ժամկետի միջակայքի հետ,
- որևէ գործով ռեգրեսիվ հայց չի ներկայացվել Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման պատճառով պետական բյուջեից դրամական միջոցների վատնման համար,
- որևէ քրեական գործով գլխավոր դատախազը նոր հանգամանքով դատական ակտի վերանայման պահանջով չի դիմել դատարան՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտմամբ դատապարտված անձի իրավունքները վերականգնելու նպատակով,



- ՀՀ «Քաղաքացիական դատավարության» օրենսգրքի 204.38-րդ հոդվածի, 2-րդ մասի և ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 426.9-րդ հոդվածի, 2-րդ մասի իրավակարգավորումները, **հակասում են ՀՀ Սահմանադրական դատարանի 15.04.2008թ. ՍԴՈ-751, 09.09.2008թ. ՍԴՈ-758, 23.02.2010թ., և հատկապես՝ ՍԴՈ-866 15.07.2011թ ՍԴՈ-984 որոշումներին, հետևաբար՝ ՀՀ Սահմանադրությանը և Կոնվենցիային,**

- Կոնվենցիայի 14-րդ արձանագրությունը ուժի մեջ մտնելուց և, այսպես կոչված, բարեփոխումներ իրականացնելուց հետո, այսրկովկասյան երկրների, այդ թվում՝ Հայաստանի մասնակցությամբ գործերով Եվրոպական դատարանի վճիռների քանակը չի ավելացել,

- այսրկովկասյան երկրներից, այդ թվում՝ Հայաստանից, բնակչություն-գանգատ հարաբերակցությունը միտում ունի փոքրանալու՝ մարդու իրավունքների խախտումների մակարդակի աճի կամ, նվազագույնը, պահպանման պայմաններում, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է Եվրոպական դատարանի և Եվրոպական իրավական արժեհամակարգի հեղինակության անկմամբ:

Արտակ Զեյնալյան

ք. Երևան, 07.01.2012թ.